

Հայկական գիտահետազոտական հանգույց  
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.


պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

3-2474



Am-487

**ԻՆՉՊԵՍ** ԲԱԶՄԱՑՆԵԼ ՅԵՎ ԼԱՎԱՑՆԵԼ  
ՄՍԱՏՈՒ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻՆ  
ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԿՈՎԿԱՍՈՒՄ

636  
2-67



*[Handwritten signature]*

2-67

Արմ.

3-2474a

Ա. Վ. ՌՈՂԱՅԵԱՆ

ԻՆՉՊԵՍ ԲՍՉՄԱՑՆԵԼ ՑԵՎ ԼԱՎԱՑՆԵԼ  
ՄՍԱՏՈՒ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻՆ  
ՀՅՈՒՄԻՍԱՑԻՆ ԿՈՎԿԱՍՈՒՄ

Լ. Բ. Ե ՊԻՐ  
Լ. 1933 Դ.  
ԱՌՆ. № 195

ԱՆԱՆԱՐՈՒԹՅԱՆ ՆՅԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Անանարուծությունը ԽՍՀՄ-ի ժողովրդական տնտեսության ամենակարևոր ճյուղերից մեկն է և նա մեզ ապիս է վոչ միայն արժեքախոր անդամթերքներ (միս, ճարպ, յուղ, կաթ և այլն), այլ և արդյունարեքությանն անհրաժեշտ հումույթ—կաշի, բուրդ, ճարպանյութեր և այլն:

Գուղատնտեսության մեջ անանարուծությունն հսկայական նշանակություն ունի: Ոչտազործելով դաշտարուծության ավելորդությունները (կարգ, մղեղ, յեղիպացորենի ցողուններ, արևածաղկի դիխիկները և այլ ավելորդ մասերը), անանարուծությունը խոշոր յեկամուտն է և տալիս տնտեսության:

Սոցիալիստական շինարարության հաջող ընթացքը մեծամեծ սլահանջներ է առաջադրում անանարուծության: Ավելանում է կառուցվող ֆարրիկների ու գործարանների համար անհրաժեշտ անասնարուծական հումույթի պահանջը, ավելանում է անանարուծական անդամթերքների պահանջը թե բանվորական նոր կենտրոնների և թե քաղաքի և գյուղի աշխատավորական լայն մասսանների կողմից:

Չնայելով այն մեծ նվաճումներին, վոր մենք ունենք անանարուծական խորհրդային տնտեսությունների շինարարության, անասնարուծական ապրանքային ֆերմաների կազմակերպման և կոլտնտեսային անասունների համայնացման ապարիզում, — անանարուծությունն իր զրությամբ և արդյունավետությամբ դեռ ևս ժողտնտեսության յետամնաց ճյուղ է: Անանարուծության յետամնացությունն անցյալում նախ և առաջ բացատրվում է նրանով, վոր մեզանում գոյություն ունեն անհատական ցաք ու ցրիվ տնտեսությունը: Դյուղացիական մանր անանարուծությունն յեղել է և կա վորպէս գուտ

ՀԻՅ. № 22191



Այս կերպ վճարով անասնաբուծութեան հարցերը, անհրաժեշտ և միանգամայն վորոշակի ասել, վոր կոլտնտեսային ապրանքային ֆերմաների կազմակերպումը մագաչափ անգամ չի վերացնում բոլոր կուսակցական, խորհրդային և կոլտնտեսային կազմակերպությունների պատասխանատվությունը կոլտնտեսականների անհատական, սպառողական անասնաբուծական տնտեսության հետագա զարգացման համար:

Հիմնական 1932 թվականի մարտի 26-ի վորոշումը, բոլորովին պարզ և վորոշակի մասնանշում է, թե սյուսակցություն խորհրդից և կայանում, վոր յուրաքանչյուր կայանում ունենա իր կովը, մանր անասունները, բաշտները և վոր կոլտնտեսականների կովերն ու մանր անասունները ստիպողաբար համայնացնելու վորոշումը վոչինչ ընդհանուր չունեն կուսակցության քաղաքականություն հետո:

Մասնանշելով, վոր անհրաժեշտ և վճարական պայքար մղել կուտնտեսականների կովերն ու անասուններն ստիպողաբար կամայնացնելու ամեն տեսակ վորոշների դեմ, կենտկոմն առաջարկում է՝ շիպակներով ոգևորյուն յեվ աջակցություն կով յեվ մանր անասուններ չունենցող կայաններին՝ սեփական կարիքների համար մատուցելու անասուններ գնելու յեվ մեծացնելու յեվ կոնկրետ միջոցներ ձեռք առնել կովերին յեվ մատուցելու ին կերով ապահովելու համար—վորոշումը ամեն ոգևորմամբ է կայանացնելու:

Չպետք է մոռանալ, վոր գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման, խոնհատնտեսությունների շինարարության, սոցիալիստական անասնաբուծության ասպարիզում կուսակցության և կուտնտեսության միջոցառումները հանդիպում են ԽՍՀՄ կապիտալիստական դասակարգի մնացորդների—կուլակության կատարի դիմադրության: Կուլակությունը, դիշակերի նման վոչնչացնելով իր անասունները, չարամիտ ագիտացիա յեր մղում հետամնաց կոլտնտեսականների մեջ՝ անասունները մորթելու և ծախելու համար: Դասակարգային թշնամու աղբյուրի չարագործության հետևանքով՝ 1929 և 1930 թվականին մեր յերկրամասում խիստ պակասեց անասունների թիվը: Վերջին յերկու տարիներում, սակայն, բավական ավելացավ անասունների քանակը:

Կազմակերպելով անասնաբուծական խորհատնտեսություններ, ապրանքային ֆերմաներ և կոլտնտեսություններում համայնացված հոտեր և վերջապես, լիակատար ոգնություն և աջակցություն ցույց տալով կոլտնտեսականներին՝ սեփական ոգտագործման անասնաբուծության զարգացման համար, մտիկ տարիներս կվերացնենք անասնաբուծության յետամնացություններն, այնպես, վոր՝

Շերկորդ հնգամյակում ամասունների թիվը յեվ տարեկան արտադրանքն ավելանա այնքան, վոր հիմնականում համապատասխանի ԽՍՀՄ անասնաբուծական խնդրի յուրման, ինչպես կուտակցությունն այդ հաջողեցրեց առաջին հնգամյակում, հացահատիցային խնդրի վերաբերյալ: (Համամիութենական 17-րդ կուսկոնգրեսի վորոշումներից):

### ՄԱՍՆԻ ԱՆԱՍՆԱԲՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ ԳՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԿՈՎԿԱՍՈՒՄ

Մեր յերկրամասում անասնաբուծության վերելքի և սոցիալիստական վերակառուցման հիմնական խնդիրներից մեկը հանդիսանում է մատու և մասկաթնատու անասնաբուծության զարգացումը: Հյուսիսային կովկասը միշտ յեղել և գլխաւոր վայրերից մեկը, վորը մասմիերքներ և մատակարարել մայրաքաղաքներին և գլխավորապես Գոնի անխային ուսյուններին: Շերկորդ հնգամյակում խոշոր չափով զարգանալու յե ծանր արդյունաբերությունը և անհրաժեշտ յե բանավոր դասակարգը, ուստի և ավելի կարճրանա Հյուսիսային կովկասի նշանակությունը, իբրև Միութեան մասնատակարար ուսյուններից մեկի, մանավանդ վոր մեր յերկրամասում մեծ հնարավորություններ կան մատու և կաթնա-մատու անասնաբուծության զարգացման համար:

Շերկումասի ամենաչորային—արևելյան գոտին, վորի մեջ մրտնում են Ռեմոնտնենի, Զախտինսկու, Վենոդելենսկու, Կարմիկական և Թուրքմենական ուսյունները և Զիմովնիկովի, Պրոլետարական, Պրիկուսկու և Բլազդարնենի ուսյունների արևելյան մասերը, կառնա կուսակի և Բլազդարնենի ուսյունների արևելյան շրջաններ: Մասնատու անասնաբուծության զարգացման հիմնական շրջաններ: Մասնատու անասնաբուծությունը, վոր այնքան մեծ նշանակություն ունի մասմիերքներ արտադրելու համար, մեծ չափով կզարգանա նաև Գոնի մասմիերքներ արտադրելու համար, մեծ չափով կզարգանա նաև Գոնի-Գոնայան, Վեչենի, Ուրիվեչի, Մարոդովյան, Կոնստանտինովյան, Վերին-Գոնայան, Միմովյանսկի չորային ուսյուններում, Պրոլետարական, Ռոմանովյան, Յիմովյանսկի չորային ուսյուններում, Մեդվեժինսկի, Բլազդարնենի ուսյունների արևմտյան վայրերում, Մեդվեժինսկի, Բլազդարնենի ուսյունների արևելյան մասերում, ինչպես նաև Վերին—Տիշենսկի ուսյունների արևելյան մասերում, Վարանցով—Նոդելենսկու, Պարոլսկու, Բլազդարնենի, Պրիկուսկու, Վարանցով—Սլեքսանդրովյան ուսյունների արևմտյան մասերում և վերջապես, մասնատու Պրոլետարականսկի, Գյորգիենսկի, Ալեքսանդրովսկի, Սալովրովսկի և Կարսավսկի ուսյուններում:

Այդ ուսյունների հիմնական նպատակը պիտի լինի արտադրելու հասունացող սավորի միս: Առաջին գոտուն պետք է բարելավվեն ու զարգացվեն կարմիկական անասուններն, ինչպես և արտասանվեն ու զարգացվեն կարմիկական տեսակները: Շերկորդ գոտում անասնայան մատու անասունների տեսակները: Շերկորդ գոտում անասունների հիմնական տեսակը պիտի լինի կարմիկականը, իսկ մեծ

հատուկ կաթնավետ ցեղերի հետ, անասունների անուսն արագացնելու և կաթնատվությունը բարձրացնելու համար:

Արդեն այժմ այդ ուսյուններում կենտրոնացած են Վկոտովոյ արեւոտի խոշոր, մազաթմական խորհունտեսությունները, մազաթմակա և մաւ-կաթնագործական ֆերմաները: Թե վորքան մեծ են այդ ուսյունների հնարավորությունները մասաու և մաւ-կաթնատու յեղ-լյուրավոր անասունների անեցման համար, այդ յերեւում է յերկրորդ հեզամյակի պլանի հետեյալ նախնական նշումներէջ.—

Հիշյալ ուսյուններում խոշոր յեղլյուրավոր անասուններն թիվը վոր 1932 թվականի հոկտեմբերի 1-ին 806,675 եր, 1937 թվականի վերջին կլինի 1,108,040 դուլս, այսինքն մոտ մեկ ու կես անգամ ավելի: Անասունների թվի ավելացման հետ խոշոր չափով կավելանա նաև այդ ուսյունների մսի քանակությունը: 1937 թվականի վերջում կստացվի 67,836 տոնն միս, վոր համարյա թե հավասար է 1931 թր-վականին խոշոր յեղլյուրավոր անասուններից ստացված ամբողջ մսին (68,600 տոնն),

Այդ ուսյուններում կան մեծ տարածությամբ արոտատեղիներ և խոտհարքներ:

Վերջիններս կարելի յե բարելավել վստողւմով, ցանովի խոտերը ցանքաշրջանառության մեջ մտցնելով:

Չմեռն ուստեղ համեմատաբար կարճ է և անասուններին կարելի յե արածեցնել յերկար ժամանակ:

Այս բոլորը հիմնալի կերպով նպաստում է անասնաբուծության զարգացման, հնարավորություն է տալիս մեծ քանակությամբ եծան և լավ միս ստանալ:

Մասաու և մաւ-կաթնատու անասնաբուծության առաջին և հիմնական խնդիրն է՝

Բարելավել և ավելացնել տեղական անասունների մթերատվությունը.—

Մյնպես անել վոր այդ անասուններն արագ աճեն, միևնույն ժամանակ պահպանելով նրանց դրական հատկությունները, այսինքն նրանց դիմացկունությունը հիվանդությունների դեմ և ընդունակությունը՝ դիմանալու թե ամառվա շոգին և թե ձմեռվա սրտին:

Մեր տնտեսական պայմանները, մեր յերկրամասում բազմանալու ընդունակ անասունների քանակությունը միանգամայն բավական են նրա համար, վորպեսզի զարդանա բարելավված, արագ աճող, մասաու, խոշոր յեղլյուրավոր անասունների բուծումը և վորոքսով լայն չափով և բարձր վորակի տալարի միս ստացվի:

Ներկայումս հիշյալ ուսյունների անասունների վորակը շատ անբավարար է թե նրանց զիջային հատկությունների և թե մթերատվու-

թյան տեսակետից, ինչ է սրա պատճառը: Այն, վոր գոյություն են աճեցնել գյուղացիական մանր-մուկը, ցած ու ցրիվ անկատական տնտեսություններ:

Անասնաբուծական տնտեսության օոցիտիստական վերակառուցումը ստեղծում է բոլոր պայմանները՝ կերի ուժեղ բազա կազմակերպելու, անասունների կանոնավոր անեցման հիմունքները կիրառելու, անասուններին կերակրելու, պահելու, նրանց ցեղը բարելավելու համար:

Հորի երե կանոնավոր պահելուց և մեծացնելուց միշտ լավ հետեվանքներ ու ստացվում՝ մասովությունը բարելավելու և անասունների աճն արագացնելու տեսակետից: Վատ պահած ու մեծացրած հորթերը վատ ել աճում և այդպես մեռն են իրենց ամբողջ կյանքում:

Կիրառելով անասունների ցեղը բարելավելու միջոցառումները, կազմակերպելով հորթերի կանոնավոր անեցումն և ընդհանրապես անասուններին պահելու գործը, միևնույն ժամանակ մենք ունենք բոլոր հնարավորություններ՝ յերկրամասում խոշոր չափով ավելացնելու մսի պաշարը—նույն իսկ անասունների այն քանակով, վոր մենք ունենք այժմ: Դրա համար ամենից առաջ անհրաժեշտ է վերջ տալ հորթերի և մեծ անասունների վայրիվերտ մորթուսման: Հենց միմիայն այս միջոցառումը կիրառելով, մենք մսի քանակը կավելացնենք 20 տոկոսով: Մա նշանակում է, վոր մեկ հորթի կլիտը կասցենելով միջև 2 ցենտների, կպահպանվի 12—16 հորթերի կյանքը: Բարելավելով հորթերի կերակրումը, մենք մեր մսի պաշարները կավելացնենք մոլղական, քան 20 տոկոսով, կամ թե դրանով կպահպանենք մորթվելը խոշոր անասունների 1/6 մասը:

Բացի դրանից, մի շարք գոտեխնիկական միջոցներ կիրառելու (որինակ, քեղմեւորում արտաստեմանյան շուտ աճող ցեղերի ցուլերի միջոցով և այլն), արդեն մոտակա 1—2 տարում մենք դրական արդյունքներ կստանանք անասունների ցեղի բարելավման գործում:

Սակայն չպետք է մոռանալ, վոր այդ բոլոր միջոցառումները իրենց նպատակին կհասնեն միայն զլիավոր և հիմնական հարթի լուծման ճանապարհով—կերի ուժեղ բազա սեղծելով: Առանց դրան բոլոր գոտեխնիկական միջոցառումները չեն կարող մի վորակ շոշափելի արդյունք տալ:

Մեր ժողովրդական տնտեսության օոցիտիստական շինարարության տեմպերը պահանջում են վճռականապես փոխել անասնաբուծության նախկին ձևերը: Բուժել դանդաղ աճող անասունների ցեղեր, վորոնք դրա համար պահանջում են 5—6 տարի, ձեռնառու չե և այդպիսով վոր մի կերպ չեն բավարարվի մեր ժողովրդական տնտեսու-

թյան պահանջները: Մեր խնդիրը նրանումն է կայանում, վոր վերահիշյալ ժամանակաժողովը կրճատենք մինչև 2, ամենաշատը 3 տարի 26-ի վոր սիկնույն չի 2,5 ցենտներ միս տվող անասնին մեծացնել 5 կամ 2-3 տարուս:

Անասունը, դա մի յուրահատուկ ֆաբրիկա չի, վորը կերը վերանշակում է մսի, կաթի, յուղեղենի և այլն: Խոշոր յեղջուրավոր անասնի մեկ կիլոգրամ կենդանի կշիռ ստանալու համար հարկավոր է 12-13 կիլոգրամ չոր կեր: Այդքան կերն ամենամեծնուտու և ամենաարդյունավետ կերպով ծախսելու համար, անհրաժեշտ է կրճատել ժամանակը, չձգձգել այն, իսկ դրա համար հարկավոր է զիտենալ անասուններին կանոնավոր կերակրելու գործը:

Այդ բոլորը միանգամայն հնարավոր և իրագործելի չի միայն այժմ, յերբ պլանային տնտեսութեան սիստեմը պրոդուկտիվ և պետութեանը հնարավորութեան է տալիս արագորեն բարձրացնել արտադրական ուժերը ժողովրդական տնտեսութեան բոլոր բնագավառներում, ուրեմն նաև մասսու անասնաբուծութեան մեջ:

### ՄՍԱՆՈՒ ԱՆԱՆԱՐՈՒԾՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՅՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ

Այդ բոլոր հարցերի լուծումը հնարավոր է, ինչպես մենք արդեն շեշտեցինք, միայն մասսու անասնաբուծութեան սոցիալիստական վերակառուցման ճանապարհով: Ենթերիվ հնգամյակի յերրորդ, վճռական տարվա, — 1931 թվականի հաշուութեաններին, յերբ մեր յերկրամասում լուծվեց պատճառական մեծ նշանակութուն ունեցող մի խնդիր, — համատարած կոլեկտիվացման ավարտումը հիմնականում և նրա հիմունքով կուլակութեան վորպես դասակարգի վերացումը, վերջապես, հացահատիկային խնդրի լուծումը՝ խորհրդանտեսութեաններին, մեքտատրակտորային կայանների և կոլտնտեսութեաններին հիմունքով, — շնորհիվ այս ամենի, ստեղծվեցին պայմաններ անասնաբուծութեան, մասնավորապես մասսու և մսակաթնատու անասնաբուծութեան հաշու գարգացման համար:

Ինչպես մենք գիտենք, կուլակցութեան 16-րդ համագումարը շեշտել էր, վոր անասնաբուծութեանը պիտի դարձանա խորհրդանտեսութեանների, կոլտնտեսային ապրանքային ֆերմաների և համայնացված հոտերի միջոցով: Այդ բանը փայլուն կերպով հաստատվում է մեր յերկրամասի իրականութեամբ:

1929 թվականին խորհրդային տնտեսութեաններում կային 14,900 խոշոր յեղջուրավոր անասուններ, կոլտնտեսութեաններում — 26,609: Այս բոլորը կազմում էր անասունների ընդհանուր թվի 1 տոկոսը: 1932 թվի հունվարի 1-ին խորհրդանտեսութեաններում կային 289,100 գլուխ անասուններ, վորոնցից 100,700-ը կովեր և կոլտնտես-

աբութեաններում — 298,903 գլուխ, վորոնցից 140,836-ը կովեր: 1933 թվականի հունվարի 1-ին խորհրդանտեսութեաններում ու կոլտնտեսութեաններում ընդամենը կար 583,100 գլուխ անասուն, կամ ընդհանուր քանակութեան 21,6 տոկոսը:

1929 թվին յերկրամասում չկային կոլտնտեսային ապրանքային ֆերմաներ, իսկ 1932 թվին հունվարի 1-ին այդ ֆերմաների թիվը հասավ 1111-ի:

Այս թվերը ցույց են տալիս, վոր մեր յերկրի անասնաբուծութեանը բանել և լայն սոցիալիստական շինարարութեան ճանապարհը և վոր խորհրդանտեսութեանների հետ միասին, ապրանքային կոլտնտեսային ֆերմաները դառնում են սոցիալիստական անասնաբուծութեան հիմնական ձևը:

Մեր բերած տվյալները նաև ցույց են տալիս, վոր կոլտնտեսային լայն մասսաները գործնականում համոզվեցին կոլեկտիվ անասնաբուծության առավելութեանների մասին: Ահա այդ առավելութեանները:—

Կիովին հնարավոր է լուծել կերի խնդիրը:

Հնարավոր է ամենաարագ կերպով բարելավել անասունների ցեղը և ավելացնել նրանց մթերատվութեանը:

Ավելանում է ապրանքայնութեանը, իջնում է բուծվող անասունների և նրանց մթերքների արտադրութեան ինքնարժեքը:

Զգալի չափով կրճատվում են շինարարական ծախսերը (գոմեր, սիլոսային կառուցվածքներ և այլն):

Մեծ չափով խնայվում է բանվորական ուժը:

Բոլորովին մատչելի չեն կանոնավոր զոտեխնիկական և ագրո-տեխնիկական ղեկավարութեանն ու սպասարկումը:

### ՄՍԱԳՈՐԾԱԿԱՆ ՅԵՎ ՄՍԱ-ԿԱԹՆԱԳՈՐԾԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Թերք անասնաբուծութեան հիմնական խնդիրը մտի արտադրութեանն է, տնտեսութեանը կոչվում է մսագործակամ, իսկ յերբ նպատակ է դրվում գլխավորապես կաթ արտադրել, անտեսութեանը կոչվում է կաթնագործակամ: Այս յերկու ճյուղերը գլխավորներն են և հիմնականները: Գոյութեան ունեն նաև մսակաթնադործակամ և մրսա լծկա՝ ային ճյուղեր, այսինքն տնտեսութեան նպատակն է միս և չեկան անասուններ ստանալ:

Կարևորագույն տնտեսութեաններում բոլոր կովերը կթվում են և նրանց նպատակն է կաթ արտադրել: Այստեղ հորթերը ինսուվում են մեծացվում են առանց մայրերի (կովերի) այն հորթերը, վորոնք պահվելու չեն անասունների թիվը պահպանելու կամ շատացնելու հա-

մար: Մնացած հորթերը կամ մորթվում են, կամ հանձնվում ուրիշ տնտեսությունների, մասնավորապես հատուկ ֆերմաների, կերակրելու և մեծացնելու համար:

Մտազործակամ տնտեսության մեջ պահվում են մաստու կամ մըսա-կաթնատու անասուններ, հիմնական մթերք—միս ստանալու համար:

Այսպիսի տնտեսություններում կովերը սովորաբար կեն կթվում և հորթերն ամբողջ ժամանակ, մինչև ծնից կտրվելը զանվում են մայրերի կետ և ոգտվում են նրանց ամբողջ կաթով: Մասզործական տնտեսություններում կաթը և կաթնամթերքները յերկրորդական ոժանդակ բնույթ են կրում:

Մաս-կտրիտազործակամ տնտեսությունները զանազան ձևերով են վարվում. 1) բոլոր կովերը կթվում են, իսկ հորթերը կերակրվում են սերը քաշած կաթով. 2) կթվում են միայն ամենակաթնաձեռ կովերը, իսկ նրանց հորթերը կերակրվում են սերը քաշած կաթով. 3) Բոլոր կովերը կթվում են միայն որակյան մի անգամ: Հորթերը ցերեկը լինում են մայրերի հետ, իսկ գիշերը բաժանվում են նրանցից. 4) կովը կերակրում է յերկու հորթ — իրենը և մի ուրիշը:

Հորթերին այս ձևով կերակրելիս մնացած կովերը լիովին չեն կթվում:

Հյուսիսային Գովկասում, նայած կերի խնայրի հետ կապված պայմաններին, մաստու և մսա-կաթնատու անասնաբուծությանը ըզբաղվող կուտնտեսություններում միանգամայն զործադրելի յեն մսա-կաթնազործական ուղղության բոլոր առանձին ձևերը:

### ԿՈՆՏԵՍՏԱՅԻՆ ԱՊՐԱՆԲԱՅԻՆ ՄՍԱԳՈՐԾԱԿԱՆ ՑԵԿ ՄՍԱ-ԿԱԹՆԱԳՈՐԾԱԿԱՆ ՖԵՐՄԱՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

Կուտնտեսային ազրանքային ֆերման հանդիսանում է այն հիմնական ձևը, վորն ազահողում է անասնաբուծության ամենաարագ զարգացումը և համայնացված անասունների ազրանքայնության բարձրացումը: Անա թե ինչու այս ֆերմաները պետք է ամենամեծ չափով զարգանան մաստու և մսա-կաթնատու անասնաբուծության ուայոններում:

Այս ուայոնների յուրաքանչյուր կուտնտեսություն պետք է ունենա 25—30 և ավելի հով: Նոր կազմակերպվող կուտնտեսություններում ֆերմայի անասունների թիվը պետք է լրացվի կուլակներից զբաղված անասուններով, վորոնք կուտնտեսությանն են հանձնված, կուտնտեսություն մտնողներին յերկրորդ կովերով, խստորին համապատասխան գ. տ. արտելի կանոնադրության պահանջներին և հորթեր ու կովեր զնելով (տվյալ կուտնտեսության անգամներից կամ զրպից):

Ազրանքային ֆերմաներ կազմակերպելիս պետք է ի նկատի ունենալ, վոր բոլորովին անթույլատրելի յե համայնացնել մեկ կով ունեցող անտեսությունների կովերն ու հորթերը: Ընդհակառակը, յուրաքանչյուր կուտնտեսություն, կազմակերպելով ազրանքային ֆերմա, պետք է ոգնութուն և աջակցություն ցույց տա կուտնտեսականներին, վորպեսպի սրանք ունենան իրենց կովերը: Այնուհետև կուտնտեսային ազրանքային ֆերմաները պիտի լրացվեն նրանց ունեցած, համայնացած անասունների հորթերով, կուտնտեսության համայնացված նախրից անասուններ ընդունելով և մասամբ զնուկներ կատարելով:

### ՆԱԽԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

Հիմնական, բազմացվելիք նախիրը կազմակերպելիս, սկզբում նըպատակ է դրվում անասունների թիվը հասցնել այն չափին, վոր վորոշված է արտադրական պլանով: Նախրի թիվը մինչև ընդունված նորմա հասցնելուց հետո պետք է զբաղվել սկզբում հասակի, ապա ախլի, ցեղի և կազմվածքի ընտրությանը: Միևնույնը պիտի կատարել նաև ցեղային ցուլերի վերաբերմամբ: Նախիրն ամբողջովին լրացնելուց և պատշաճ կարգ սահմանելուց հետո վորոշվում է, թե ամեն տարի անասունների վոր տոկոսը պիտի խոտանվի: Ընտրվում են միայն լավագույն անհորթ կովերն ու ցուլիկները, սեփական միջոցներով անասունների ցեղը բարելավելու համար: Խոտանման տակոսը վորոշվում է կովի և ցուլի բուժողական (ցեղային) զործունեյություն միջին ժամկետով: Այդ ժամկետը, միջին թվով հաշված, մասաու կովերի համար 5 տարի յե, իսկ մսա-կաթնատու կովերի համար—6-7 տարի: Օուլերի բուժողական զործունեյությունը յերկու դեպքերում էլ միջին թվով 6 տարի յե վորոշվում: Այն ցուլերը, վորոնք հաջողությամբ տալիս են սերնդին իրենց հատկությունները և աչքի յեն ընկնում իրենց ծագումով և կազմվածքով, պետք է վորքան կարելի յե յերկար պահել նախրի մեջ:

Մաստու և մսա-կաթնատու անասունների նախիր կազմակերպելու համար պետք է ընտրել ամենաախլի և լավագույն կովերին: Ընտրելիս հարկավոր է ղեկավարվել այն ընդհանուր նշաններով, վորոնք բնորոշ են մաստու և մսա-կաթնատու կովերի համար:

Նախ և առաջ ամենահարմար անասունները կալմիկական անասուններն են, այնուհետև—տափաստանային զորոշվունները և այս ցեղերի մետիաները: Սրանք մսազործական նախիր պահող տնտեսությունների համար են: Մսա-կաթնազործական տնտեսությունների համար պետք է աշխատել ընտրել այդ հիմնական ցեղերի և սիմմետալ կոված ցեղի ու ղվեպական կովերի մետիաները:

Պովերի ընտրութեան ժամանակ հարկավոր և ամենից առաջ թե նկատի ունենալ հետեյալը.— հասակը, վորը 9—10 տարուց ավելի չպիտի լինի, առողջութունը, վորը պետք է վավերացվի անամաբույժի կողմից և անամի կենդանի կշիռը: Կալիփական կովերի ընտրուելի կշիռը պիտի լինի 370 կիլոգրամ: Կարող է լինել նաև պակաս, բայց միայն այն դեպքերում, յերբ կոնք աչքի յե ընկնում իր ցեղայնութեամբ և կազմվածքով: Գորշավուն, տափաստանային կովերի կշիռն ավելի պիտի լինի վոչ պակաս, քան 20 կիլոգրամով: Կերջապես, կովերի ընտրութեան ժամանակ վերջին պահանջն այն է, վոր նրանք պետք է բավարար կազմվածք ունենան:

Անասունների կազմվածքի վրա պետք է մի փոքր կանոչ առնել: վորովհետև դա ամենանյալանն է համարվում: Մասաու անասունների լավ կազմվածքի նշանները հետևյալներն են.— 1) լայն և համահավասար մեջք: Յետևից և մի փոքր բարձր տեղից դիտելիս մասաու կովի լավ մեջքի ձևը պետք է նմանվի յերկարացրած յիռանկյան (կաթնատու կովերի մեջքի այդպիսի ձևը պարզ յերևում է): 2) յիթն նայել կողքից, մասաու կովի իրանի ձևը նույնպես նման է յիռանկյան: 3) մասաու կովի առջևից ու յետևից յերևում են ուղիղ անկյունների գծավորումներ: 4) կողերը կլորացած ձև ունեն և կախ ընկած չեն: 5) յերկար և փորքան կարելի յե լայն ու մտու հետույքը մասաու կովի հատկանիշն է: 6) պետք է խուսափել յերկարավում կովերից և զերբազանց կարճ վտանք ունեցողներին, 7) կոլերքը պիտի լինի լայն: 8) վիզը կարճ և հաստ, ավելի լավ է յերկար ու բարակ:

Փափուկ և հաստ կաշին, վորը հեշտութեամբ շոշափվում է մասունքի ծայրերով, խիտ և փափուկ մազերը և ընդհանուր, փափուկ կազմվածքը մասաու անամի լավագույն նշաններն են համարվում:

Ցուլն ընտրելիս պետք է ուշադրութեամբ դարձնել նույն նշանների վրա, ինչ վոր կովինն են, բայց սիշտ պետք է զերբազանց արհուլածք և եներգիտով աչքի ընկնող ցուլերին:

Մսա-կաթնագործական նախիրների համար կովեր ընտրելիս թույլատրելի յեն մի քանի շեղումներ վերև հիշված պահանջներից: Մսա-կաթնագործական ցուլ ընտրելիս պետք է աչքի առաջ ունենալ վոչ միայն նրա կազմվածքն ու ընդհանուր նշաններն, այլ և ծագումն, առանձնապես հետաքրքրվելով նրա ծնողների կաթնատվութեան շափով:

Մսային ուղղութեան ունեցող անտեսութեաններում նախիր կովերի քանակը պիտի լինի ամենաշատը 300: Այդ քանակը հանձնարարելի յե միայն այն դեպքերում, յերբ գոյութեան ունեն ընդարձակ արտատեսակեր և յերբ անասուններին ջրելու խնդիրը լուծված է դրական կերպով: Ուրիշ դեպքերում այդ քանակը պիտի լինի 250, ընդ-

հանրապես 200 ից պակաս չպիտի լինի: Մսա-կաթնագործական տընտ սութեան մեջ կովերի թիվը լինում է 150-ից մինչև 200:

Մեծաբաժ հորթերից նախիր է կազմվում սովորաբար 250—300—350 գլուխ: Նախիր քանակը վորոշվում է, նայած արտատեսակի վորակին և նրան ուղտագործելու հարմարութեաններին, ինչպես նաև վոր կարևոր է, ջրելու հարմարութեաններին:

Կերով ապահովված լինելու, կերի կայուն բազա ստեղծելու հնարավորութեան տեսակետից մեծ տարբերութեաններ կան Հյուսիսային հովիտի ու արևմտյան միջև: Այստեղից ծագում է մի խնդիր—անհրաժեշտ է կազմակերպել այնպիսի ապահովման մասաու և մսա-կաթնատու ֆերմաներ, վորոնք տարբեր լինեն իրենց արտադրական նշաններով:

1. Յերկրամասի չափազանց չորային վայրերում, վորտեղ կերի խիտ պակասութեան է զգացվում, ամենից ձեռնառ յե կազմակերպել հորթեր արտադրող անամարուծական անտեսութեաններ: Հորթերը անտեսութեան մեջ նույն են միայն ծիծ ուտելու ջրջանում—մինչև մորից բովանդակել: Ծծեց կարելուց հետո (մոտ 5 ամսական հասակում հորթերը հանձնվում են անամարուծական կոլտեստութեաններին (ֆերմաներին), վորոնք զբաղվում են մատղաշների անեցմամբ:

Հորթերի այդպիսի ֆարթիկաներում նախիրը բաղկացած պիտի լինի բացառապես ծուլ կովերից և ցեղային ցուլերից (կովերը—96 տոկոս, ցուլերը — 4 տոկոս):

Սեփական նախիր մեջ ցեղային մատղաշներ (սեփական միջոցներով անասունների ցեղը բարելավելու համար) ունենալը պարտադիր չէ: Այդ նպատակով ցեղային անասուններն ստացվում են ուրիշ կոլտեստութեաններից (ֆերմաներից), վորոնք անեցնում են մատղաշներին:

2. Այն սայրաններում, վորտեղ կլիմայական նպաստավոր պայմաններ կան հյութալի և այլ կեր արտադրելու համար, ձեռնառ յե կազմակերպել այնպիսի անամարուծական կոլտեստութեաններ (ֆերմաներ), վորոնք հորթեր են արտադրում և մեծացնում են նորանց, մինչև վոր նրանք անտեսապես պետքական լինեն:

Այսպիսի ֆերմաներում մասաու և մսա-կաթնատու անասունների տակոսային հարաբերութեանը հետևյալն է.—

Կովեր—30 տոկոս:

Ցուլեր—1 »

Մինչև 1 տարեկան հորթեր—24 տոկոս:

1 տարեկանից մինչև 2 տ. հորթեր—23 տոկոս:

2 տարեկանից մինչև 2 տարեկան—22 տոկոս:

Այնքի արադ ամոռ անասուններ բուծելու զեպքում, յերբ հոր-  
թերը մեծացվում են վոչ թե մինչև 8, աչ մինչև 1 և կես—2 տա-  
րեկան, կովերի տոկոսը համապատասխան չափով ավելացվում է:  
Ընդհակառակը, ուր անոց անասուններ բուծելիս, յերբ մատղաշները  
մեծացվում են մինչև 4 տարի, կովերի տոկոսն ավելի պակաս կլինի:  
Մեր բերած նախրի չափը պարտադիր չէ, սակայն նախիր կազ-  
մակերպելիս և արտադրական առաջադրություններ մշակելիս կարելի  
յե ոգտվել այդ չափով:

8. Այդ նույն ուսյուններում տնտեսապես ձեռնտու յե զբաղվել  
այն հորթերի և մատղաշների անեցմամբ, վորոնք ստացվում են ու-  
րիչ ֆերմաներից և կուտանտեսություններից:

4. Այն տեղերում, վորտեղ կան լավ արոտատեղեր և խոտհարք-  
ներ, կամ հյուսթալի, ուժեղ և կոշտ կերեր, անհրաժեշտ է կազմակեր-  
պել ուրիչ կուտանտեսություններից ստացվող անասուններին կերակ-  
րող-արածեցնող կուտանտեսություններ ու ֆերմաներ:

5. Կազմակերպել խոտն ֆերմաներ ու կուտանտեսություններ,  
այսինքն այնպիսիները, վորտեղ միանդամայն հնարավոր և ձեռնտու  
յե բոլոր գործողությունների զուգակցումը, այսինքն հորթերի  
արտադրությունը, մատղաշներին մեծացնելը և վոչ միայն սեփական  
պնասունների, աչ և ուրիչ կուտանտեսությունների ու ֆերմաների  
անասունները:

Ապրանքային անասնաբուծական մաստու և մսա-կաթնատու  
ֆերմաների ըստ արտադրական նշանների մասնազիտացումը անհրա-  
ժեշտ է դարձնում յերկրամասում կազմակերպել մի այնպիսի կուրի-  
նատ, վորն իր սխտեմի մեջ ընդգրկե բոլոր ապրանքային, մաստու  
և մսա-կաթնատու ֆերմաները:

Հացահատիկային կուտանտեսություններում և խորհանտեսու-  
թյուններում արկավոր է կազմակերպել անասունների ձմեռումը կա-  
լի կերերով (ավելացնելով ուժեղ կերեր), իսկ մի քանի զեպքերում  
անասունների կերակրումը խոտով, արմատապտուղներով, սիդոսային  
կերով և գլխավորապես յեզիպտացորենով:

Ապրանքային կաթ ստանալու համար, ապրանքային անասնա-  
դահական մատղործական ֆերմաների մեծ մասում, մանավանդ այն-  
տեղ, ուր կան լավ արոտատեղեր, պետք է կթել կովերը: Կաթի յե-  
կամուտը պակասեցնում է հորթերի արտադրության և նրանց անեց-  
ման արժեքը:

Մատղործական անասնաբուծական տնտեսություններ վարելու  
այս ձևը լայնորեն կիրառվում է Հյուսիսային Ամերիկայում: Այս  
տնտեսությունների ավյալները հաստատում են, վոր մաստու կովե-  
րի կիսատ կթելը չի խանգարում հորթերի նորմալ անին:

Կովերի մասնակի կրթը լայն շտրիով զործադրվում է նաև մե-  
զանում, Խորհրդա ին Միուկթյան մեջ, «Մկտավորի» տնտեսություն-  
ներում: Կիրառելով մաստու կովերի մասնակի կրթը, մենք զրանով  
զուտ մսա-զործական տնտեսությունից անցնում ենք մսա-կաթնա-  
զործական տնտեսության, վորն ավելի յեկամտարեք է:

Հաշվի առնելով կազմակերպչական տնտեսական նշանակութուն  
ունեցող այդ բոլոր հիմնական գրույթները և, գլխավորապես, հաշվի  
առնելով կերի հնարավորությունները, պլանավորող որգանների հա-  
մար դժվար չի լինի վորոշել կուտանտեսության կամ ֆերմայի արտա-  
դրական այն սիպը, զորն առավել ձեռնտուն յե յերկրամասի այս կամ  
այն վայրի համար:

Չուտ մատղործական ուղղություն ունեցող ֆերման կարող է  
տեղ ունենալ այն ապրանքային անասնաբուծական, մատղործական  
կուտանտեսություններում, վորոնք զտնվում են յերկրամասի արևել-  
յան ուսյունների առավել չորային տեղերում:

Մսա-կաթնազործական ապրանքային տնտեսության արտա-  
դրական հետևյալ ձևը մեկ կովով յերկու հորթ կերակրելն է և կո-  
վերի կես մասի կթելը: Անասնաբուծական ապրանքային ֆերմանե-  
րում (կուտանտեսություններում) այդպիսի սխտեմ պիտի կիրառվի ար-  
ևելայան ուսյուններում, լավագույն կեր ունենալու զեպքում:

Յերկրամասի արևելյան և հյուսիս-արևելյան ուսյունների արև-  
մայան և հարավ-արևելյան մասերում, վորտեղ կերի խնդիրը հեշտու-  
թյամբ է լուծվում, մանավանդ անասունների արածման շրջանում, —  
միանդամայն ձեռնտու յե կազմակերպել խոտն տիպի ապրանքային  
մսա-կաթնատու կուտանտեսություններ: Այստեղ կթվում են նախրի  
առավել կաթնատու կովերը, իսկ նրանց հորթերը կերակրվում են  
սերը քաշած կաթով: Մնացած կովերը չեն կթվում և հորթերի ծծե-  
րու շրջանում ամբողջ արը զտնվում են իրենց հորթերի հետ, մինչև  
վոր սքանք ծծից կարվին:

Վերջապես, ապրանքային մսա-կաթնազործական անասնաբու-  
ծական ֆերմաների ու կուտանտեսությունների վերջին ձևը այն է,  
յերբ բոլոր կովերը կթվում են, իսկ նրանց հորթերը կերակրվում են  
սերը քաշած կաթով: Այս ձևի մսա-կաթնազործական տնտեսություն-  
ները ձեռնտու կլինեն միջին խոնավություն ունեցող ուսյուններում,  
ապրտեղ, վորտեղ միանդամայն հնարավոր է հյուսթալի, ուժեղ և կոշտ  
կերերի ուժեղ քաղա ստեղծել:

**ՏԵՂԱՎԵՆ ՄԱՍՏՈՒ-ԼԾԿԱՆ ԱՆԱՍՈՒՆՆԵՐԻ ԾԵՂԵՐԸ**

Մեզանում, Հյուսիսային Կովկասում չկան յեզլյութավոր անա-  
սունների բացառապես մաստու ցեղեր:

Մեզանում անասունների հիմնական ցեղերը, վորոնք շատ են տարածված, կարմիրկապան և գորշավուն տափաստանային (ուկրաինական) տեսակներն են: Ընդունված և կարմիրկապան անասուններին անվանել մաստու-լիկանացու, վորովհետև նրանք աշխատելու խիստ դրական հատկություններ ունեն (սրանք մաստվությաժ ատաղին տեղ են բռնում), իսկ գորշ տափաստանայինները—լիկանացու մաստու (աշխատելու արժանիքներն ավելի բարձր են, քան ուրիշ ցեղերի անասուններին): Բացի այդ յերկու հիմնական ցեղերից, ազգային մարզերում գոյություն ունեն, այսպես կոչված՝ լեռնական անասունները: Կարմիրկապան անասուններն իրենց նշանակությունը, վորպես հիմնական բազա մազործական և մա-կաթնազործական անասնաբուծությունը զարգացնելու համար, իրենց թվով առաջին տեղն են բռնում: Գորշավունները բռնում են յերկրորդ տեղը, իսկ լեռնականները—յերրորդ տեղը: Ավելի ճիշտ կլիներ վերջիններս զասել կաթնա-մաստու անասունների շարքը, քանի վոր նրանց կաթնատվությունն ավելի յե, քան մաստվությունը:

### ԿԱԼՄԻԿԱԿԱՆ ԱՆԱՍՈՒՆՆԵՐԸ

Կարմիրկապան ցեղի անասունները իրենց պատվութունն ունեն ղեռ 17-րդ դարից սկսած:

Նրանց թիվն առանձնապես շատ է նախկին Աստրախանի նահանգում և ապա ղեպի արևմուտք, նեբառյալ նաև նախկին Ստավրոպոլի ու Սարսիլի շրջանները, այսինքն այնտեղ, վորտեղ կարմիրկապան ժողովուրդն ազատ տեղեր եր գտնում քոչվորություն համար:

Այն նշանները, վորոնք կարմիրկապան անասուններին մաստվության վորակի տեսակետից տարբերում են ուրիշ տեղական ցեղերից, հետևյալն են.—անասնի յետույթի և մեջքի յերկարություն ու լայնություն, կրծքի լայնություն, կարճ վրտներ, ղլխի և այլ մասերի թեթևություն: Այս բոլոր նշանները խիստ հիշեցնում են կուլտուրական, մաստու ցեղերի նշանները: Մաստու անասուններին ուսումնասիրողներից շատերը մեզանում և նրանցից ամենահանավորը—պրոֆ. Պ. Ն. Կուլեշովը նմանություն են գտնում մեր կարմիրկապան անասունների և շորագործն կոչված ցեղի միջև (տես նկ. 1):


Բացի կողմվածքի նմանությունից, նրանք նմանվում են նաև գույնով: Կարմիրկապան և շորագործն անասունները մեծ մասամբ լինում են կարծիր: Ցեղջյուրների մոմի գույնը նույնպես ընդհանուր է այս ցեղի անասունների համար:

Ներկայումս Հյուսիսային Կովկասում կարմիրկապան անասունները տարածված են նախկին Սարսիլի, Ստավրոպոլի, Դոնի, Շախտ-Իոնցի, Իոնցի ուսյոններում և նախկին Թերեքի շրջանի հյուսիս-արևելյան

59-55785

մասում Հաճաճայն Յերդրային Հողային վարչության ավյալների, 1927 թվականին յերկրամասի սահմաններում կարմիրկապան անասունների և նրանց մեղիների թիվը հասնում եր 1,300,000 ղլխի: Այս ցեղի լավագույն անասունները տարածված են, Մանիչ, Սալա, Կուգուլտ, Կարաուս ղետերի մերձակա վայրերում և Յեգորլիկ գետի վերին մասերում:

Անասունների այս ցեղի հիմնական առանձնատկությունը—գանդի կազմվածքն է և յեղջյուրների ուղղությունը: Գուռեր թեթև և ճակատի ներս ընկած վոսկորով այնտեղ, վորտեղ գտնվում է քթի վոսկորների հիմքը: Բացի այդ, համարյա բացակայում է ծոծրակի սանրը, վորից ղուռը ներս է ընկած նաև այդ մասում: Ցեղջյուրները բաց, մոմի գույն ունեն, կիսալուսնի նման են և մի փոքր ղեպի առաջ են թեքված:



Նկ. 1-ին կարմիրկապան ցեղի ցույ

Այսպիսի ձևի յեղջյուրներ են ունենում կարմիրկապան կուռերն ու յեղները, իսկ ցուլերի յեղջյուրները նույնպես կիսալուսնաձև են, բայց նրանց ծայրերը չեն մոտենում իրար:

Գուռը գլխավորապես կարծիր է, յերբեմն ավելի բաց և մույգ յերանգավորումներով: Հաճախ կարմիրկապան անասունների գույնը չի փնում հաստարած, այլ սպիտակ բծերով: Շատ դիտումներ կարմիրկապան անասունների ցեղային լավ նշան են համարում բաց գույնը, մեծ հազատությունը, գանազան մեծությունը սպիտակ բծերը կրծքի տակ, փորի, առուկների և մեջքի վրա, ինչպես և պոչի մողերի ծայրի սպիտակությունը:

Կարմիրկապան անասունների առանձնատկություններից մեկը նրանց արագ չաղանայն է և արագարակ հարպակարվելը: Բացի գրա-



նից, կարմիրկապան անասունները հիանալի ընդունակություն ունեն գիմանալու ձմեռը բացողյա պահվածքին, հենց տափառանում: Ուժեղ քամու, մրրկի և սառնամանիքի ժամանակ կարմիրկապան անասունները կարող են ավելի յերկար դիմանալ քան ուրիշ ցնդերի անասունները:

Կարմիրկապան անասունը վոչ պակաս դիմանում է նաև ամառվա շոգին և յերկարատև չորութեան: Նա պահանջուտ չէ դեպի ջուրն ու կերը: Առանց հրաժարվելու խմում է դառնալի ջուրը, բայց դժվարութեամբ է ընտելանում լավ, մաքուր ջրին: Նա ավելի մեծ հաճույքով է ուտում տափաստանի վաչրի խոտը, քան թի մարդագետնի, լեռնաչին կամ այլ խոտերը:

Ըստ Պ. Ն. Կուլեօվի, կարմիրկապան չաղացրած յեղամ միտը, առանց հարսի, կազմում է վոչ պակաս, քան 51,5 տոկոս:

Քիչ չեն այն դեպքերը, յերբ լավ չաղացրած կարմիրկապան յեղաների ամբողջ խմբեր տալիս են 55 տոկոս զուտ միս: Վտակորների կըրի ուղ կաղմում է մսի կշիռ 24,3 տոկոսը: Ներկայումս կարմիրկապան ցեղի կովի միջին կշիռը 360 կիլոգրամ է, իսկ միջին գիրութեան ունեցող հասակավոր յեղան կշիռը 400—420 կիլոգրամ: Հիշյալ կշիռը շատ ցածր է նախապատերազմյան ժամանակի կարմիրկապան կովերի միջին կենդանի կշիռից, յերբ կովը կշռում էր 400—420 կիլոգրամ, իսկ լավ չաղացրած յեղը—560 կգ:

Սյս բոլորը ցույց է տալիս, վոր խիստ վատացել է կարմիրկապան անասունների վորակը և վոր անհրաժեշտ է շատալ կերպով բարելավել այն:

1928—27 թվ. Ռուստովի յերկրային գյուղատնտեսական փորձնական կայանի աշխատակից Ա. Ս. Նրամովը հետազոտեց նախկին Սալսկի շրջանի կարմիրկապան անասուններին: Հետազոտութեանը ավելից հետևյալ թվերը անասունների չափի, կենդանի կշիռ մասին և այլն.—

Հասակավոր կենդանիների միջին չափերը (սանցիմետրներով)

	Կովեր	Ցուլեր	Յեղաներ
Բարձրությունը . . .	125,8	135,5	141,5
Կրծքի շրջանը . . .	181,6	200,0	200,7
Մակի տակի շրջ. . .	17,0	22,0	20,6
Իրանի թիք յերկարությունը . . .	165,0	200,0	183,3
Կենդանի կշիռը . . .	—	247,0	—

Անասունների գույների վերաբերմամբ հետազոտութեանը ավելի է հետևյալ թվերը.—համատարած կարմիր գույնի անասունները—8,6 տոկոս, կարմիր մարմնով և սպիտակ գլխով անասունները—0,1 տոկոս:

կարմիր գույնով և սպիտակ բծերով—4,42 տոկոս: Ընդամենը կարմիր տեսակից—58,9 տոկոս:

Դեղնակարմիր և դեղին տեսակ—5 տոկոս, սպիտակ գլխով—1,4 տոկոս, մարմնի վրա սպիտակ բծավորումներով—32,7 տոկոս, ընդամենը դեղնակարմիր և դեղին (բծավորումներով) անասունները—41,1 տոկոս:

Ինչ վերաբերում է կարմիրկապան անասունների կաթնատուլութեան, այդ չափազանց կարևոր հարցը մինչև այժմ մնում է չպարզված, քանի վոր չի կարելի հիմնվել նախապատերազմյան ժամանակի ցուցիչների վրա. այդ ցուցիչները շատ քիչ են և հակասական: Վերջին ժամանակներին տվյալները նույնպես լրիվ չեն:

Համաձայն նախկին Սալսկի շրջանի հողվարչութեան տեղեկությունների, կան հատ ու կենտ տվյալներ կարմիրկապան ցեղի կովերի մթերատուլութեան մասին: Այդ տվյալներն ասում են, վոր Յիմյանսկի առյուծի Անտոնովսկի գյուղում կովը ասրեկան տալիս է 1110 կիլոգրամ կաթ:

Վերև հիշված Ա. Վ. Նրամովի աշխատանքի տվյալներից յերևում է, վոր նորածին կովերը որական միջին թվով տալիս են 2-ից մինչև 3 լիտր, լավագույն դեպքում 6-ից մինչև 15 լիտր կաթ: Նախկին անասնաբուժական ընկերութեանների գրանցումների համաձայն, նրանց 3 կաթնատնտեսութեաններում, ինչպես և 4 գյուղական կաթնատնտեսութեաններում կարմիրկապան կովը տալիս էր որական 5,1 լիտր կաթ: Նորածին կովը լավագույն դեպքում տալիս էր 10,9 լիտր: Կթվելու շրջանի տևողութեանը 6—8 ամիս է և ցամաքութեան շրջանը 4—6 ամիս: Սա արդեն այնքան էլ վատ չէ, համեմայն դեպս այդ տվյալները իրավունք են տալիս յեղրակացնելու, վոր կարմիրկապան ցեղի կովերն ընդունակ են տարեկան միջին թվով տալու 1200 լիտր կաթ (յեթն նրանք կանոնավոր կերակրվեն):

Կարմիրկապան անասունների պակասութեաններից են նրանց ուշ անումը, վոր մասամբ բացատրվում է ընդհանրապես մեղանում անասունների, մասնավոր հորթերի վատ պահվածքով:

Անհախ նրանից, վոր կարմիրկապան անասունների ճարպանյութերը կուտակվում են զլխավորապես վորովայնի մասերում, աղեցանցում և յերեկամունքներում և շատ քիչ են կուտակվում յենթամաշկի վանդակներում և մկաններում, այնուամենայնիվ կարմիրկապան անասունների միտը բավականաչափ հյութալի յե և համեղ:

Կարմիրկապան անասունների մասին մեր բոլոր ասածները լիակատար հիմք են տալիս հաստատելու, վոր անհրաժեշտ է այդ անասունների լավագույն մասը պահպանել գոարյուն դրութեամբ, առանց մի վորևե այլ ցեղի հետ խառնելու: Մետիզացիայի համար կարելի յե թողնել այնպիսի կովերի, վորոնք կասկածելի յեն ըստ տիպի և չունեն լավ կազմվածք:

Տափաստանային կամ ուկրաինական անասունները պատկանում են պողոտյան ցեղին և ամենից շատ են տարածված Խորհրդային Միության ամբողջ հարավում:

Անցյալ դարի հուշակավոր գերմանական գոտտեխնիկ Ռոդեն Պոլոյան ցեղը բաժանում է տեսակների, ըստ նրա աշխարհագրական տարածման: Հունգարական տեսակը—գորշավունները բուծվում են Հունգարիայում, սուսանական տեսակը—Իտալիայում, ուկրաինականը—Ուկրաինայում և Կովկասյանը—Կովկասում: Վերջինս ավելի հայտնի չի Սև ծովյան անվան տակ: Այս տեսակ անասունները ներկայումս գլխավոր տեղ են ընդունում մեր յերկրամասի մի զգալի մասում: Մոտավորապես մինչև անցյալ դարի վերջը նախկին Կուբանի և Թերեքի մարզերում, ամբողջ սև-ծովյան շրջանում, յերկրամասի լեռնային ու նախալեռնային մասերում ապրում էին այս ցեղի անասունները:

Դաշտագործութան զարգացման հետ մեկտեղ ցանքերի տարածություններն ավելանում էին՝ ի հաշիվ ընդարձակ արոտատեղերի և խոտհարքների: Այս հանդամանքը առաջ բերեց լծկան ձիու լմեծ պահանջ: Յեղը փոխարինվեց ձիով, իսկ սրա շնորհիվ կրճատվեց գորշավուն անասունների բուծումը:

Յերկրամասի մի զգալի մասում արոտատեղերի կրճատման և յեղը ձիով փոխարինելու շնորհիվ, լծկանացու-կաթնատու անասնաբուծությունը տեղի տվեց մսակաթնագործական անասնաբուծության, այնուհետև նաև կաթնագործականին: Իրա համար ոգտագործվեցին գլխավորապես տափաստանային կովերը:

Այնուամենայնիվ ներկայումս նախկին Արմավիրի, Կուբանի, Մալկուլի ու Թերեքի շրջանների ուայոնների մի մասում, մասամբ նաև ալգային մարզերում ծնու կովերի մեծ մասը պատկանում է այդ ցեղին: Գորշավուն անասուններով (նրանց սև-ծովյան սերնդով) առանձնապես հարուստ են նախալեռնային ուայոնները, Կաբարդա-Բալկարիան, Կարաչայն ու Չերքեզիան:

Այս ցեղի անասունները խիստ հետաքրքրական են վոշ միայն իբրև լծկաններ, այլ և իբրև մսակաթնատու անասուններ: Անցյալում մեղանում, Հյուսիսային Կովկասում: Մինչև յերկաթուղիներ կառուցելն ու դաշտագործության զարգացումը, յեղը միակ լծկան ույժն էր: Նբանով էին փոխադրվում բեռերը հարավից դեպի հյուսիս և ընդհակառակը:

Այս ցեղը տեղական է և համարվում է ամենահինը Միության հարավային մասերում: Ինչպես և ամեն մի տեղական ցեղ, նա բուրբավի խոտապահանջ չն դեպի վատ պահվածքը և շատ քիչ է յենթահա ամեն տեսակ վարակիչ և մրսելուց առաջացող հիվանդություն-

ներին: Յեղ գա հասկանալի չի շատ դարերի ընթացքում այս ցեղի անասունները ընտելանում էին ամեն տեսակ կլիմայական, հողային պայմաններին, կերին, վորի հետևանքով առաջ յեկավ գորշավուն, տափաստանային անասնի բուրբի հայտնի դիմացկունությունը, աչքի ընկնող հատկությունները:

Տափաստանային-գորշավուն անասունների ընտրող և եյական նշաններից են՝ հրաշալի կմախքը, ամուր ու կոշտ վոսկորներով: Հայն և ուժեղ կուրծքը, յերկար, թեք ուսը, յերկար իրանի վերևի լավ գծավորումը, ուղիղ գավակը, յեղար ու մտտ յետույքը, ուղիղ, հաստ և մի փոքր յերկար վերջավորությունները (վոսները), վորոնք մոտենում են իրար ծնկի մոտ:

Հիմնական գույնը գորշ է, սպիտակ-արծաթավուն, կապույտ մուգ-գորշավուն, հարդագույն, գարշինագույն յերանգավորումներով: Ընդհանրապես, ցուլերը միշտ ավելի սույգ-գույն ունեն, քան յեղներն ու կովերը: Ցուլերի առջևի մասը միշտ ավելի մուգ է, քան յետևի մասը: Սպիտակ բծավորումներ համարյա թե չեն լինում, հաճախ սե սեղեր են լինում աչքերի շուրջը: Պոչի մաղերը լինում են սև:

Հորթերը ծնվելուց հետո լինում են շիկագույն կամ շիկագույն-սպիտակավուն. յերբեմն մուգ-կարմիր և մուգխակ սև: Մի տարեկան դառնալուց հետո նրանք սկսում են ստանալ իրենց նորմալ գույնը:

Բթի պինդը, լեզուն և քիմքը սև են: Մաղերը նոսր են, կապիտ և ճակատի վրա խիտ: Կաշին հաստ է, ամուր և ճկուն, հաճախ սև: Կաշու արդյունաբերության մեջ այս կաշին ավելի թանկ է դնահատվում, քան թե մնացած բոլոր ցեղերի անասունների կաշին:

Այս ցեղի բոլոր հորթերն ու կովերը մեծ մասամբ զանգուր մազեր են ունենում գլուխների վրա: Յեղյուրները լինում են դեղին-սպիտակավուն գույնի, ծայրերը—սև՝ գունավորումով: Յեղյուրները յերկար են, մանավանդ յեղներինը: Իրանի յերկարությունը բարձրությունից ավելի յե 12—15 տոկոսով: Վիզը փոս ունի ծոծրակի մոտ, միջին յերկարության է, նեղ, կրճատակը միջակ մեծություն է: Ուսերը լավ են զարգացած, ուժեղ են: Մեջքը յերկար է և հաճախ կախ ընկած և կտուրաձև: Իրանը տափակավուն է: Կուրծք փոքր է, մտտ: Յեղների ու ցուլերի առջևի մասն ավելի լավ է զարգացած, քան յետևի մասը: Սև-ծովյան կովերի միջին կենդանի կշիռն ավելի յե 400 կիլոգրամից, իսկ ցուլերն այստեղ կշռում են 650—700 և ավելի կիլո:


Մնվելուց հետո հորթերի միջին կշիռը 28—30 կիլոգրամ է, ամենամեծ կշիռը—40 կիլո, ամենաքիչը—22 կիլո: Մնվելուց հետո արու հորթերը միշտ համարյա մեկ կիլոգրամով ավելի ծանր են եզ հորթերից: Կաթնատուության միջին չափը 1000 կիլոգրամից ավելի յե, 5 տոկոս յուղի պարունակությամբ: Առաջ մի քանի մասնավոր նախիր:

ներում կովը միջին թվով տալիս եր մինչև 1200, 1600 և նույնիսկ 1700 կգ. կաթ:

Լավ պահելու, կանոնավոր կերակրելու և հմուտ ընտրություն կատարելու դեպքում, գորշավուն-ուկրաինական կովերի կաթնատվու-թյունն անողայման կավելանալ: Սրա աւելացուցն են Ուկրաինայի այս ցեղի անասունների ցեղաբուծարանների տվյալները: Վերջիններս ա-տում են, վոր 1929 թվականի սեպտեմբերի 1-ին պետական Շնովո-տելյ ցեղաբուծարանի 40 կովերը միջին թվով տվել են 2873,5 կիլո-գրամ կաթ, վորը միջին չափով պարունակել է 4,68 տոկոս յուղ:

Պովի տարեկան ամենաքիչ կիթը յեղել է 2034 կգ., իսկ ամե-նաշատը—4552,3 կգ. («Գրուչինա»): «Լյուբամիրովկա» կոչված պետական ցեղաբուծարանի ուկրաինական-գորշ 39 կովերը 1929 թվի սեպտեմբերի 2-ին տվել են կաթնատվության հետևյալ ցուցիչները.—կովի տարեկան տված կաթը միջին թվով 292,87 կիլոգրամ, 4,7 տո-կոս յուղի պարունակությամբ: Ասենաքի կիթը—1237 կգ, իսկ ամե-նաշատը («Յալոսյա» կոչված կով)—5301,2 կիլոգրամ:

Սև-ծովյան խոշոր յեղներն ունենում են մարմնի 150 և ավելի սանտիմետր բարձրություն: Միջակ գիրությամբ յեղան կենդանի կը-



Նկ. 2-րդ—Տափաստանային գորշ ցեղի ցուլ Կարաքիմա-Բալիարայի յեղաբուծարանից:

լիսը 450—600 կիլոգրամ և Սև-ծովյան կովերի բարձրությունն է 123 սանտիմետր, կենդանի կշիռը—420 կիլոգրամ և ավելի, իսկ ցուլերի կենդանի կշիռը հասնում է 1160 կիլոգրամի (տես նկար 2):

Տափաստանային, գորշ անասունները մտի վորակի տեսակետից նեղ են մեղում կալմիկական անասուններից: Այնուամենայնիվ լավ

աղացրած այդպիսի կենդանիների միտը դժվար է դանադանել կալ-միկական անասունների մտից: Իրենց մտի քանակով, լավ չաղացրած և ջանել տափաստանային յեղները վորչնչով պակաս չեն կալմիկական անասուններից և տալիս են մինչև 55 տոկոս միս և 10 տոկոս ճարպ:

Գորշ անասունների փոսկրությունը խիտա մեծ է և մտի կշռի հանդեպ կազմում է 28 տոկոս:

Այս ցեղը շատ ուշ է անում: Անասունները լրիվ հասակ են առ-նում վոչ շատ, քան 5—6 տարում: Յեթև նրանք լավ կերակրվեն ու պահվեն, այդ ժամկետը կրճատվում է յերկու և ավելի տարով:

Միամենտայ և շորագորն ցեղերի նեղ խառնվելով, տափաստանա-յին անասունները տալիս են հրաշալի մետիսներ, վորնք աչքի յեն ընկնում մեծ կշռով, լավ կաթնատվությամբ ու մատվությամբ:

Տափաստանային գորշ ցեղի անասունների ուլժն և աշխատունա-կությունը չունեն մրցակից մյուս ցեղերի մեջ: Սոռոր և արագ քայլե-րը, մինչև 13 և նույնիսկ մինչև 15 տարեկան հասակը աշխատունա-կությունը պահելը—այս բոլորն առանձնապես գնահատվում են այն տեղերում, վորտեղ աշխատում են յեղներով: Այս ցեղի կովերն ևս համարվում են լավ աշխատունակներ վոչ միայն թեթև և միջակ, այլ և այնպիսի աշխատանքներ կատարելիս, ինչպիսին են վարը, ծանրու-րությունների փոխադրությունը և այլն: Հաստ և պինդ կաշին կեն-դանուն լավ պաշտպանում է միջատների կծկուց, ցրտից և բարձր և դնահատվում կաշու արդյունաբերության միջ:

Շնորհիվ այն հանգամանքի, վոր հարյուրավոր սերունդներ ապ-րել են կլիմայական աննպաստ պայմաններում, պահվել են վատ, ա-առաջ և յեկել խոշոր յեղջյուրավոր անասունների այս յուրահատուկ տիպը, վորն աչքի յե ընկնում իր դիմացկունությամբ և վորը բոլո-բովին պահանջկոտ չե դեպի կերը և ընդհանրապես դեպի պահվածքը:

Տափաստանային հիմնական տեղերի—կալմիկական և ուկրաինա-կան անասունների մասին պետք է նաև շեշտել, վոր նրանք հրաշալի աշխատունակ են, ընդունակ են արագությամբ դիրենալ և տալ լավ վորակի միս ու յլաթ, իսկ նրանց կաթնատվությունը նեղությամբ կարելի յե ավելացնել: Այդ անասունները լավ ընտելացել են մեր կլիմայական պայմաններին: Նրանց դիմացկունությունը հիվանդու-թյունների դեմ և դեպի պահվածքը պահանջկոտության բացակայու-թյունն իրոք վոր բացառիկ են:

Այս ցեղերի անասունների մատվության և կաթնատվության վորակը բարելավելիս պետք է հետևել վոր չառաջն նրանց մյուս ար-ժեքավոր հատկությունները: Այս խնդիրը կաշող և լուծվել միայն հմուտ ընտրություն կատարելով, մատղաշներին, մանավանդ հոր-թերին լավ պահելով ու կերակրելով և այլն:

**ՄԱՍՏՈՒ ՅԵՎ ՄԱՍ-ԿԱՅՆԱՏՈՒ ԱՆՍՈՒՆՆԵՐԻ ԱՐՏԱՍԱԿ-ՄԱՆՅԱՆ ՅԵՂԵՐԸ**

Իրենց կշտով, վորակով և արագ աճուժով լավագույնները համարվում են անգլիական մատուռ անասունները: Հատկապես լավ են համարվում ԵՐՏՅՈՒՆ յեվ ԵՆԵՑՈՒՆԵՐԸ ցեղերը:

Շորտգորն մատուռ անասունների հայրենիքը համարվում են Անգլիայի հյուսիսային շրջանները— Դուրգամբ և Յորկը: Շորտգորն անասունները ծագում են Դուրգամբ անասուններից և առաջ են յեկել բազմաթիվ տարիների ընթացքում լավագույն անասունների ջոկվելուց: Այս հոչակավոր ցեղի ծագումը պիտի վերադրել XVIII դարի վաթսուներեկան թվականներին:

Շորտգորնները մատուռ անասունների կուլտուրական ցեղ են և ամենից շատ են տարածված ամբողջ աշխարհում: Իս բացատրվում է այդ անասունների բացառիկ մատուցության վորակով և սերունդներին իրենց հատկությունները հաղորդելու ընդունակությամբ:

Շորտգորն<sup>2</sup> ցեղի անասուններն ուղղործվում են յերկու ուղղությամբ— մսագործական և մսա-կաթնագործական: Թե վորքան բարձր է այս ցեղի կաթնատվությունը, կարելի չէ դատել նրանից, վոր քիչ չեն այն դեպքերը, յերբ կաթնատվության կողմից շորտգորններն ամենաառաջին տեղն են բռնում:

Հյուսիսային Ամերիկայի, Ավստրալիայի և Հարավային Ամերիկայի տնտեսություններում հաճախ պատահում է, վոր շորտգորն կովերի տարեկան աված կաթն ավելի չի լինում չորս և նույնիսկ հինգ հազար կիլոգրամից, 4 տոկոս յուղի պարունակությամբ:

Շորտգորն անասունների առատ կաթնատվությունը բացատրվում է նրանով, վոր այդ ցեղի մեջ հոսում է աշխարհումս առաջին կաթնատու, հորանդական անասունների արյունը:

Հյուսիսային Ամերիկայի տնտեսություններում շորտգորն կաթնատու կովերը յեկամաբարության տեսակետից ավելի ձեռնառու չեն, քան սյուս ցեղերի կովերը և յետ են մնում միայն հողանրահաց և ջերզեյական կովերից:

Կաթնատու շորտգորն անասուններն առանձնապես արժեքավոր են նաև նրանով, վոր նրանք միևնույն ժամանակ լավ միս են տալիս և մսա-կաթնագործական տնտեսության համար ամենաձեռնառու ցեղն են հանդիսանում:

Հյուսիսային Ամերիկայում օակավ չեն այն դեպքերը, յերբ կաթնատու շորտգորն կովերը տարեկան տալիս են 5000 և ավելի կիլոգրամ կաթ և նրանց միջին կենդանի կշիռը հասնում է 580—600 կիլոգրամի:

Շորտգորնները գլխավորապես լինում են կարմիր գույնի, մույգ յերանգավորումներով: Նրանց զգալի մասը լինում է նաև կինամոնագույն, գորշագույն, կարմրավուն և այլն: Վերջին յերկու գույները հաճախ ունենում են կաթնատու շորտգորնները:

Կաշին փափուկ է, հաստ, ծածկված է բարակ ու յերկար մազերով: Յեղջյուրները կարճ են, հաստ, ուղղված են դեպի առաջ: Գլուխը թեթև է, լայնածակատ ու կարճ և լավ նստած է կարճ ու մոտ վզին: Լայն կրծքի առջևի մասը իջնում է պորտից ներքև և դուրս է գալիս վտաքերի առաջին գծից: Յերկար, խորը և կլորած իրանը, լայն, մըսոտ և ուղիղ մեջքով ունի քառակուսու նմանություն (յերկարածև ուղղանկյունի): Լայն, մոտ և յերկար յետույք, ցածր իջած ազդր-ճեղով: Հետքի վոսկրները կլորած են և լայն դասավորություն ունեն (տես նկար 3):



Նկ. 3-րդ -20 ամսական շորտգորն ցուլ, մսա-կաթնագործական տնտեսության կամար

Շորտգորնների, մասնավոր այդ ցեղի մատուռ անասունների միսը արտասահմանյան մսի շուկաներում շատ բարձր է գնահատվում: Նա աչքի չի ընկնում իր հյութալիությամբ, քնքուշությամբ և համեղությամբ: Կարելի է հիշեցնում է մարմարինը, վորովհետև ճարպանյութերը կուտակվում են մսի թելերի միջև և վոչ թե դրսից կամ տակից, ինչպես մեր տեղական անասուններինը:

Վոսկրատվությունը 20 տոկոսից ավելի չէ: Շորտգորն ցեղի զտարյուն ցուլերի կենդանի կշիռը 1000 կիլոգրամ է: Հին, ցեղային ցուլերը հաճախ ունենում են 1200 և ավելի կիլոգրամ կենդանի կշիռ:

Լավ ընտրված նախնիների շորագործն կովերի միջին կենդանի կշիռը հավասար է 580—600 կգ: Մսի կշիռը ճարպի հետ միասին հասնում է 62—65 և նույնիսկ 75 տոկոսի:

Լավ կերակրված 2 տարեկան մեռիաներ: Չիկագոյի սպանդանոցում հանձնվելու ժամանակ, միջին թվով ունենում են 600—620 կգ կենդանի կշիռ:

Շուքահանդեսային անասունները միշտ ավելի յն կշռում:

Անասունների շորագործն ցեղն իր արագ աճումով (2 տարեկան հասակում նրանք լիովին մեծացած են լինում), իրենց կշռով, կմախքի թեթևությունով, մկանների մեջ ճարպանյութի քանակությամբ, մսի կշռով, իրենց մարմնի ձևով, արագ չազանալու իրենց ընդունակությամբ և, վոր դիտարկում է, իրենց հասակությունները սերնդին հաղորդելու ընդունակությամբ արդարացիորեն համարվում են լավագույն յսատու անասուններն աշխարհում:

Մսատվութեան տեսակետից լավ են շորագործն կալմիկական մեռիաները: Մրանց միսը կարող է մրցել մսատու կուլտուրայան ցեղի անասունների մսի հետ:

Հերեֆորդ ցեղ: Հերեֆորդների հայրենիքը համարվում է հարավային Անգլիայի շրջանները: Հերեֆորդյան անասուններն ավելի քան ծագում ունեն, քան շորագործները—նրանք վերջիններից մոտ 50 տարի հետո յն առաջ յեկել: Իրանց տարածվածությամբ նրանք հասնում են շորագործներին: Այդ առանձնապես նկատելի յե Հարավային Ամերիկայում:

Այս ցեղն առաջ է յեկել տեղական անասուններից, հմուտ ընդարձության և պահվածքի միջոցով: Նրանք լինում են շիկագույն, մուշկ և բ ջ յերանգավորումով—դեղին շիկագույնից մինչև շիկագույն-կինամոնագույն: Վզի և վոտքերի վրա այդ գույները փոխվում են սև գույնի:

Հերեֆորդ անասունների մի ընտրոշ նշանը սպիտակ դուխն է, այս պատճառով Հյուսիսային Ամերիկայում նրանց անվանում են սպիտակազուխ:

Հերեֆորդների համար խիստ ընտրոշ են նաև սպիտակ բծերը վորովայնի, անուկների ու մեջքի վրա: Կրծքի, պոչի ծայրը և նրա մազերը միշտ լինում են սպիտակ:

Յեղչյուրներն սպիտակավուն-մոմագույն են, սև ծայրերով, վորոնք ուղղված են դեպի կողմերը, մի փոքր դեպի առաջ ու ներքև: Քթի պինչը պարզ, մաս-վարդագույն է: Իրանց յերկարացրած ուղղանկյան ձևով ունի վոտքերը բարակ են ու կարճ: Կաշին հաստ է, ունի միջակ պնդություն (պակաս փափուկ է, քան շորագործների կաշին): Մազերը կոպիտ են և կարճ:

Իրենց յերկարությունը ու բարձրությունը հերեֆորդները մի քիչ գիշում են շորագործներին: Նրանց գիշում են նաև իրանց կշռով, մանավանդ մեծ հասակում:

Հերեֆորդների միսն ավելի հյութալի յե, բայց այնպես յուղալի չէ, ինչպես շորագործները: Հերեֆորդյան կովերը և նրանց մեռիաները ցածր կաթնատվություն ունեն և այս կողմից խիստ յետ են մնում շորագործներից:

Հերեֆորդյան լավագույն ցուլերի միջին կենդանի կշիռը 850—900 կիլոգրամ է, միսայանների կշիռը—550 կիլոգրամ, միսայան հզորների կշիռը—400—480 կիլոգրամ (տես նկ. 4)



Նկ. 4-րդ—Հերեֆորդ ցեղի յերեֆ տարեկան ցուլ

Մսի միջին քաշը 65 տոկոս է: Լավ դերացված յեղներինը հասնում է 70 տոկոսի, ինչպես և շորագործները:

Շնորհիվ այն հանգամանքի, վոր հերեֆորդյան անասունները առաջ են յեկել բացառապես տեղական անասուններից, առանց խառնվելու մի ուրիշ ցեղի հետ, և անկցվել են նույնպիսի սակավ նպաստավոր պայմաններում, ինչպես և իրենց նախնիները,—նրանք բավականաչափ պիմացելու են և վոչ խստապահանջ: Հերեֆորդների մեջ յատ քիչ են լինում սուրբերկուլյոզով հիվանդներ:


Հերեֆորդները անտեսապես ավելի պիտոքական են, քան բնորոշ ու պահանջոտ շորագործները, իսկ այս հանգամանքն առանձնապես արժեքավոր է անասուններին պահելու մի պայմաններում:

Հերեֆորդների վոտքահաղմը ավելի ամուր է, վորի պատճառով նրանից առաջացած մեռիաները միշտ ուժեղ են լինում:

Հնրհնորդների այս բոլոր հատկութունները, նրանց դիմացկունութ-  
 թյունը, ասկոնությունը սրանց դարձնում են ավելի ոգտակար և  
 հարմար՝ մեր տափաստանային անասունների մասսայական մեռի-  
 սացման համար:

Արտասահմանյան մաս-կաթնատու ցեղերից Հյուսիսային Կովկա-  
 սում ոգտագործելու համար պետքական են համարվում նաև սիմմեն-  
 տայան և շվեցարական ցեղերը:

Սիմմենտայան ցեղը տարածված է գլխավորապես իր հայրե-  
 նիքում—Շվեցարիայում և ապա Արևմտյան Յեվրոպայի ուրիշ շատ  
 յերկրներում և մեղանում—Խորհրդային Միության մեջ:



Նկ. 5 բզ.—Սիմմենտայան ցեղի յերեմտարեկան ցուլ

Սիմմենտայի գլուխը լայն է, ավելի շատ ծանր է, քան բեթե,  
 և վորաբար սպիտակագույն: Ցուլերի հակառակ միշտ դանգրամազ է՝  
 պինչը, քիմքը, լեզուն և կնդակները բաց գույն ունեն: Կո-  
 վերի և յեղների յեղջյուրները յերկար են ու բարակ, ուղղված են  
 դեպի կողմերը, դեպի առաջ և վերև: Ցուլերի յեղջյուրները կարճ  
 են, ավելի բարակ և ուղղված են դեպի կողմերը, յեղջյուրները բաց  
 գույնի յեն: Ցուլերի պարանոցը հաստ է և կարճ, իսկ կովերի պարա-  
 նոցը յերկարությամբ և հաստությամբ միջակ է: Ուսը յերկար է և  
 լայն և աննկատելի միանում է մեջքին: Գավակը լայն է և յերկար,  
 նրան բարձր միացած է պոչը:

Լայն կուրծքն աննկատելիորին ձուլված է տակառածև իբանին:  
 Մեջքը յերկար է և հավասար: Վտաններն ուժեղ են և ունեն միջակ  
 կամ միջակից ավելի յերկարություն: Հետույքը մսոտ է, ցածր իջած  
 ազդրներով: Կաշին հաստ է, ճկուն: Գույնը հաճախակի կարմիր-դե-  
 դին է, բաց և մուգ յերանգավորումներով: Հարդանման, յերբեմն էլ

ապիտակ ու կարմիր գույներն ավելի հազվագույն են: Բոլոր զետե-  
 րում գույնը համատարած է, այլ խայտարեկա, զանազան մեծու-  
 թյամբ սպիտակ բծերով:

Ցուլերի միջին կենդանի կշիռը համարվում է 800—900 կիլոգ-  
 րամ: Հաճախ լինում են 1000 կիլոգրամից ծանր ցուլեր (տես նկ. 5):  
 Կովերը միջին թվով կշռում են 750 կիլոգրամ (650—850 կգ):

Սիմմենտայան անասունները համարվում են ունիվերսալ, վո-  
 ղովհետև նրանք հավասարաչափ բավարարում են բոլոր պահանջնե-  
 րին—նրանք թե կաթնավետ են, աշխատունակ և թե մաստուս: Այս  
 տեսակետից սիմմենտայները գերազանցում են բոլոր մյուս ցե-  
 ղերին:

Այս ցեղի անասունների առաջնակարգ հոտերում կովերը միջին  
 թվով տալիս են 4500 կիլոգրամ կաթ, վոչ ավելի, քան 4 տոկոս յու-  
 դի պարունակությամբ. հաճախ նաև 3,5—3,8 տոկոս: Լավագույն սիմ-  
 մենտայան կովերը տալիս են մինչև 6000 կիլոգրամ կաթ: Նրանց տը-  
 ված կաթի միջին չափը կարելի յե համարել 2500—3000 կգ: Սիմմեն-  
 տայներն արագ են աճում և 3 տարում լրիվ հասակ են առնում:

Սիմմենտայների գերանալու ունակությունը միջակից բարձր  
 է: Միսը բավականաչափ փափուկ և հյութալի յե: Միջակ գերության  
 դեպքում մսի կշիռը կազմում է կենդանու կշռի 52 տոկոսը, իսկ լավ  
 գերության դեպքում—55, յերբեմն ել 60 տոկոս (ճարպի հետ):

Սիմմենտայների մեռիդացիան կալմիկական և ուկրիանական  
 անասունների հետ՝ միշտ հրաշալի արդյունքներ ննտալիս: Լավ կերակ-  
 բած այդպիսի մեռիսները տալիս են ավելի քան 65 տոկոս միս: Ար-  
 տասահմանյան բոլոր ցեղերի սիմմենտայներն ամենից շատ են տա-  
 բածված Խորհրդային Միության մեջ, ուրեմն նաև մեղանում—Հյուսի-  
 սային Կովկասում:


Շվեցարական ցեղը պատկանում է յեռնային անասունների թը-  
 վին և իր հայրենիքում—Շվեցարիայում կոչվում է «կինամոնագույն  
 յեռնային անասուն»: Նա աչքի յե ընկնում լայն իրանով և ամուր  
 մկաներով, հաստ ու կարճ վոտներով: Կաշին հաստ է և պինդ: Գլուխը  
 մսոտ է, իր մեծությամբ միջակ, կարճ, բաց գույնի յեղջյուրներով,  
 վորոնց ծայրերը սև են, գավակը յերկար ու լայն: Մեջքը լայն է և  
 հավասար: Գույնը կինամոնի յե, շեկ-մոխրագույն կամ մուգ—կինա-  
 մոնագույն: Աչքերի շուրջը, մեջքի վրա և զննի ծայրին մազերը բաց  
 գույն ունեն: Հետույքը լայն է, ազդրները մսոտ, վոր շատ զնախա-  
 վում է իբրև մսոտության նշան (նկ. 6):

Իրենց կաթնատվությամբ շվեցարական կովերը քսան տոկոսով  
 գերազանցում են սիմմենտայներին: Կաթի մեջ պարունակված յուղը  
 միջին հազվով կազմում է 3,5—3,9 տոկոս:

Շվեցարական անասունը, շնորհիվ յերկար ժամանակ լեռնային արատատեղերում գտնվելուն, բավականաչափ դիմացկուն է դարձել և կոփել է իր առողջութունը նույն անձեղն տեսակետից շվեցարական անասունները յետ են մնում սիժմենտալներից: Տարբերութունը մեկ տարի յե:

Շվեցարական անասունների սշխատունակութունն ևս պակաս է սիժմենտալներից:

Շվեցարական անասունները ուկրաինականների (մանավանդ լեռնային տեսակետի) հետ խառնելիս շատ լավ մետիսներ են ստացվում: Սրանք լինում են խոշոր, մատ, մեծ կշռով, բարձր կաթնատվությամբ, չազանաչու ընդունակ: Նրանք լավ պաշտպանում են աշխատունակութունը և մեր անասուններին հատուկ դիմացկունութուն:



Այ. 6-րդ—Շվեցարական ցուլի ցուլ

նր: Կովկասյան կուրորտները և այդտեղի մի քանի ստանցիներում և առլներում կան բավական զգալի քանակությամբ այդպիսի մետիսներ: Ըստ տեղական բնակչության աված անդեկութունների, շվեցարական մետիսների կաթնատվութունը միջին թվով լավ կովերի վերաբերմամբ 2700 կիլոգրամ է, իսկ միջակների վերաբերմամբ—2200 կիլոգրամ:

Շվեցարական ցեղի ցուլերը կարող են մեծ հաջողությամբ ողտադործվել մեր ազգային մարզերի, մանավանդ չերքեսական, Կարաչայի և կարաբաղ-բալկարական անասունների ցեղը բարելավելու համար:

### ԻՆՉՊԵՍ ԲԱՐԵԱՎԵԼ ԱՆԱՍՈՒՆՆԵՐԻ ՏԵՂԱԿԱՆ ՑԵՂԸ

Հյուսիսային Կովկասում խոշոր յեղջուրավոր անասունների տարող հիմնական մասսան իրենից ներկայացնում է համեմատաբար մանր,

թեթև կշիռ ունեցող և ուշ աճող անասուններ, վորոնց արտադրողականութունը ցածր է: Ահա թե ինչու ապրանքային մտադրածական և մս-կաթնադործական անասնաբուծական կուրստեսութուններում ու ֆերմաներում զլխավոր հոգսի առարկան սլխաի դասնա անասունների բարելավումը: Մասյին և մս-կաթնային արտադրողականության բարելավումը, այսինքն անասունների կշռի ու կաթնատվության ավելացման և աճման արագացումն այստեղ անհետաձգելի աշխատանքն են հանդիսանում: Առանց դրան մենք չենք կարող շոշափելի արտադրանքներ ստանալ մասյին և մս-կաթնային անասուններ անձեղնելուց և չենք լուծի մեր բանվորական կենտրոններին եժտն և լավ վորակի միս մատակարարելու խնդիրը:

Գոյութուն ունի մի ամբողջ շարք գոտանիսիկական միջոցառումներ՝ անասունների ցեղը բարելավելու և նրանց մթերատվութունը բարձրացնելու ասպարիզում: Մենք կանգ կառնենք ամենահիմնական, ամենաձեռնառու միջոցառումների վրա, վորոնք կիրառելու յեն սոցիալիստական տնտեսության պայմաններում, անասունների մասսայական բարելավում մտցնելու համար:

Անասունների բարելավումը առանց ուրիշ ցեղը հետ բեղմնավորելու: Առաջին միակն է համարվում այն դեպքերում, յերբ պահանջվում է բարելավել մի վորեք ցեղի անասունները, վորոնք արժեքավոր են ավյալ վայրի համար և աչքի յեն ընկնում իրենց մի շարք դրական հատկություններով:

Այս ձևը ամենահարմարը կլինի կալմիկական և Սև ծովյան անասունների բարելավման համար: Այս ձևը նաև ամենահեժտն է, քանի վոր կարիք չկա գտնել արատասանյան թանգարժեք արտադրողներ: Բարելավման այս ձևը գործադրելու համար միշտ կգտնվեն բավականաչափ լավ ցուլեր մեր ցեղաբուծարաններում:

Զուգավորման ժամանակ կատարելով անասունների խնամքոտ ընարություն և մի առ մի խոտանելով բոլոր արատավոր անասուններին, յերբեմն կատարելով ազդակցական գուդավորում, այս ձևը ամենաճիշտ արդյունքը կտա, ամենից եժտն կխտի, թեպետ և գործը դանդաղ առաջ կգնա: Այս ձևը ամենից առաջ պետք է գործադրվի բոլոր ցեղային նախիրներում, վորոնց նպատակն է արտադրել ու անձեղնել ցեղերը, անասունների բարելավման նպատակով նրանց ողտադործելու համար:


Ընարություն կատարելու տեսիկական բարդ չէ և չի պահանջում առանձնապես մեծ դիտելիքներ: Անասնի կազմվածքը և նրա առանձին հատկությունների ճիշտ գնահատումը լավ ընարության աներթաժիշտ պայմանն է: Յուրաքանչյուր անասնաբուծական տնտեսության մեջ, վորտեղ կա ցեղային նախիր, բաղկացած լավագույն անասուն-

ներքից (ըստ նրանց տիպի և արտադրողականութան), կատարվում է-  
ինդիվիդուալ ընտրություն, այսինքն առանձին կովեր պուզավորվում  
են հատուկ նշանակված ցուլերի հետ:

Չուզավորման գրանցումներ կատարելը և ցեղային անասունների  
մատյանի վարելը պարտադիր է: Բոլոր կովերը պետք է համարակալ-  
վին (ամենից լավ է յեղջյուրների վրա համարներ նշանակել այր-  
վածքներով), իսկ ցուլերը պիտի ունենան անուններ: Ընտրություն  
կատարելիս, բացի կաղվածքից, ուշադրություն է դարձվում նաև  
կենդանու ծագման, նրա արտադրողականության, հասակի վրա և այլն:

**Մեթոդացիա:** Չանազան ցեղի կենդանիներին իրար հետ բեղմ-  
նավորելը կոչվում է մետիզացիա: Վերջինս լայն չափով գործադր-  
վում է այն դեպքերում, յերբ անհրաժեշտ է վորջան կարելի չե կարն  
ժամանակամիջոցում բարելավել և ավելացնել անասունների մթերա-  
տվությունը:

Վաղուց հայտնի չե այն մետիզացիան, վորը գործադրվում է  
անասունների մսի արտադրողականությունը բարելավելու և նրանց



Նկ. 7-րդ—Կուլտուրական ցեղի միջոցով տեղական  
ամառամերը բարելավելու արդյունքը

աճումն արագացնելու համար: Մասայական բարելավումների հա-  
մար նրա լայն գործադրությունը հայտնի չե անցյալ դարի 70-ական  
թվականներից, յերբ սկսվեց տեղական անասունների ուժեղ մետի-  
զացիան սկզբում Հյուսիսային Ամերիկայի Միացյալ Նահանգնե-  
րում, հետո նաև Հարավային Ամերիկայում: Մետիզացիայի միջոցով  
չբարելավված տեղական անասուններ այդ յերկրերում այլևս չկան: Այդ  
բացառվում է այն հսկայական ոգուտով, վորն ստացվում է թեթևա-  
կշիռ և ուրիշ հասունացող տեղական անասունների և անզլիական  
մասաու և շուտ անող անասունների մետիզացիայից:

Այստեղ զետեղած 7-րդ նկարը ցույց է տալիս Հյուսիսային  
Ամերիկայի տեղական ցեղի յեզան պատկերը, ապա մետիսի պատկերը,

վորն առաջ է յեկել տեղական կովերի և ներմադրչյան ցուլերի զուս-  
գավորումից: Բավական է նայել այդ նկարի վրա, վորպեսզի նամոզվե-  
թե ինչ մեծ նշանակություն ունի մետիզացիան: Բարձր յերկար վուս-  
նեքը դասել են կարն, կախ ընկած, կարն, սուր վուսկրանի և կոշտ  
հետույքը դարձել և յերկար, ուղիղ և մուտ, իսկ խոզուկ, վախտ և կարն  
ազդրը մուտ և ցած իջած: Յերկար ու ծանր գլուխը դարձել է կարն  
և իր թեթևությամբ միջակ: Յերկար ու նեղ պարանոցը—կարն ու  
լայն: Նեղ և անեղմասար մեջքի վախտներն ստացվել է ուղղիղ, լայն  
մեջք: Իսկ մետիսի իրանն ավելի յերկար է:

Հյուսիսային Ամերիկայի վորձնական կայանների սույալները  
հաստատում են, վոր այդպիսի մետիզացիայի հետևանքով առաջ են  
յեկել երաշտի մասաու անասուններ: Մետիսների արաջ ամուր յեր-  
կու անգամ գերազանցում է տեղական, չբարելավված անասունների  
տնտեսական արժեքավորությունը: Մետիսների մսի կշիռը կենդանի  
կշաի հանդեպ ավելացել է 25—20 տոկոսով, իսկ կենդանի կշիռը  
25—40 տոկոսով ավելի չե տեղական, չբարելավված անասնի կենդա-  
նի կշիռից:

Հյուսիս-Ամերիկյան անասնաբույժները մետիզացիայի գործու-  
տչիտատում են այսպես. նրանք շարունակ մետիսներին յառնում են  
ներմադրչների, շորագործների և այլ ցեղերի զուս աբյուսը և այդպես  
շարունակում են, մինչև վոր մետիսի արյան մեջ լիովին ընդունվի  
բարելավող ցեղի արյունը:

Մետիզացիայի այսպիսի մեթոդի շնորհիվ մի ջանի տերունդե-  
րից հետո ստացվում են լիարյուն կենդանիներ, այնպիսի մի մասաու-  
յական ցեղ, վորն ընդունակ է հաշտություն տեղադրել առ իր ժա-  
ուանգական նշանները: Այսպիսով առաջացած անասունները հասուկ  
ցեղ են համարվում միայն այն մասնակ, յերբ նրանք իրենց արյան  
մեջ ունենում են 127—128 մաս բարելավող ցեղի արյունից: Միայն  
այսպիսի արյուն ունեցող անասուններն են համարվում զուս ցեղու-  
յին և իրավունք ունեն գրանցվելու ցեղային անասունների մատյանում:  
Մետիսի գտարյուն կենչու աստիճանանով վորոշվում է նրա  
ցեղայնությունը և վորջան շառ զուս արյուն ունենա, այնքան ցե-  
ղային մաքրություն կունենա կենդանին:

Ուրիմակներ: 1) Կալմիկական կովի և շորագործն ցույթ գուգավորա-  
մից կատարվի կիսաշտարյուն, շորագործ—կալմիկական անասուն:  
Այդպիսի մետիսի գտարյունություն աստիճանը վորոշվում է հազարակ  
թվաբանական հաշվով —  $0 + 1 = 1 : 2 = 1/2$ : Ձիրոյով այստեղ նշանակ-  
ված 2 ընդունող արյունը (կալմիկական), մեկ թվանշանով—շորագոր-  
ծի արյունը: Այդպիսի զուգավորումից ստացվից կիսաշտարյուն  
կենդանի:

2) Գիսազաբյուն, շորտզորն—կարմիկական կովի և շորտզորնի զուգավորումից կլինի— $1\frac{1}{2} + 1 = 2\frac{1}{2} : 2 = 1\frac{1}{4}$ , այսինքն յերեք քառորդով զտաբյուն շորտզորն—կարմիկական անասուն, վորը համարվում և 2-րդ սերնդի մետիս:

3)  $\frac{3}{4} + 1 = 1\frac{3}{4} : 2 = \frac{7}{8}$  զուգավորումից ստացվում և 3-րդ սերնդի մետիս:

4)  $\frac{7}{8} + 1 = 1\frac{7}{8} : 2 = \frac{15}{16}$ —շորտզորն—կարմիկական մետիս, 4-րդ սերնդի:

5)  $\frac{15}{16} + 1 = 1\frac{15}{16} : 2 = \frac{31}{32}$ ,—մետիս 5-րդ սերնդի:

6)  $\frac{31}{32} + 1 = 1\frac{31}{32} : 2 = \frac{63}{64}$ —6-րդ սերնդի մետիս:

7)  $\frac{63}{64}$  զուգավորումի—ցեղային շորտզորն—կարմիկական կովից և շորտզորն ցուլից կստացվի  $\frac{127}{128}$  ցեղային անասունը, վորն ընդունված և համարել արդեն վոչ թե 7-րդ սերնդի մետիս, այլ զուտ ցեղային շորտզորն, վորն իրավունք ունի գրանցվելու շորտզորն տնասունների պետական ցեղային մատյանը: Մետիկացիայի միջոցով զուտ ցեղային անասուն, այսինքն 7-րդ սերնդի հորթ ստանալու համար հարկավոր և ճիշտ ջսան և վեց տարի Անասնաբուժական դործում մետիկացիա կատարելիս հորթը հաճախ նմանություն և ունենում զուտ ցեղային հոր կամ մոր հետ: Այդ նշանակում և, վոր զուտ ցեղային ծնողները ժառանգաբար տալիս են իրենց նշանները: Իսկ այն դեպքերում, յերբ զուգավորման համար ոգտագործում են մետիս-ցուլիքին, հորթը հաճախ նմանվում և կովին:

Մասնակի մեթոդացման մեկ: Անասունների արտադրողականությունը բարելավելու համար հանձնարարվում և նաև մի ձև, յերբ միայն մեկ անգամ զուգավորում և կատարվում լավ ցեղի անասնի հետ: Հետագայում զուգավորումը չի կրկնվում թեկուզ մի քանի տարի, մինչև վոր բարելավվող ցեղին փոխանցված մի կաթիլ արյունը անհետ կհաճանա նրա արյան մեջ:

Հանձնարարելի յի այս միջոցառումը կիրառել այն դեպքերում, յերբ պահանջվում և բարելավել արտադրողականության մի վորևե տեսակը, որինակ, արագ գիրանալու ընդունակությունը և այլն:

Հանրագումարելով մեր ասածները մասառ խոշոր յեղջյուրավոր անասունների ցեղի բարելավման միջոցների ու նշանակության մասին, կարևոր ենք համարում մի անդամ ևս կրկնել, վոր առանց լավ կերակրելու մատչառեթիմ, մամավանդ միջոցով մեկ օտեկան հորթից, բարելավման ուրիշ վոչ մի միջոց չի տա հարկավոր արդյունք: Այլ կերպ ասած՝ անասունների բարելավելու բոլոր յեղամակները գործադրելիս, լավ կերակրումը պարտադիր և:

## ԻՆՉ ԱՆԵԼ ԱՆԱՍՈՒՆՆԵՐԻՆ ԱՎԵԼԻ ԼԱՎ ԲՈՒՄԵԼՈՒ ԿԱՍՄ

Մեր առաջ կանգնած և մի խնդիր,—վորքան կարելի յի լավ ոգտագործել յերկրամասում յիդած մասառ և մաս-կաթնատու անասունները՝ հորթեր արտադրելու, նրանց հետագա աճեցման և անասունների բարելավման համար, այնպես, վոր ավելանա մասութիւնների ու կաթնամթերքների քանակությունը:

Կովերի մասաբայական ոգտագործման հարցը լուծվում և միայն զամայն նպաստավոր կերպով,—ապրանքային մատարձական և մաս-կաթնագործական ֆերմաների լախ ցանցի կազմակերպումով, վորոնց արտադրական-կազմակերպչական շրույթները պետք և սերտորեն կապված լինեն անասնաբուժության պարզացման ու բարելավման ընդհանուր պլանի հետ:

Ինչ վերաբերում և անասնաբուժության բարելավման միջոցառումներին, նրանք գործադրվում են ըստ այն հնարավորություններին, վորոնք կան այս կամ այն առիթով և նույնիսկ առանձին կուտակության մեջ: Նայած ցուցություն ունեցող անասնական պայմաններին, անհրաժեշտ և կանգ առնել բարելավման այս կամ այն յեղանակի վրա:

Բազմացվելիք անասունների մեջ ընդունվում են միայն այն անասունները, վորոնք հասել են սեռական հասունության:

Սոտոր, յեղջյուրավոր անասունների սեռական հասունությունը յերևան և գալիս՝ մեր տափաստանային ուշ աճող անասուններինը— $2\frac{1}{2}$ —3 տարում, յերինջներինը—2— $2\frac{1}{2}$  տարում. շուտ աճող կուտակութեան ցեղերի անասունների սեռական հասունությունը սկսվում և կես կամ մեկ տարի առաջ: Նույնպիսի տարբերություն կազող և լինել նայած նրան, թի ինչպես են պահվում ու կերակրվում մատչառները:

Յեթև անասուններն ավելի վաղ զուգավորվեն, նրանց նորմալ դարգացումը կտուժի: Հղիության դեպքում անասնի սննդի մի մասը ծախսվում և նրա պողի համար և այդ բանը հաճախ վնասակար և դեռ լավ չզարգացած կովին, վորը կարիք ունի լավ սնվելու և աճելու:

Այնպիսի ուշ կատարվող զուգավորումը նախ և առաջ տնտեսապես ձեռնառու չի, քանի վոր խոշոր կորչում և մի ամբողջ տարի Բացի դրանից, անասուններին ժուգվալ պահելը կարող և իջեցնել նրանց ծնունդը, առաջ բերել ոնանիդ և այլն:

## ՅԵՂԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ

Մատող և հասակավոր անասունների ցեղային ընտրություն կատարելիս, անհրաժեշտ և ղեկավարվել հետևյալ նշաններով:—

- 1) Անկեղծած ցեղը կամ տիպը:
- 2) Թեթև, կարճ և լայնածակառ գլուխ:
- 3) Հավասար ու լայն մեջք:
- 4) Հայն և ուժեղ կուրծք:
- 5) Հայն, յերկար ու մուտ հետույք:
- 6) Յերկար իշան, կլորացած կողերով և ծաղկաձև վորձավայրերով:
- 7) Բարակ կմախք և կարճ վուսներ:
- 8) Փափուկ, ձկուն կաշի:
- 9) Հանգիստ բնավորութուն:
- 10) (Հատկապես ցւլի վերաբերալ) կարճ և մուտ պարանոցը զարգացած մկաններ և նկատելի արիություն:

### ՅՈՒՆԻ ՈՐՏԱՎՈՐՄՈՒՄ ՅԵՎ ԶՈՒԳԱՎՈՐՄԱՆ ԱՅՎԵՐ

Յուլի բեռնվածությունը հարցը վճարում և տեղում, քանի վոր դրա համար պիտի գիտնալ զուգավորման ձևը, ցուլի հասակն ու զրուսթյունը, նրա սեռական ընդունակությունն՝ ըստ անցյալ զործունեության և այլն:

Այնուամենայնիվ, առողջ և ընդունակ, միջին հասակի ցուլի հետ կարելի չի զուգավորել հետևյալ քանակությամբ կովեր.— ձեռքի առկ զուգավորելիս՝ 60—80 կով, խմբովին զուգավորելիս՝ 30 և ավելի զուգավորման դեպքում՝ 20—25 կով: Ամուլ ցուլերը հազվադեպ յերևույթ են և մեր գործնական կյանքում չեն պատահել:

Յուլի պատրաստությունը զուգավորման համար նրանումն և կաշանում, վոր նա զուգավորման սեզոնից մեկ ամիս առաջ և հենց զուգավորման սեզոնում նա լավ և պահվում ու կերակրվում: Բավական և համարվում որական կերին ավելացնել 2—4 կիլոգրամ վարսակ: Տարվա մնացած ժամանակ ցուլերը պահվում են արածեցնելով, իսկ ձմեռը—խոտով: Յուլերին արձակ պահելիս չեն պահանջվում հատուկ զրուսանքներ, աշխատանք և այլն, բայց յերբ նրանք պահվում են մուսքներում, անհրաժեշտ և նրանց լծել թեթև աշխատանքի համար: հեծնել նրանց, կամ յերկարատև զրուսանքի զուրս բերել: Այս բոլորը առնում և ավելորդ հարապակման առաջը և նպատակ և ցուլի զուգավորման պատրաստ լինելուն: Մուսքի վրա պահելիս ամեն օր նրանց մաքրելը պարտադիր և:

Տնտեսական նկատառումներով անհրաժեշտ և, վոր կովերը ծնեն առջ օրերը վրա հասնելու և գարնանային թարմ, հյութալի կերք յերևույթ ժամանակ: Այս պատճառով ապրանքային մասզորմական տնտեսարանական ֆերմաներում զուգավորման սկիզբը լինում և հունիսի 1-ից: Զուգավորման կամպանիան տևում և 3 ամիս, նայած բնութագրության:

Ձեռքի (ընկերացած) զուգավորումը կանոնավորում և ցուլի սեռական զործողության հավասարաչափ ուղտադործումը և իրենից ներկայացնում և ցուլի ոգտագործման ամենախնայողական ձևը—ցուլն ազատադործվում և 7—8 և ավելի տարի: Այս ձևը կայանում և նրանում, վոր ցուլը առանձին և պահվում կովից և կովի մոտ և թողնվում միայն այն ժամանակ, յերբ այդ հարկավոր և: Որական զուգավորումների թիվը սահմանափակվում և, նայած ցուլի սեռական ընդունակության:

Զուգավորման համար անտեսություն մեջ հատկացվում և հատուկ տեղ, վոր ավելի, քան 100—150 քառակուսի մետր տարածությամբ: Յեթև կովը ընտելացրած և, նրան տանում են զուգավորման տեղը և սպասում ցուլին: Մրան թողնում են կապով: Զուգավորվելուց հետո ցուլին տանում են իր տեղը, իսկ կովին—նախրի մեջ: Զրնակացրած կովերին քրում են զուգավորման տեղը, վորտեղ թողնում են նշանակված ցուլը: Այդպիսի զուգավորումը պիտի տեղի ունենա համապատասխան պայմաններում: Մարդկանց բացակայություն և կատարյալ լուսթյուն—սրանք կանոնավոր զուգավորման անհրաժեշտ պայմաններն են:

Ձեռքի զուգավորման ամենալավ ժամանակը առավոտն և և յերեկոն, եով ժամանակ: Յուլը պետք և հարաբերություն ունենա որտեղից անգամից վոչ ավելի,—յերկու անգամ առավոտյան և յերկու անգամ յերեկոյան: Կովի համար, յերբ նա լավ ցանկություն ունի զուգավորման, սովորաբար բավական և համարվում վոչ ավելի, քան յերկու կրկնվող հարաբերություն՝ մեկ կամ յերկու ժամվա ընթացքում:

Ձեռքի զուգավորման դեպքում ամուլ կովերի առկառ միջին թվով ավելի չի 15-ից: Յեթև անասունները լավ խնամվեն, այդ տուկոսն ավելի կիջնի: Ինչ չեն այն դեպքերը, յերբ մի ամբողջ շաբաթ տարիների ընթացքում կովերի հորթիծնությունը հասնում և 60 տուկոսի և նույնիսկ մի փոքր ավելի: Յեթև կովերը հանգիստ են և միանգամայն ընտելացրած, իսկ ցուլը շատ ծանր կշիռ ունի, խորհուրդ և տրվում ձեռքի զուգավորման դեպքում ոգտադործել զուգավորման սարքով:

Ձեռքի զուգավորման առավելություններն ակներև են, սակայն գծրախտաբար այդ յիղանակով միշտ չի կարելի ոգտվել ապրանքային մասզորմական ֆերմաների պայմաններում, վորտեղ կան չընտելացված կովեր: Այսպիսի դեպքերում, պետք և գործադրել խմբական զուգավորումը:

Ձեռքի զուգավորումը պետք և կատարել վոչ միայն անասունների միացյալ խմբում, այլ և հետագործին չափ ավելի մի ցեղային:

նախընտան. մտնազանդ աշխ դեպքում, յերբ հարկավոր է խմանալ վոչ միայն զուգավորման և սպասակիք հորթեծնութեան ժամանակը, այլ և հորթի միշտ ծագումը:

Խմբակում զուգավորումը տվելի քիչ է նպատակահարմար, քանի վոր ցուլի ընտնվածութեանն անկանոն է լինում, նրա հնարգիտան վատնվում է ապարդյուն և հնարավոր չէ համապատասխան գրանցումներ կատարել զուգավորման ժամանակի, հարաբերութեաններ յառակի մասին և այլն: Զուգավորվելիք խմբերի ռնջ լինում է միջին թվով 30-ական կով: Ընտրվում են կազմվածքով ու տիպով միասնասակ կովեր: Այսպիսով ընտրված կովերի խումբը սպասարկվում է հատկապես նշանակված ցուլով:

Այս ձևի զուգավորման համար ոգտադրվող ցուլը մաշվում է իրոր տեղը և սովորաբար 3—5 տարից հետո այլևս անպետքանում է զուգավորման համար: Ինքն իրեն թողնված ցուլը չափից զուրս վատնում է իր ուշտերը և ապարդյուն հարաբերութեանն է ունենում կովի հետ: Հաճախ կապվում է կովերից մեկի հետ և մի քանի որերի ընթացքում հարաբերութեանն ունենում:

Յերկար ժամանակ գտնվելով կովերի մեջ, ցուլը լարված վիճակ է ապրում և շրային դրութեան հասնում: Նրա ախտործակը վատանում է, նա չափից զուրս նիհարում է:

Ցուլի վորեւ խնամքը կամ լավ կերակրելն այսպիսի դեպքերում քիչ արդյունք է տալիս, քանի վոր ժամանակավորապես խմբից բաժանվելով, նա սկսում է շրայնանալ, ձանձրանալ, նույնիսկ կործառե անջատման դեպքում, հրաժարվել կերից և այլն:

Ծնող կովերը միջին թվով կազմում են 85 տոկոս և ավելի:

Անասնաճնջի զուգավորում: Սրա ելութեանը կայանում է հետևյալում.—նշանակված անասնանոցում թողնում են ցուլին և նրան ժամանակ են տալիս հանգստանալու: Այնուհետև այնտեղ տանում են մի խումբ կովեր, վորոնք հատկապես ընտրված են այդ ցուլի հետ զուգավորվելու համար: Յերբ ցուլը մեկ-յերկու անգամ զուգավորվում է, նրան բաժանում են կովերից, տանում են իր տեղը, իսկ կովերին—արոտատեղ, վորը պետք է գտնվի վորքան կարելի չէ մոտիկ զուգավորման կայանին:

Զուգավորված կովերը չեն տարվում ցուլի մոտ մինչև այն ժամանակ, քանի դեռ նրանք ցանկութեան չեն ցույց տա դրա համար: Այսպիսի ձևով ցուլին ոգտադրվելը համարվում է ավելի միշտ և խնայողական (ցուլի ուշտը խնայող): Զուգավորման ժամանակը հեշտ է արձանագրել հետևապես հնարավոր է գիտենալ հորթեծնութեան ժամանակը:

Անասնանոցի զուգավորումը պետք է լայն չափով գործադրվի այն դեպքերում, յերբ կովերն ընտելացված չեն: Այսպիսի կովերի հետ ձեռքի

զուգավորում կատարելի է կարելի: Անասնանոցի զուգավորումը պիտի գործադրել նաև այն դեպքերում, յերբ ցուլը խիստ արթնքավոր է և նրա ոգտադրումը կովերի խմբում վտանգավոր է և անշահավետ: Այս զուգավորման ժամանակ զուգավորվող կովերի թիվը կարելի չէ հասցնել մինչև 40 և նույնիսկ 50-ի:

Իր ալված արդյունքներով անասնանոցի զուգավորումը պակաս է ձեռքի և խմբական զուգավորումից: Հորթեծին կովերի միջին տոկոսը 85-ից ավելի չէ:

Ազատ զուգավորում: Զուգավորման ամենամեծ անպետք է ձեռք համարվում է ազատ զուգավորումը: Նա կայանում է հետևյալում.—ցուլերը հուլիսի 1-ից մինչև արածեցման վերջը, այսինքն մինչև անասուններին գոմերում կերակրելը մնում են նախրի մեջ, նրանցից ամեն մեկին միջին թվով 20 կով է ընկնում: Զուգավորման և ցուլերի ոգտադրման այսպիսի ձևը հանձնարարելի չէ, վորովհետև ցուլերը քայքայվում են մի վորեւ 3—4 տարվա ընթացքում, հաճախ նույնիսկ ավելի շուտ:

Ազատ զուգավորման դեպքում ցուլերի պակասելը և նրանց անպետքանալը սովորական յերևույթ են, քանի վոր նրանք շարունակ կազմում են իրար հետ ու վնասվում: Ազատ զուգավորման ժամանակ հարաբերութեաններ են տեղի ունենում ազգակցական անասունների միջև, մի հանգամանք, վոր ցանկալի չէ և տալիս է մանր սերունդ: Այսպիսի զուգավորման դեպքում խոսք էլ չի կարող լինել առանձին անասունների ընտրութեան կատարելու, նրանց ծագումը հաշվի առնալու մասին: Մյուս կողմից, սակայն, ամուլ անասունների տակասնելու մասին:

Ցուլին ամենականոնավոր ոգտադրվելու հարցը մեզանում դեռ չէ լուծված: Մյուս կողմից, սակայն, ամուլ անասունների տակասնելու մասին: Մյուս կողմից, սակայն, ամուլ անասունների տակասնելու մասին: Մյուս կողմից, սակայն, ամուլ անասունների տակասնելու մասին:

### ԱՐԿԵՍԱՎԱՆ ԲԵՂՄԱՎՈՐՈՒՄ

Արկեստական բեղմնավորում կոչվում է անասունների բեղմնավորումն առանց սեռական հարաբերութեան: Արույի սերմը հատուկ պարագաների միջոցով մտցվում է ամոթքի մեջ և սրսկվում է արգանդի վրա:

Ինչ վերաբերում է բեղմնավորման այս ձևի գործնական նշանակությանը, վերջինս շատ մեծ է: Հնարավոր է վոչ պակաս, քան 8—10

անշատ կրճատել արուները քանակը Այդ արդեն ժողովրդական քանակը և համարվելու համար, թե ինչպիսի անհամեմատ ազտակարգութուն ունի արհեստական բեղմնավորումը:

Այս մեծ լայն կիրառման խոչնդու և հանդիսացել է այն հանգամանքը, վոր հնարավոր չի յեղել միաժամանակ ունենալ բավականաչափ թվով և հարաբերութուն ջանկացող եղեր, մի անգամից բեղմնավորելու համար: Այժմ, ազդանքային մասշտաբական և մաս-կաթնագործական Ֆերմաների պայմաններում լիակատար հնարավորութուն կա վերացնելու այդ պակասութունը: Արհեստական բեղմնավորումը մեծ գեր և խաղաղու անասնաբուժական ամուսնավորման սոցիալիստական վերակառուցման մեջ:

Աչքի առաջ ունենալով այն տեսակերը, վորոնք նշված են մեր մատու և մաս-կաթնատու անասունների ցեղը բարելավելու համար (մասսայական մետրիզիայի միջոցով), հազիվ թե հնարավոր կլինի իրադրծել պլանային դրույթներն՝ առանց լայնորեն զործադրելու անասունների արհեստական բեղմնավորումը:

Բեղմնավորման այս մեծ արդեն տարածվել է Ախարաձուխյան զարգացման ու բարելավման գործում և կասկածից դուրս է, վոր նրա զործադրութունը մեծ հաջողութուն կունենա նաև մասշտաբական անասնաբուժության զարգացման համար:

Արհեստական բեղմնավորման տեխնիկան բարդ չի, բայց և այնպես, մեծ ուշադրութուն և ճշտազանութուն է և պահանջում բոլոր զործողութունների կատարման ժամանակ: Այս աշխատանքը կարելի չի վատակել միայն մասնագետ անասնաբույժին:

Արհեստական բեղմնավորման արդյունքները ցույց տվին, վոր հորթերը ծնվում են իր ժամանակին, հղիության նորմալ ժամանակամիջոցն անցնելուց հետո: Հորթերը լինում են առողջ և ինքնուրույն լինելով չեն տարբերվում բնական բեղմնավորումից (սեռական հարսբերութուն միջոցով) ծնված հորթերից:

Վոր արհեստական բեղմնավորումը զործնական մեծ նշանակություն ունի, յերևում է Համախուժեցնական «Սկոտլոու» ակցիոններիական ընկերության ավյալներից: Այս ավյալների համաձայն, 1936 թվականին Հյուսիսային Կովկասի միայն 7 խորհամտուսություններում արհեստականորեն բեղմնավորվել է 8008 կով: Ամենահետադրեիրն այն է, վոր այդ բոլոր կովերից միայն 970-ն են նորից ցանկավորում զգացել և նրանց վրա կրկին արհեստական բեղմնավորում է կատարվել: Աչքի առաջ ունենալով մասնագետների պակասութունը և ընդհանրապես արհեստական բեղմնավորման նորութունը, նորից բեղմնավորման ցանկութուն զգացող անասունների այդ տոկոսը (12%) մեծ չէ:

«Սկոտլոու»-ի Հյուսիսային Կովկասի քաղաքային անդեկո-թյունների համաձայն, 1931 թվականի զուգավորման կամպանիայի ընթացքում արհեստական զուգավորման են յենթարկվել 10925 կով, կամ 24,5 տոկոս, արհեստականորեն բեղմնավորվել են 33,604 կով, այսինքն 75,6 տոկոս՝ կովերի ընդունուր քանակության հանդեպ:

Կովերի արտահոսութունը յերևում է մենուց 21—28 որ հետո և կրկնվում է նույնքան ժամանակ անցնելուց հետո, յեթե կովը չի բեղմնավորվել: Եթե կովը բեղմնավորվել է, արտահոսութունը չի կրկնվում: Բացառութուն լինում է միայն այն կովերի վերաբերմամբ վորոնք սեռական որոշումների հիվանդութուն ունեն, կամ հիվանդ են անբերկույտով: Այսպիսի կովերի արտահոսութունը կարող է լինել նաև բեղմնավորվելուց հետո, սակայն . այս յերևույթը նորմալ չէ:

Կովն արտահոսության ժամանակ անհանդիս է լինում: Սեռական որդանների արտաքին մասերը ուռչում են: Նկատվում է լուրձուների արտաթորում, կաթի քանակը պակասում է, արտաքին վատանուսի կովը թռչում է ուրիշ կովերի վրա, բառայում է և այլն:

Գծախուսութունը նրանումն է, վոր կովի արտահոսութունը յերբմե լինում է աննկատելի: Մա հաճախ ամուսնության պատճառ է գտնում և դրանից խուսափելու համար հարկավոր է հետևել մենու ժամանակին, դիտենալ այդ ժամանակը: Այս դեպքում գծվալ չի լինի նկատել նույնիսկ արտաքուստ աներևույթ արտահոսությունը:

Կովի արտահոսութունը տևում է 26—48 ժամ: Այս ժամկետը, ինչպես և վերոհիշյալ ժամկետերը, միայն մոտավոր ճշտութուն ունի: Հորթ արտադրել հարկավոր է վաղ հաճախ, քան 12 ամսից հետո: Եթե այդ ժամանակն ավելի կարճ լինի (10—11 ամս), կովի որդանիզը խիստ կթուլանա, վզրի շնորհիվ նրա արդանգի պաղի զարգացումն էլ անորմալ կլինի:

**ԱՐԿԱՍԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ. ԳՂԻՈՒԹՅՈՒՆ ՅԵՎ ՆՐԱ ՆՍԱՆՆԵՐԸ**

Անասնաբուժության հաջողութունը կախված է կովերի արգասավորությունից, նախքին մեջ յեղած ամուլ կովերի սակավությունից: Մատու անասնաբուժության մեջ կովի արգասավորութունը գլխավորապես նրա հորթեծնութունն է, հետևապես, զորքան արգասավոր լինի կովը, այնքան շատ յեկանուս կա: Արգասավորությանը պետք է մեծ նշանակություն տալ և հետևել, վոր նախքին մեջ ամուլ կովեր չլինեն: Նույնիսկ յեթե նախքին մեջ լինեն բուրբուրին առողջ, ցեղային ցուլեր, բոլոր կովերը կարող են չհղիանալ: Նրանց մի մասն ամուլ է մնում, քանի վոր չի բեղմնավորվում:

Ամուլներին մեծ տոկոս լինում է այն պեպքերում, յեյր նախքում գտնվում են դեռևս չզարգացած ցուլեր: Ին յերևույթ, վոր հա-

Հախ տեղ ունի մեր հասարակական նախիրներում Եւոյն դրուժյունն  
ե տիրում, յերբ ցուլերը լինում են պառակտած և շատ են ոգտագործ-  
վել բեղմնավորման համար: Նախիր մեջ պառակտ կովերի գոյութունն  
ևս ավելացնում է ամուլության դեպքերի թիվը: Սեռական անդամնե-  
րի պահասութուն (արգանդի սմբվելը, ծովելը և այլն) ունեցող կո-  
վերը միշտ անպատու է լինում:

Հասկանալի չէ, վոր քաղմացման համար այդպիսի կովեր պահել  
միտք չունի և անասնությունը վնաս կանի:

Կովերի ամուլության վրա ազդում են նաև նրանց պահելու պայ-  
մանները: Որինակի համար, պարզված է, վոր գոմերում պահվող կո-  
վերն ամուլության ավելի մեծ տոկոս են տալիս, քան արոսատեղե-  
րում պահվող կովերը: Մեր պայմաններում, յերբ մենք դիտավորա-  
պես գործ ունենք մաստու անասունների բուծման հետ, յերբ կովերը  
մեծ մասամբ գտնվում են ազատ արոսատեղերում, իսկ մնացած քիչ  
ժամանակամիջոցում—անասնանոցներում, ամուլների տոկոսը կարելի  
չէ պահանջներ մինչև մինիմում: Հայտնի չէ մեզ, վոր կովերը շարու-  
նակ արոսատեղերում պահելով, հորթեծիկները տոկոսը հաճախ հաս-  
նում է մինչև 90 և նույնիսկ 95 տոկոսի:

Ինչպես հայտնի չէ, կովը տարեկան ծնում է մեկ հորթ, իսկ  
յերկու հորթ ծնելը հազվադեպ է: Ուստի շատ կարևոր է, վոր կովը  
լինի արդասավոր և բեղմնավորվի, ամուլ չմնա: Հորթեծիկ կովերի տո-  
կոսը հնարավորին չափ բարձրացնելու համար պետք է ձեռք առնել  
բոլոր հնարավոր միջոցները:

Առաջինը, վորի վրա պետք է ուշադրութուն դարձնել, դա  
ցուլերի հասակն ու նրանց դրությունն է: Միևնույնը պիտի ա-  
սել նա կովերի վերաբերմամբ: Մեկ լիահասակ ցուլի բեռնվածու-  
թյունը մեր հիշած չափից ավելի չպիտի լինի: Այն բոլոր կովերը,  
վորոնք ամուլ են մնում 2—3 տարվա ընթացքում, պետք է հեռացվեն  
նախրից:

Առհասարակ, ծնու կովերի նախիրը պետք է բաղկացած լինի  
միտնգամայն առողջ և նորմալ զարգացած կովերից: Կործնական  
կյանքը ցուլց է տալիս, վոր ծնու կովերի տոկոսն ավելացնելու հա-  
մար մեծ նշանակութուն ունի հետևյալը.—յերբ ջահել ցուլերը գու-  
րավորվում են լիահասակ և նույնիսկ պառակտ կովերի հետ, իսկ յե-  
րինջներն և առհասարակ, ջահել կովերը—պառակտ ցուլերի հետ:

Կովերի հղությունը սովորաբար տևում է 9 ամիս: Մասսայա-  
կան դիտողությունները ցուլց են տալիս, վոր հղության շրջանը  
լինում է 270—280 օր: Ամենակարճ շրջանը կարող է լինել 230 օր  
իսկ ամենայերկարը—320 օր: Այս ավյալները վերցված են մոստա-  
վոր ճշտությամբ:

Կործնական կյանքը նաև ցուլց է տվել, վոր արու հորթեր ծնող  
կովերը—տասն օր ավելի ուշ են ծնում, քան եղ հորթեր ծնողները:

Հղությունն սկսվում է սաղմնավորման մոմենտից և վերջանում  
ծնելով: Հղության նշանները շատ են, քայց նրանց մեծ մասը հիշա-  
տ է: Ամենահիշտ նշանների թվին պատկանում են հետևյալները.—

- 1) Արդեն բեղմնավորված կովը դաշտան (արտահոսություն) չի  
ունենում:
- 2) Հղության յերկրորդ կեսում փորը մեծանում է:
- 3) Կուրծը ուռչում է և պտուկները վրա կաշուն հեղուկ է լինում:
- 4) Պարզ կարելի չէ շոշափել հորթը (վոչ շուտ, քան հղության  
7-րդ ամսում):
- 5) Կաթի պահասելը:
- 6) Չզույշ շարժումները և այլն:

Հղության ստուգման լավ միջոց է հորթը շոշափելը կովի աջ  
անուկում: Ավելի լավ է շոշափել այն ժամանակ, յերբ կովը քաղցած է:

Հղի (ծանրած) կովերը պետք է պահվեն վորքան կարելի չէ լավ:  
Զպետք է մոռանալ, վոր հորթերի ուժեղ կերակրումը պիտի սկսվի  
այն մոմենտից, յերբ պտուղը գտնվում է դեռ մոր արգանդում: Մեռ  
կովերի կերակրումը պիտի նպաստե պաղի կանոնավոր դարգացման:  
Կոմս անբավարար կերակրվելով, լավ դարգացած հորթ չի ձևի:  
Կերակրման ընդհատումները և ծլատ կերակրումը խոշոր չափով դան-  
դաղեցնում են անասունների բարելավման տեմպերը: Հղի կովերի կերը  
պիտի ավելացնել ձմեռային կերակրման անցնելու սկզբից—յուրա-  
քանչյուր կովին մեկ կերի միավոր:

Սոսոր, առհասարակ բոլոր կերասվեքներն, ինչպես նաև տակը  
փոխու հարդը,—անպայման պետք է լավ վորակի լինեն: Հոտած, նեխ-  
ված, բորբոսնած կերն ու տակի փոխվածքը հաճախ վիժման պատճառ  
են դառնում: Զի կարելի գործածել փչացած ձգոտ ու հարգ վոչ կերի,  
վոչ էլ տակի փոխվածքի համար:

Ամենավաճառագավոր ժամանակը, յերբ հաճախակի վիժումներ են  
լինում, դա հղության վեցերորդ և ութերորդ ամիսն է: Այդ նույն  
ամիսներում էլ լինում է վաղածամ հորթեծնություն: Վիժումները մեծ  
չարիք են, նրանց դեմ պետք է ամեն կերպ կովել և վերացնել նրանց  
պատճառները: Վիժումների պատճառած վնասներն անհաշիվ են: Զի  
կարելի սահմանափակվել միայն հորթի կորուստը հաշվելով, քանի վոր  
հարկավոր է հաշվել նաև այն, վոր կովը մի ամբողջ տարի չի ոգտա-  
գործվել: Վիժումներից կարող է նաև կորչել (մեռնել) կովը, յեթե նը-  
բանք բարդություններ առաջ բերեն:

Ահա թե ինչու հղի կովերի լնամբը պետք է կանաչաբարել ամե-  
նապիտակից, փորձված և գործին հավատարիմ կորուստեսականների:

Ազգայնաբար իրարանցումը, դաներից գուրա ու ներս անհրիս, ջրեկիս, կեր  
տալիս անասունների իրար սեղմվելը, ծեծը, վերավորելը և այլն—  
այս բոլորն անպատիժ չեն մնում և հաճախ վիժումների պատճառ են  
գառնում:

Բացի այսպիսի վիժումներից, լինում են նաև ընդհանուր վիժում-  
ներ, վորոնց պատճառը լինում է արգանդի վարակումը: Ընդհանուր  
վիժումները մեծ փորձանք են, վորոնց վերացումը հեշտ չէ:

Առայժմ անասնաբուժության այդ ցեղի դեմ պայքարի ձևեր չեն  
մշակված: Ենթաց դեմ միանգամայն հուսալի միջոցներ չկան: Հավա-  
քույն միջոցը գոմերի և անասնանոցների արտահանումն է կարգույան  
յուժարթով, վորով կարելի չի կանխել վիժումները:

### ՀՈՐԹԵՆՆՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԸ

Հորթեծնության ամենալավ ժամանակը պիտի համարել արեւային  
տաք յեղանակների սկսվելը և հյութալի, մատուղ բուսականության  
յերևան գալը: Հորթի զարգացման համար այդ ժամանակներն ամենից  
հարմար են: Նորածին-հորթի համար շատ ոգտակար է մոր ատառ կա-  
թով և թարմ, կանաչ կերով սնվելը: Թարմ ողում միշտ շարժման մեջ  
լինելով, տափաստանային թարմ բուսականությամբ սնվելով, հորթը  
ատոզ կլինի և կանի լավ պայմաններում: Այսպիսի պահվածքը խիստ  
լավ ազդեցություն է ունենում հորթի վտակորների և ամբողջ որգա-  
նիզմի կազմվածքի վրա: Կ

Բացի գրանից, գարնանային հորթեծնությունը դերադասելի չէ  
նաև անտեսական նկատառումներով, — կարիք չի լինի ծախսեր անել  
հորթեծնության համար հատուկ, թանկարժեք շենքերի վրա, վորոնք  
կատուցվում են տարվա ցուրտ յեղանակների համար:

Հորթեծնության նշանները յերկունքի շղացություններն են ու  
ցավը: Կովը ծնում է պառկած տեղը և ծնելուց հետո խսկույն վտոջի  
յե կանգնում: Այդ մոմենտին կտրվում է պորտի թելը: Նորմալ ծննդի  
դեպքում ծինը գուրա և զալիս 5—6 ժամից հետո: Յերբեմն էլ ծինը մի  
քանի որ չի գուրա զալիս և նեխվում է արգանդում: Սրանից թարա-  
խակալումներ են առաջանում ներքին որգաններում և հաճախ վերջա-  
նում են կովի արյան վարակումով ու մահով: Հասկանալի չէ, վոր  
բոլոր այսպիսի դեպքերում անհրաժեշտ է դիմել անասնաբույժին:

Իշտանում հորթեծնություն լինելիս կովի հոգասարությունը  
նրանումն է կաթնում, վոր նա չկորցնի նորածին, ինչպես այդ հա-  
ճախ լինում է ջահել, նորածին կովերի հետ: Անհաջող ծննդի դեպ-  
քում կովապաններն անմիջապես իմաց են տալիս անասնաբույժին  
կամ նրա սզնականին:

### Կ Ե Ր Ի Բ Ա Ջ Ե

Ճիշտ այնպես, ինչպես արդյունաբերության զարգացման համար  
հարկավոր է վառելիք, անասնաբուժության զարգացման ու բարելավ-  
ման համար ևս հարկավոր է բավականաչափ քանակությամբ կեր, վո-  
րը նույնպես մի առանձին, հատուկ վառելիք է:

Մենք գիտենք, վոր շատ զարերի ընթացքում և մինչև այսօր  
անասնաբուժության զարգացման գլխավոր արգելիչը յեղել է կերի  
հարցը: Վերջինս բավարար չափով լուծված չէ նաև մինչև այսօր: Բա-  
վականաչափ քանակությամբ կերի բացակայությունը անասունների  
վաղնչացման պատճառ է յեղել:

Արագ անձան և արդյունավետության տեսակետից մեր մաստա-  
նասունների ցածր վորակը զգալի չափով բացատրվում է կերի պա-  
կասությունը և նրա վատ վորակով: Մսի խնդրի լուծումն ուղղակի  
կախված է կերի խնդրի լուծումից, կերի ուժեղ բազա ստեղծելուց:

Ապրանքային, մագործական անասնաբուժության սոցիալիտա-  
կան վերակառուցման գլխավոր հիմքը կերի ուժեղ բազան է: Նրա  
ստեղծման համար պետք է իր ժամանակին նախատեսել և ճշտությամբ  
հաշվի առնել վոր միայն կերի սլահանջը, այլ և նրա արտադրությու-  
ն ու մթերումը— անպայման հենց ավելի կուլտուրայի մեջ: Չի կա-  
րելի հույս դնել որսից եժան կեր գնելու վրա, ինչպես և չի կարելի  
տրանսպորտը բեռնավորել այն կերամթերքների փոխադրությամբ, վո-  
րոնք կարելի չէ արտադրել ավելի կուլտուրայի մեջ: Նրա համար  
հարկավոր է ավելացնել կերարույանի սարածությունները, մտցնել  
նոր կուլտուրաներ և բարձրացնել կերարույանի խնամքի վորակը,  
վորով կբարձրանա բերքը, կբարձրանա ստացվող կերի վորակը:

Թե վորքան մեծ է կերի հարցի ճիշտ լուծման նշանակությունը,  
այդ մասին շեշտեց ԽՍՀՄ յերկրագործության Ժողկոմ ընկ. Սահակե-  
վը կուսակցության 10-րդ համագումարում:—

«Մսի յեղ կարի գործածությունը կրկնապատկելու խնդրի լուծման  
համար հարկավոր է մեկ ու կես անգամ ավելացնել մեր յերկրի կերի  
պատահները: Չպե՛տ է մոռանալ, վոր այժմյան կերերն ավելի քան յե-  
կու յերբողով բազիացած են կոտ կերերից, այսինքն յսոսից, հորդից,  
մզոզից յեղ այլն, այն ժամանակ, յերբ մսի ու կարի մեկնայի արդյու-  
նավե սոխաթանի համար պահանջվում է վոչ պակաս, քան յերկու-  
յերբող մաս ուժիղ յեղ ճյուրայի կերերն:»

Բերքի հավաքումն ու պահպանումը անտեսական մեծ նշանակու-  
թյուն ունի: Պահպանման ճիշտ կազմակերպումը և իր ժամանակին  
կատարված բերքահավաքը խիստ դրական ազդեցություն են ունե-  
նում բերքի ավելի մթերքի վորակի ու քանակի վրա:

Մարքավորել պահեստները, ունենալ բավականաչափ քանակով ու վորակով գործիքներ ու մեքենաներ բերքահավաքման ու բերքամշակման համար—սա մի հարց է, վորն անաղին անտեսական նշանակութուն ունի:

Յեթն մինչև այժմ ծղոտն ու հարվը անասնաբուժական տնտեսությունների մեծ մասում հանդիպակ էն իբրև հիմնական կեր, չեթե արոտատեղերը ցանքերի համար վարելու շնորհիվ կրճատվել է անասնապահութունը, ապա այդ միայն այն պատճառով, վոր կերի հայթայթման հարցերին բավականաչափ ուշադրություն չի դարձվել: Հենց միայն այն հանգամանքը, վոր յերկրամասում ցանովի խոտերի և արևատապառույնների ցանքերի տարածությունը կաղմել է բոլոր ցանքերի միայն 2 տոկոսը,—հենց միայն այս հանգամանքը պարզ ցույց է տալիս, վոր մեղանում ուշադրություն չի դարձվել կերի հայթայթման վրա:

Այսպիսով մենք տեսնում ենք, վոր կերի բազան է վիճակի չի յեղել ապահովել մեր անասնաբուժության կանոնավոր զարգացումը և բարելավումը: Յեվ, վորովհետև անասնաբուժության սոցիալիստական վերակառուցման հիմքը կաղմում է թե անասունների թվի ավելացումը և թե մեկերտովության վորակային բարելավումը, ուստի ինքն ըստ ինքյան հասկանալի յե, վոր կերի հայթայթման հարցերի վրա պետք է կենտրոնանա անասնաբուժական ապրանքային փերմաների բացառիկ ուշադրությունը:

Մասաու անասունների ցեղի բարելավումը, մանավանդ նրանց մետիւկցման յենթարկելով կուլտուրական մասաու ցեղի անասունների հետ, առանց սեռիսներին ինչպես հարկն է կերակրելու, չի հասնի իր նպատակին: Առանց լավ կերակրելու չի կարելի շոշափելի արդյունքներ սպասել նաև զոոտեխնիկական այլ միջոցառումների գործադրությունից:

Մասնաշար անասունների կերակրման բարելավումը միշտ տալիս է դրական հետևանք: Այդ բանը մենք բոլորս զիտենք մեր տեղական անասունների մաստվություն ու կաթնատվություն բարձրացման որինակներից: Կալմիկական և զորը, տափաստանային մասնաշար անասունները կանոնավոր կերակրվելով, ունենում են մինչև 2,5, յերբեմն էլ մինչև 4 ցենտներ կենդանի կշիւ, այսինքն կալմիկական կովի միջին կշիւի չափ: Կանոնավոր կերակրման ավելի բնորոշ օրինակ է ցույց տալիս Ուկրաինայում հայտնի գերմանական կարճիր «Մրիա» կոչված կովի մեկերտովությունը: Յերբ այս կովը գտնվում էր իր մեծատնտեսություն, միջակ դյուրացու մոտ, տարեկան տալիս էր 3000 լիտր կաթ, իսկ յերբ պետական ցեղաբուծարանը ձեռք բերեց այս կովը և կանոնավոր կերակրեց ու պահեց, «Մրիան» սկսեց տալ տարեկան 11,000 լիտր կաթ:

Բայժը մեծաքանակութուն ունեցող մասաու խոշոր յեղջրուրավոր անասունների բուժման ասպարիզում Արևմտյան Յելրոպայի, մանավանդ Անգլիայի ու Ամերիկայի նվաճումներն արդյունք են մասամբ լավ կերակրելու: Անգլիայում ասում են, վոր «անասունների լավ ցեղն լավ կերակրելու»: Այդ յերկրներում կերի հայթայթման խնդիրներին մեծ ուշադրություն է դարձվում: Անգլիայում կերարույների ցանքերի տարածությունը կաղմում է ամբողջ ցանքերի տարածության 60 տոկոսը: Հյուսիսային Ամերիկայում այդ տոկոսը հասնում է 50-ի և այն: Այստեղ մեկ հարկավոր է ոգտագործել Արևմտյան Յելրոպայի, մանավանդ Հյուսիսային Ամերիկայի փորձը:

Մեր հացահատիկային խորհրդատեսություններում ու կուլտեսություններում, մեր արամադրության տակ կա հարգի և մղիղի խոշոր պաշար և այդ սակավորմեք կերերը մենք պիտի ողտագործենք մեծաքանակությամբ և վորոշ քանակով ուժեղ կեր ավելացնելու միջոցով:

Ուժեղ կերեր արտադրելու տեսակետից Հյուսիսային Գովկասը գտնվում է բացառիկ նպաստավոր պայմաններում: Այսպես, որինակ, մի այնպիսի արժեքավոր ու սննդարար կեր, ինչպիսին է յեղիպտոսի ցորենը, համարյա մեր յերկրամասի բոլոր մասերում մշտական բերք է տալիս: Նա շատ լավ բերք է տալիս նույնիսկ այնպիսի չորային վայրերում, ինչպիսին է Փրիկոմակի ուսյունը, վորտեղ յեղիպտոսորեկայրերում, ինչպիսին է Փրիկոմակի ուսյունը, վորտեղ յեղիպտոսորեկայրերում միջին բերքը 16 ցենտներ է (1 հեկտ.): Միայն արևելյան Թաննանի միջին բերքը 16 ցենտներ է (1 հեկտ.): Միայն արևելյան Թաննանի չոր ուսյուններում յեղիպտոսորեկայրերը մշտական ու բարձր չի լինում:

Ամերիկացիք միանգամայն արդարացի կերպով յեղիպտոսորենն անվանում են «երաջը բույս»: Յեվ այդ վոչ միայն նրա համար, վոր յեղիպտոսորենի բերքն ավելի կայուն է, քան մյուս բույսերի բերքը, այլ նրա համար, վոր յեղիպտոսորենը ամեն տեսակ վիճակում — թե վորպես արածելի կեր, թե խոտ, թե հատիկ և թե սիլոսացված կեր, շատ բարձր արժանիքներ ունի:

Յեղիպտոսորենի ցանքերի ոգտակարությունն ակնհայտ է. նրան կարելի յե լայն չափով ոգտագործել նաև վորպես անասունների կեր: Մասաու անասուններին լավ կերակրելու և անեցնելու համար նաև հարկավոր են հյութալի կերեր (ճակնդեղ, դուղձա և սիլոս) որ իժբախտաբար արմատապառույնները շոշափելի արդյունք չենք տալիս մասաու անասնաբուժության մի շարք ուսյուններում: Այստեղ պետք է լայն չափով ոգտագործել սիլոսացված կերերը:

Խոտը, վորպես հիմնական կեր, մասաու անասնաբուժության համար անհրաժեշտ է, մանավանդ յերկրամասի արևելյան, չորային

ույնքանքան Լազարու Կաթին ցանկերն այստեղ այնքան քիչ են, վոր չի կարելի հույս դնել հարդն ու մղեղը գեթ փոքր չափով ոգտազործելու վրա: Խոտերի բերքատվութիւնը սարեցատարի պակասամ է, շնորհիվ այն բանի, վոր նրանք շարունակ են միջուկն սերմերի հասունանալը: Եւստ ոգտակար, վայրի խոտերը բոլորովին փոխվել են ու չքացել, իսկ նրանց փոխարեն յերևացել են մայախոտերը և այլն: Անհրաժեշտ է դարձել բարելավել բնական խոտհարքներն ու կիրառույսերի ցանքերը: Միայն այս նախապայտով կարելի լի կերի կայուն բաղա ստեղծել անասնաբուժական կոլտնտեսութիւններում:

Վորքան յերկար տեի անասունների արածելու շրջանը, աքիքան մեռնաու յե նրանց պահելը և այնքան պակաս կլինի արտադրվող մատղաշների ինքնարժեքը:

Միայն այն դեպքում, յերբ արտադրվի ու մթերվի պահանջվող քանակութեամբ կեր, կարելի լի կանխել կերի պակասութեան գեղքերը և այն հետևանքները, վոր սովորաբար պատահում են կերի պատրաստման և նրա պահանջի միջև կապակցութեան չլինելուց: Մրանից խուսափելու համար հարկավոր է նախատեսել յեղած խոտհարքի ու արոտատեղերի չափը և գործադրել նրանց բարելավման և ոգտազործման ամենանպատակաւոր մեղքը:

Խոտերի ցանը, կոշտ, խոպան ասփստանները ցաքանելը, ինչպես և նրանց կանոնավոր ոգտազործումը—անա արոտատեղերի և խոտհարքների բերքատվութեան բարձրացման հիմնական մեղքը: Եւստ ոգտակար և այս դեպքում հետեւել ամերիկական անասնաբույժների որինակին: Բնական, խոպան և հին, յերկարամյա հանգստի թողած արոտատեղերը վերականգնելու և նրանց բերքը բարձրացնելու համար, նրանց մեկ կինգերորդ կամ մեկ վեցերորդ մասը չեն ոգտազործում մինչև ուշ աշուն: Այսպիսով բոլոր բույսերի սերմերը քրելով նասունանում են և իրենք իրենց ցանվում: Մրանով ինարկի բարելավվում և արոտատեղերի բերքատվութիւնը: Բնական արոտատեղերի ու խոտհարքների բերքի ավելացման այս մեղ պետք է կիրառվի նաև Լյուսիտային Կովկասում:

Կերաբույսերը պետք է ցանել իր ժամանակին, մանրակրկիտ խնամել, ինչպես և իր ժամանակին հնձել խոտը: Կերաբույսերը իր ժամանակին ցանելը, խնամելն ու նրանց բերքի հաճաքումը մեծ ազդեցութեան են ունենում բերքի քանակի ու վորակի վրա:

Կերի կանոնավոր պահպանումն ու խնայողաբար ծախսումը, բերքահավաքման, սեղափոխման և անասուններին չբաժանելու ժամանակ կորստների վերացումը պետք է ամեն կերպ խրախուսվի յոտաբուժանչուր կոլտնտեսութեան մեղ: Պետք է սխտեմատիկաբար բնա-

մթերքային ու դրամական պարզկներ ապ այն կոլտնտեսականներին, վորոնք խնայողական և ուշադիր վերաբերմունք են ցույց տալիս դեպի կերի ծախսումը:

Հարկավոր է կանոնավոր կազմակերպել արոտատեղերի և կերերի ոգտազործումը, միշտ նախատեսել, թե այս կամ այն սեղոնում կերի ինչ պաշարներ կարող են լինել, սահմանել առանձին սեղոնային կերերի հերթով ոգտազործման կարգը:

Բացի այն, վոր սեփական տնտեսութեան մեղ պետք է ոգտազործել սեղոնային, արոտավայրերի կերերը (խոպան հողեր, կոշտ ու փափուկ, յերկարամյա հանգստի թողած հողեր, քոլեր, խողաններ) անհրաժեշտ է հաշվի առնել մտաւա հացահատիկային խորհտեսութիւններին ու կոլտնտեսութեանների տնտեսութիւններում յեղած այնպիսի արոտատեղերի ոգտազործման հնարավորութիւնը, ինչպիսին են՝ հնձած արոտավայրերը, խողանը:

Անհրաժեշտ է նաև իր ժամանակին մշակել ու սահմանել կոշտ, հյութալի և ուժեղ կերերի բաշխման կարգը և ոգտազործման հերթականութիւնը:

### Կ Ե Բ Ը

Կերի հայթայթման և ոգտազործման հարցերը առաջնակարգ նշանակութիւն ունեն և պետք է լուծվին առաջին հերթին: Առանց կերի կայուն բաղա ստեղծելու, վորն ապահովում է սեր ուշ ամող և սակավ արտադրողական մասուռ անասունների կերակրման բարելավումը.—չի կարող խոք լինել անասնաբուժութեան զարգացման մասին: Չի կարելի սպասել, վոր կոլտնտեսային ապրանքային մասուռ և մաս կախնատու անասնաբուժութիւնը հաջողութեամբ զարգանա գոյութեան ունեցող կերի պաշարներով: Առանց ուժեղ և հյութալի կերերի գործածութեան, անկարելի լի նպատակահարմար կերակրվող ոգտազործել այնպիսի կոշտ կերերն, ինչպիսին են հարդն ու մղեղը:

Մեր ապրանքային մատուցողական և մաս կախնազործական ֆերմաները պարտավոր են առաջին հերթին կերի հայթայթումով զբաղվել հենց կոլտնտեսութեանների ներսում: Իրա համար մենք առաջարկում ենք հետևյալ, առաջիկ հեշտ և իրական միջոցառումները.—

- 1) Ստեղծել կերաբույսերի սերմնաբուժարաններ՝ համապատասխան դայոնական կազմակերպութիւնների առաջադրութիւնների համաձայն:
- 2) Տնտեսութիւնն ապահովել սիլոսային կառուցումներով ու շինքերով:
- 3) Լայնորեն կիրառել սիլոսացված կերերի մթերումը:
- 4) Բարելավել արոտատեղերն ու խոտհարքները:

Յ) Յանքաշրջանառութեան մեջ մտցնել միամյա և բազմամյա կերպարույթերի ցանցերը, յեղիպտացորենը, սորդոն և այնտեղ, վորտեղ հնարավոր է,—կերի ձակնդեղը, դուզման և այլն:

Շ) Հետևել արտաստեղերի կանոնավոր ոգտագործման և այլն: Այս միջոցառումների կիրառումն անկասկած կլինուցնի յերաշտի կործանարար ազդեցութեանը և կկանխե հաճախ տեղի ունեցած կերի սուր պահասութեանը:

Կոշտ, ուժեղ և հյուսթալի կերերի բազայի ստեղծումը անհրաժեշտ չափով կամրապնդի ապրանքային մագործական և մաս- կաթնագործական անասնաբուժական Ֆերմաները և կլուծե մաստու ա- նասնաբուժության դարգացման հիմնական հարցը:

Մեզանում հիմնական կոշտ կերը խոպան և յերկարամյա հանգստի թողած հողերի խոտն է, վորն աչքի յե ընկնում իր սննդարարութեամբ ու մարսողութեամբ: Խոտի վորակը վորոշվում է նրա բաղադրութեամբ, կանաչ գույնով, լավ ու հաճելի հոտով: Վորքան խոտը շատ տերևներ ու ծաղիկներ ունենա, վորքան բազմազան լինի իր ոգտակար բաղադրութեամբ և վորքան շատ լինեն նրա մեջ բակլայան ու հատիկային մասերը, այնքան լավ:

Մեր տափաստանային, խոպան հողերի խոտը բաղկացած է դի-խավորապես հետևյալ բույսերից.—փետրախոտ, հասարակ դաշտախոտ, յեղևին, քոլ, հսպարցեա և այլն: Յերկարատև հանգստի թողած հողերի խոտը բաղկանում է հետևյալ բույսերից.—արտիճ, կաղանջան, ապիկոյ, իժախոտ, փուշ, մագար, ուլաֆ, խի վարքան պնդանում է այդ հողը, այնքան ուժեղ չափով են յերևան գալիս հասարակ սեզը և զանազան խրտցակները: Հրաշալի խոտ է ստացվում արհեստական, ցանովի խոտնարքներից (առվույտ, հսպարցեա), լավ է նույնպես մագար և սուլաճկա խոտը:

Բերքահավաքման հաջող ընտրված ժամանակը, ազա նաև բերքահավաքման կարգը խուժեղ ազդեցութեան են ունենում խոտի վորակի վրա: Հնձելու ամենալավ ժամանակը բույսերի ծաղկման սկիզբն է: Արևոտ, տաք յեղանակը խիստ լավ է խոտը հավասարաչափ հնձելու և նրա չորանալու համար: Խոտանձի բոլոր առանձին գործողութեանները չպիտի ձգձգվեն:

Ուշ հնձած, կամ հնձած ու յերկար թորնված խոտը (դաշտում) կոպտանում է, ծղոտի գույն ստանում, սակավ սննդարար է, համեղ չէ, փոշուտ է: Անասունները ահամա յին ուտում այդպիսի խոտը: Դաշտում, հնձելուց հետո պտուկած խոտի՝ չափից դուրս չորանալուց կորչում են նրա ամենաարժեքավոր մասերը-տերևներն ու ծաղիկները: Լավ չոր յեղանակին կարելի յե հավաքել ու զիջել խոտը, թեկուպ նա լինի չչորացած, մի քաթը խոտով, ինչպես ստում են, չթառա-

մած: Այդպես հնձած ու հավաքված խոտը լիակատար հասունանում է դեղերում, չի շարքվում ու փշրվում և հարմար է դարսելու և պահպանելու համար: Դեղերում 3—4 ամիս պահված խոտն ավելի սգտա-կար է համարվում, քան ավելի քիչ ժամանակ պահված խոտը: Մեկ տարուց ավելի պահված խոտը նույնպես կորցնում է իր դրական հատկութեանները և տարեց-տարի ավելի և ավելի յե փոշուովում:

Հարգը մաստու անասնաբուժության աշխուների մեծ մասում հանգիստանում է հիմնական կոշտ կեր և, չնայելով իր ցածր սննդա-բարութեան, լավ է մարսվում: Ոգտակար է հարգը անասուններին տալիս նրա վրա ուժեղ կեր ցանել: Լավ է նաև հարգին խոտ խոտ-նելու: Այսպիսի դեպքերում հարգը ախորժակով են ուտում անասուն-ները և մնացորդ չին թողնում:

Դարձանացան հացաբույսերի հարգն ավելի փափուկ և սննդա-բար է, քան աշխանացան հացաբույսերինը: Դարձանացան հացաբույ-սերից վորսակի, դարու և կորեկի հարգը մյուսներից ավելի լավ է համարվում: Լավ յեղանակին հավաքված և կանոնավոր դեղ կազմած հարգը պահպանվում է տասնյակ տարիներ, սակայն յերկար մնացած հարգը շատ է փշրվում, փոշուովում, կորցնում է իր համը և անս-սունը նրան այնքան էլ համույթով չի ուտում:

Մղեղը ավելի սննդարար և համեղ է համարվում, քան հարգը: Մղեղի մեջ միշտ գտնվում են մանր, լզար հատիկներ, ցողունների տերևներ և մանր մասեր, վորոնք մզեղի մեջ են մնում կայսելու ժա-մանակ: Դարձանացան անքիստ ցորենների, ինչպես և կորեկի մզեղն ավելի արժեքավոր է համարվում: Գիստավոր ցորենների ու գա-րու մզեղը բորբոքումներ են առաջացնում, վորովհետև քիստերը խր-վում են բերանի և ստամոքսի լորձաթաղանթի մեջ: Գիստախոտն մզ-դեղը չպետք է գործածել սիլոսի մեջ, վորովհետև թթվեցրած կերի մեջ քիստերը մնում են և կարող են նույնպես վրաս հասցնել, ինչպես և մզեղի մեջ: Զանայից և ժանգոտից վրասված հարգն ու մզեղը եղի կովերին տալ չի կարելի, վորովհետև դա կարող է վիժժան պատ-ճառ դառնալ:

Ուժեղ կեռեից (խոտացրած) Հյուսիսային Կովկասում ամենա-տարածվածներն են յեղիպտացորենն ու դարին: Կարսակը մթնոլոր-տային տեղումների պահասութեան պատճառով, ամեն տեղ չի բուս-նում: Արդյունաբերական ավելորդութեաններին վորպես կեր, հայտ-նի յեն թեփը և արևածաղկի ջուսպը:

Յեղիպտացորենը պետք է դառնա բոլոր անասնաբուժական կու-տնատեսութեանների ուշադրութեան առարկան: Բոլոր կերաբույսե-րի մեջ նա թի իր սննդարարութեամբ և թի կայուն բերքով առա-ջին տեղն է բռնում:

Յեզիպտացորենն անասուններին պիտի տալ մանրած, վորովհետև  
տև ամբողջ հատիկներն ավելի դժվար են մարսվում և մեծ քանակ-  
կությամբ դուրս են գալիս անասնի կղկղանքի հետ: Մանրած յե-  
զիպտացորենն ավելի լավ է մարսվում, ուստի և ավելի քիչ է կոր-  
չում կղկղանքի հետ դուրս գալով:

Ամերիկական անասնաբույժներն այնուամենայնիվ գերադասում  
են յեզիպտացորենն անասուններին տալ ամբողջ հատիկներով և շատ  
հաճախ առանց թրջելու: Մեզ վախեցնող հիշյալ կորուստներն ամե-  
րիկացիք սրամտությամբ վերացնում են նրանով, վոր յեզիպտա-  
ցորենով կերակրվող անասուններին մոտ պահում են խողովներ, վո-  
րոնք ջրով են կղկղանքի միջև յեզիպտացորենի հատիկները:

Յեզիպտացորենով կերակրելիս, նրանցից յերկուսի  
մոտ պահում է մեկ 4—7 ամսական խողով: Մոզերին այդպես պա-  
հելով, վոչ միայն վերանում է յեզիպտացորենի հատիկները կորու-  
սող, այլ և ֆերմերները լավ յեկամուտ են ստանում դրանից:

Յեզիպտացորենի մեջ պահասում են սպիտակուցային նյութերը,  
ուստի նրանով անասուններին կերակրելիս անհրաժեշտ է ավելաց-  
նել անյուրի կերեր, վորոնք հարուստ են սպիտակուցային նյութե-  
րով, որինակ, քուսպը և ցորենի թեփը:

Ուրիշ վոչ մի կերաբույս այնքան սննդարար նյութեր չի տա-  
լիս մեկ հեկտարից, վորքան յեզիպտացորենը, իհարկե յեթե լինեն  
ցանքի, հողային, կլիմայական և աշխատանքի միևնույն պայմաննե-  
րը: Յեզիպտացորենի կերը սիրում են բոլոր կենդանիները և սա-  
բացատրվում է նրանով, վոր յեզիպտացորենի յուղը դուրեկան համ և  
բուրավետ հոտ ունի:

Դժբախտաբար չարոված կամ աղացված հատիկների մեջ յեզիպ-  
տացորենի յուղը շուտ է դառնանում և այդ տեսակ կերին դառն և  
անհաճելի համ է տալիս: Ահա թե ինչու չպետք է յեզիպտացորենը  
աղաչ կամ կտրատել կերակրելուց առաջ: Մանրած յեզիպտացորենի  
պահելու ամենայնպես ժամանակը համարվում է յերկու շաբաթ, վո-  
րից հետո սկսում է տաքանալ և դճոնանալ:

Դարից ավելի յի տարածված և ավելի բերրի յի չորային ու-  
յուններում: Յեզիպտացորենից հետո գարին պիտի համարել ամենա-  
ձեռնառու հատիկային կերը՝ մատուռ անասուններին կերակրելու  
համար: Գարին ևս, ինչպես և յեզիպտացորենը, ամբողջ հատիկնե-  
րով դժվար են ծամում ու մարում կենդանիները: Գարին պետք է  
արվի մանրած կամ խաշած: Սպիտակուցներով նա ավելի հարուստ է,  
քան յեզիպտացորենը, բայց ավելի աղքատ է նրանցով: Քան վար-  
սակը՝ Վարսակի հետ խառնված դարին (2:1) շատ լավ կեր է հա-  
մարվում 3—4 ամսական և մինչև մեկ տարեկան մսաղու հորթերի հա-

մար: Մյապիսի կերից մի փոքր պակաս արժեքավոր է փչրված դա-  
րին, վորը հաջողությամբ սպասարկվում է հորթերի կերակրման հա-  
մար: Գարին շատ ուղտակար կերամթերք է, այնուամենայնիվ նա  
զեջում է յեզիպտացորենին, վորը անտեսապես ավելի ձեռնառու  
կեր է:

Վարսակը լավագույն կերն է համարվում հորթերի համար, մա-  
նավանդ վարսակի սպուրը: Ամերիկացում վարսակը յեզիպտացորե-  
նից հետո յերկրորդ տեղն է բռնում ցանքերի տարածությամբ և  
կերի համար ոգտագործվելով—վոչ միայն ձիերի, այլ և խոշոր յեզ-  
ջուրավոր անասունների համար: Վարսակն առանձնապես ոգտակար  
է կաթնատու կովերի համար: Մակայն խոշոր յեզջուրավոր անա-  
սուններին կերակրելու համար վարսակ քիչ է գործածվում, վորով-  
հետև թանկ է:

Վախ և թեթև վարսակն իր վորակով ավելի վատ է համար-  
բում, քան լիքը, ծանրակշիռ վարսակը: Գործ է ածվում դարու հետ  
կրտով չափ խառնած, յեզեներին կերակրելու համար և մանավանդ  
այս դեպքում շատ ոգտակար է համարվում:

Յերկրամասի չորային դոտում-արևայան և հյուսիս արևելյան  
ուսյուններում խոնավության պակասության պատճառով վարսակի  
ցանքերն արդյունք չեն տալիս:

Յտեճի բեփր համարվում է շատ արժեքավոր կեր, վորը հրա-  
շալի մարսվում, յուրացվում է և վորը հարուստ է սպիտակուցներով:  
Անբրածեշտ է նկատել, վոր մեծ, արդյունաբերական աղորիքների  
թեփը սակավ սննդարար է, քան դյուղական ախլի աղորիքների  
թեփը, վորոնք շատ հասարակ ու պարզ են սարքավորված: Թեփը  
արժեքավոր է նաև նրանով, վոր թուլացնող (ստամոքսը) հատկու-  
թյուն ունի:

Ամենալավը համարվում է ցորենի խոշոր թեփը, առանց մի վո-  
րեկ խառնուրդի: Այս տեսակ թեփը շատ ոգտակար է հորթերի և  
կթան կովերի համար: Թեփը յերկար մնալով բորբոսնում է և դառ-  
նանում: Ամենից լավ է պահվող թեփն ոգտագործել 2—4 ամսա-  
րնթացքում:

Արեվածաղկի բուսյա առանձնապես արժեքավոր է նրանով, վոր  
ամենահարուստն է սպիտակուցներով: Ինչպես ցորենի թեփը, այն-  
պես ևլ արեվածաղկի քուսպը ավելի լավ է լինում, յեթե ստացվում է  
մանր, անայնազործական տիպի գործարաններից, քան թե մեծ, ար-  
դյունաբերական գործարաններից ստացվածը: Գուսպը միշտ հանդի-  
սանում է իբրև լրացուցիչ, սպիտակուցային կեր, յերբ անասունները  
կերակրվում են կոշտ կերերով, վորոնք աղքատ են սպիտակուցներով:

Հյուրալի կերերի թվին պատկանում են կանաչ և սիրուսացված կերերը, արմատապտուղները և այլն: Իրենց մարտդուլթյամբ, սննդաբարությամբ և կենդանու զարգացման ու նրա առուլըության վրա ոգտակար ներգործությամբ, ինչպես և եթանությամբ—կանաչ կերն ամենաձեռնատուն է: Իժրախտարար մեր հարաձային, չորային շրջաններում, ուր չոր քափներ են փչում, կանաչ կերը խիստ կարճ ժամանակվա ընթացքում և լինում Եերեք-չորս ամսվա մեջ չորանում և և կորցնում է իր ամենաարժեքավոր հատկութունները: Արոտատեղերի չորանալու պատճառով ընդհատումներ են լինում անասունների կերակրման գործում, զբանով խանդարվում և հորթերի կանոնավոր զարգացումը և այլն:

Յերկրամասի համատարած կուլեկտիվացումից հետո լրակատար հնարավորությունն էր կրճատել, դուցն և բոլորովին վերացնել այլպիսի յերեւոյթները: Իրա համար հարկավոր է մի շարք միջոցառումներ կիրառել մեր քնական արոտատեղերի և խոտհարքների դրությունը բարելավելու համար, ինչպես նաև կազմակերպել միամյա և բազմամյա կերարույսերի (աովույս, եսպարցետ, սորգո, սուդանկա, և այլն) ցանքերը: Չորային ռաջոններում առանձնապես կարևոր է ունենալ հյուլթալի, կանաչ կերերի ցանքեր:

Միլսացված կե: Հյուլթալի կերերը յերկար ժամանակ պահպանելու խնդիրը առաջնակարգ նշանակութուն ունի ապրանքային մատուցածական անասնարուծական ֆերմաների համար: Այս հարցը կարելի չէ դրականապես լուծել բուսական զանգվածների սիրուսացման (թթվեցնելու) միջոցով:

Միլսացման համար ամենապետքականները բոլոր հաստացողուն բույսերն են (յեզլպտացորեն, արևածաղիկ, սորգո և այլն): Բացի դրանից, սիրուսացման համար կարելի չէ ոգտադործել ճանկնդեղի և կարտոֆիլի թփերը, կաղամբի ավելորդութունները և այլն:

Խորհուրդ է արվում սիրուսացման համար ոգտագործել ամեն օրական մոլախոտերը, վորոնք թարմ դրությամբ չեն ուտվում, և այնպիսի հյուլթալի կերերը, ինչպիսին են դուսման և կերի ձևերուկները, վորոնք թարմ դրությամբ յերկար չեն մնում:

Հմտությամբ պատրաստված սիրուսային կերը ունենում է լավ համ և դուրեկան հոտ և հիշեցնում է նոր թխված հաճարի հացի համը ու ամիկի հոտը:

Հյուլթալային Ամերիկայի անասնարույթների փորձերը հաստատում են, վոր սիրուսային կերերն ամենաձեռնատուն են տնտեսության մեջ: Միլսային կերերի նշանակութունը հսկայական է նաև այն տեսակետից, վոր նրանց պատրաստելը միանգամայն հնարավոր է նաև աննախաճով, անձրևային ժամանակ, յերբ խոտ հնձելու մասին մտածել անգամ ավելորդ է:

Մեղանում ապրանքային մատուցածական ֆերմաների ցանքալըջանառություններին մեջ անկասկած մեծ տեղ կբռնի սոյայի մշակումը, վորպես մի կերարույսի, վորը բարձր սննդարարություն ունի:

Կերի վերաբերյալ մեր բոլոր ասածներին պիտի ավելացնել այն, վոր կերի վորակը մեծ չափով կախված է վոչ միայն իր ժամանակին և հմտությամբ պատրաստելուց, այլ և համապատասխան խնամքով պահելուց:

## ԱՆՍՈՒՆՆԵՐԻ ԿԵՐԱԿՐՈՒՄԸ

Մասուռ, խոշոր յեղջյուրավոր անասունների կերակրման փորձերի հիման վրա հաշված է, վոր հորթերին կերակրելիս, 1 կիրոգրամ կենդանի կշիռ ավելացնելու համար պահանջվում է 12—13 կիրոգրամ չոր կեր: Իսկ այն դեպքերում, յերբ կերարածնից դուրս և հանվել հարդը, նույն նպատակով գործածված չոր կերի քանակությունը պահասել է սինչև 9,3 կիրոգրամ: Մեր տափաստանային ցեղի հասակակազմի կերակրելիս,—վորոնք բանեցվել են 5—6 տարի,—մեկ վոր յեղներին կերակրելիս, ստանալու համար պահանջվել է 27-ից մինչև 50 կիրոգրամ չոր կերի բաղադրություն, այսինքն 3—5 անգամ ավելի, քան հորթերին կերակրելիս: Այս տվյալները հաստատում են, վոր մատող հասակի անասունների կերակրումը (նաև չաղացումը) 3—4 անգամ ավելի ձեռնտու չէ, քան հասակավոր անասուններին: Մատող անասունը, վոր այդ ժամանակ դեռ չի ավարտել իր հասակը, տաղ անասունը և մեծանալ և միևնույն ժամանակ կերակրվել, մինչդեռ հասակավոր անասունը միայն կերակրվում է: Բացի դրանից, կենդանու մատող որգանիդն ավելի լավ է մտրում կերը:

Հորթերը կերակրվում են մոր կաթով, այնուհետև 4-րդ ամսից, յերբեմն ել ավելի վաղ, նրանց արվում է կեր (աղացած վարսակ, դարի, թեփ): Ուժեղ կեր սկսում են տալ 100 գրամից սկսած և հետզհետե ավելացնում են, վորպեսզի մորից բաժանելու ժամանակ (5—6 ամսական հասակում) ուժեղ կերը հասնի 800 գրամի: Առատ և հյուլթալի արոտատեղերում կովերը հրաշալի կերակրում են հորթերին: Թալի արոտատեղերում կովերը հրաշալի կերակրում են հորթերին: Այսպիսի դեպքերում կարիք չի լինում հորթերին ուժեղ կեր տալ:

Հորթերին մորից բաժանելուց հետո շատ ոգտակար է կերակրել հյուլթալի կերերով և լավ լստով: Հյուլթալի կերերը (նաև սիրուսը) շատ լավ են ազդում հասակի, գերության և կշռի վրա:

Հորթերին մեծացնելիս մաքուր ողը և մշակական գրուսանքը նրանց համար պարտադիր է: Ուստի հորթանոցներին կից պետք է սարքել ընդարձակ, չոր հրապարակներ, վորոնք պիտի սարքավորված լինեն ծածկերով, կերամաններով և ջրի տաշտակներով:

Չմեռային ամբողջ որվա ընթացքում հորթերը մեռն են հրապարակում և միայն վատ յեղանակին ու զիշերն են աարվում հորթանոց:

Անհրաժեշտ է հետևել, վոր արու հորթերն առանձին պահվեն հորթից: Այդպիսով տեղի չեն ունենա մշասակար գուղախորտաններն առանտունների մատաղ հասակում: Գարնանը, հորթերին արտատեղ տանելու ժամանակ տեղի չե ունենում չղարգացած հորթերի խոտանում և խոտանվածների ամորձատումը (կտելը):

Հետագայում մատղաշները պահվում են սովորական սիջոցներով, սովան արտատեղերում, ձմեռն անասնանոցներում: Մատաղ ցուլերից առանձին խումբ է կազմվում և նրանք առանձին են պահվում եզ հորթերից ու կովերից:

Սրածեցման ամբողջ շրջանում մատղաշները պահվում են բազառապես արտոններով: Չմեռվա ընթացքում մեկ տարեկանից ավելի հորթերը պահվում են կոշտ կերով—խոտով և հարդով: Այդպիսի եփան կերը խնայել ձևուտու չէ, քանի վոր հարկավոր է անասուններին ձմեռվա ընթացքում պահել այնպես, ինչպես յեղեղ են ձմեռ մտնելու: Չմեռն ավելորդ է սպասել անասունների գերանալուն և ամբարայնփելուն, վոր տեղի չե ունենում գարնանը և ումառը, այսինքն առատ արտատեղերից ոգովելու ժամանակ:

Հորթերի կյանքի առաջին տարում նրանց լավ կերակրումը (անպայման ավելացնելով խոտացված կերեր) անհրաժեշտ է նրա համար, վոր միայն այդպես կերակրվելով հորթը կարող է աճել անընտատ, ամբարայնելով իր վուսկրակաղքը և անհրաժեշտ չափով դարգանալու:

Յեղային հորթերի որական կերաբաժինը բաղկացած է հետևյալ մասերից.—3 կիլոգրամ լավ վորակի խոտ, 6 կիլոգրամ հյութալի կեղ և 1 կիլոգրամ ուժեղ կեր: Այսպիսի կեր ուտելով, հորթերը հրաշալի զարգանում են իրենց կյանքի առաջին ձմեռվա ընթացքում: Այսպիսի կերաբաժինը միանգամայն բավական է նրանց հասակի, կշռի և ընդհանրապես ամբողջ մարմնի զարգացման համար: Սա մատու կենդանու հետագա զարգացման անհրաժեշտ պայմանն է:

Մորերից բաժանելուց հետո, հորթերին հինգ ամսվա ընթացքում (ձմեռը) կերակրելու համար միջին թվով հարկավոր կլինի՝ յերեքական ցենտներ լավ վորակի խոտ, 2-ական ցենտներ ուժեղ կեր (թեփ, յեղիպատացորենի կամ գարու մանրունք, ջուսպ) և 3 ցենտներ հյութալի կերեր (արմատապառլներ, սիլոսացված կեր), ավելացրած 3-ական ցենտներ հարդ՝ տակի փովածքի համար: Այն կորանտեսություններում, վորտեղ պակասում են սիլոսային կերերն ու արմատապատուղները, կարելի չէ հաջողությամբ գործածել հարթի, խոտի մանրաք:

խանված թեփի հետ: Այս պեղքում 800 գրամ ուժեղ կերի փոխարեն պետք է սաղ 1-ից մինչև 2 կիլոգրամ:

Այդպիսի ուժեղ կերակրման և լավ պահվածքի ծախսերը կարգարանան նրանով, վոր հորթերի կշիռը կավելանա և վոր գլխավորն է, նրանք շուտ կհասունանան (ավելի քան մեկ տարով): Այսպիսի կերակրմամբ նրանք մեկ տարով ավելի շուտ պետք կլինեն անտեսապես: Մեկ տարով կկրճատվի շրջանառու միջացների ծախսումը և մեկ տարով առաջ տեղեր կազատվեն տնտեսության մեջ՝ ուրիշ անասուններ աճեցնելու համար: Հիշյալ ձևով կերակրելիս կարելի է փաստանային գործ միամյա անասունները կուսնան միջին թվով մինչև 320-340 կիլոգրամ կենդանի կշիռ:

Մեկ տարեկանից ավելի հորթերին կերակրելու համար, միջին թվով հարկավոր կլինի 6 կիլոգրամ խոտ և 12 կիլոգրամ գարնանացանի հարդ (մեկ գլխին):

Հիմնական կերը խոտն է և հորթերը միայն հիվանդ և վտիտ լինելու դեպքում (վորով կղանդալի նրանց աճումը) կերակրվում են փշրված յեղիպատացորենով, կամ ուրիշ եփան, ուժեղ կերերով:

Ծնու կովերը ամառվա ընթացքում կերակրվում են բացառապես արածելու միջոցով: Միայն հիվանդ կովերը բաժանվում են ընդհանուր նախրից և կերակրվում են առանձին: Նրանց կերի վրա ավելացվում է մինչև 2 կիլոգրամ խոտացված կեր:

Տնդական ցեղերի կովերին ձմեռը կերակրելու համար պահանջվում է լավ վորակի խոտ, որական 16 կիլոգրամ ամեն մի գլխին, հաղված նաև այն հավելումը, վորն անհրաժեշտ է կովի վորովայնում գտնվող հորթի համար: Խոտի մի մասի փոխարեն կարելի չէ սաղ գարնանացան հարդ, իսկ սրանով ավելի լավ է կերակրել ձմեռվա առաջին կեսին:

Չպետք է թույլ տալ, վոր ձմեռը կովերը նիհարեն, վորովհետև դա կանդրադառնա ծնվելիք հորթի վորակի վրա և ծնված հորթերը վատ կկերակրվեն: Հորթերին կերակրելու ժամանակ, ինչպես նաև ցեղային կովեր պահելիս, սիլոսային կեր առը պետք է մշտական բնույթ կրի: «Սիլոսային կերը նպատում է աղիքների նորմալ գրության պահպանման, կենդանու մարմնի հյուսվածքը դարձնում է հյութալի, կաշին—ճկուն, իսկ բուրդը—փայլուն: Անասունը միշտ լավ է մարում ու յուրացնում սիլոսային կերը: Սիլոսային կերի գործածումով կրճատվում է խոտի քանակը, վոր արվում է անասուններին»:

Ամերիկական անասնաբույժները սիլոսային կերն անասուններին տալիս են հետևյալ չափով.—հորթերին, ծծից կտրելուց հետո մինչև մեկ տարեկան հասակը.—6 կիլոգրամ: Մեկ տարեկանից մինչև

յերկու տարեկաններին—8 կիլոգրամ, 2—3 տարեկաններին—10 կիլո-  
գրամ, 4-5 տարեկաններին—10-ից մինչև 20 կիլոգրամ, Անասուններին սիրուով  
կերակրելիս վերջինս տրվում է 20-ից մինչև 50 կիլոգրամ նայած  
անասնի կենդանի քաշին:

Անասուններն առանձին պիտի կերակրվեն այն դեպքերում, յերբ  
նրանք պահվում են մուրքներում և կապվում են: Խմորներ կերակ-  
րելիս կարելի յե 5—20-ական անասուն միասին կերակրել: Կանոնա-  
վոր կերակրումն իր նպատակին հասնում և այն դեպքերում, յերբ  
հայտնի յե թե անասունն իսկապես վճռաբար կարիք ունի կենսա-  
պահ և գերացման կերի, ի՞նչ բաղադրություն ունի կերը և միս ու  
ճարպ արտադրելու տեսակետից վճռաբար նա մարսելի յե: Միջին  
թվով հաշված: յուրաքանչյուր 100 կիլոգրամ կենդանի քաշին պետք  
է տալ մեկ կերի միավորի չափ կենսապահ կեր: Կենդանի կշռի մեկ  
կիլոգրամով անձան համար հարկավոր կլինի 6-ից մինչև 8 կերի միա-  
վորի չափ չաղացման կերեր:

Դիտենալով այդ բոլորը, ինչպես նաև կենդանու քաշը, դժվար  
չէ կերի չափեր սահմանել: Մատղաչ անասունների կերակրումը և  
միջ ստանալու համար նրանց չաղացումը պահանջում է խիստ, գործ-  
նական հաշվառք:

Պետք է հիշել, վոր մագործական ուղղութեան խոշոր յեղջու-  
րավոր անասունների բուսական և բարելավման հիմնական խնդիրը  
է ժան մսի արտադրությունն է: Մսի խնդրի ամենաարագ լուծումն  
իրագործելի յե մատղաչ անասունների և մասնավորապես հորթերի  
անընդհատ և լավ կերակրման ճանապարհով: Դրա համար պետք է  
գործադրել վերևում մեր նկարագրած հորթերին կերակրելու և պա-  
հելու ձևը՝ մտից կարելուց հետո:

Կերաբույսերի և հացահատիկային կուլտուրաների ցանքերի  
տարածութեան ընդարձակման, բնական արոտավայրերի և խոտհարք-  
ների բարելավման հետ մեկտեղ, լիակատար հնարավորութեան կի-  
նի բոլոր մատղաչ անասուններին կանոնավոր կերակրելու: Մա վեր-  
ջին հաշվով ավելի մեծ նվաճումներ կտա մեզ անասունների մաս-  
յին արտադրողականութեան և շուտ հասունացման գործում:

Մատղաչ անասուններին կանոնավոր կերակրելով, միշտ պետք  
է հիշել, վոր մատղ անասունների որդանիզմի մեջ տեղի յե ունե-  
նում մսի փականների կազմավորման գործողութեանը, վորի համար  
հարկավոր են սպիտակուցներ: Ահա թե ինչու մատղաչ անասուն-  
ների կերը պիտի պարունակի բավականաչափ քանակութեամբ սպի-  
տակուցային նյութեր: Այս տեսակետից լավագույն արոտատեղեկե-  
րը նրանք են համարվում, վորոնք ունեն հասիկային և բակլայա-  
կան բուսականութեան:

Հաշակավոր գիտնական և համաշխարհային կենդանաբան Ջեյ. Ե. Ե.  
գառար կերակրման ազդեցութեան մասին առում է, վոր «կենդանի-  
ների ընդհանուր կազմվածքի վրա կերի գերազանց ազդեցութեան  
վերաբերյալ համոզմունքը գեղեցիկ կերպով արտահայտում են անգ-  
լիացիք, ասելով, վոր «անասունների ցեղի մեծ մասը բերանի միջով  
է առաջ դալիս»:

Կերի արժեքավորության աղյուսակ

Կերի տեսակ	Կերի միավոր ներ 100 կիլո- գրամներով	1 կերի միա- վորին քանի կիլոգրամ կեր է հարկավոր	Գանի զբաղ սպիտակուց և մարսվում	
			1 կիլոգրամ մեջ	1 կերի միա- վորի մեջ
Միջին վորակի վարակ . . . . .	100	1	72	72
Դարի . . . . .	120	0,8	61	48,8
Կորեկ . . . . .	100	1	74	74
Յուրիպտացորեն . . . . .	136	0,7	66	46
Արևածաղկի բուսակ . . . . .	113	0,9	805	272,5
Ցորենի թեփ . . . . .	80	1,2	110	132
Աշունացորենի հարդ . . . . .	18	5,5	4	22
Վարակի հարդ . . . . .	28	3,5	10	35
Կորեկի « « . . . . .	37	2,5	12	30
Դարու « « . . . . .	32	3	6	18
Ցորենի մզեղ . . . . .	40	2,5	7	17
Վարակի « « . . . . .	48	2	14	28
Կորեկի « « . . . . .	32	3	12	36
Տափաստանի խոտ . . . . .	54	2	35	70
Կերի ճակնդեղ . . . . .	11	9	1	9
Կերի սիրուցում . . . . .	13	7,5	7	52
Յուրիպտաց. կանաչ կեր . . . . .	15	7	6	42
Մագործ ծաղկ. . . . .	18	6	13	73
Մորգոյի կանաչ կեր . . . . .	15	7	6	42

ԱՆԱՍՈՒՆՆԵՐԻ ԶՐԵԼԸ

Անասունների ջրելու տեղերի սարքավորումն ու ջրամատակարար-  
ումը նույնպես սերտ կապված է կերի խնդրի լուծման հետ: Տնտեսա-  
կան խիստ կարևորութեան ունեցող այս հարցին մեծ ուշադրութեան  
պիտի դարձնել անասնաբուսական ֆերմաներ կազմակերպելիս: Զըր-  
հորների տեղից ու խորութեանից և ջրի այլ աղբյուրներից շատ քա-  
ներով կախված է արոտատեղերի կանոնավոր ոգտագործումը: Զըր-  
հորներ և լճակներ կառուցելիս պետք է անպայման գիտենալ որա-  
կան ստացվելիք ջրի քանակն ու նրա վորակը: Նախքան ջրհորի կա-  
լճակի տեղը վորելը հարկավոր է հատուկ հետազոտութեան կատա-  
րել: Հակառակ դեպքում բոլոր ծախքերն իդուր կկորչեն:

Ամեն մի զրուխ խոշոր յեղջուրավոր մինչև 2 տարեկան անաս-  
նի համար որական միջին թվով հարկավոր է 30 լիտր ջուր, իսկ  
մյուս հասակի անասունների համար—40 լիտր: Դիտենալով ամեն որ

ստացելիք ու ծախսելիք ջրի քանակը, դժգոք չե գորոշել, թե այս կամ այն ջրելու տեղը վորքան անասունների կրավարարի:

Յերկրամասի տափաստանային, չորային դոտում պետք է զգուշ լինել ջրհորների կառուցելիս, վորոնց մեջ ջրի գոյությունը շատ անգամ մշտական չի լինում: Այդպիսի ջրհորների ջուրը վորակով այնքան էլ լավ չի: Եւ հաճախ լինում է շատ խորը և ունենում է դառն աղի համ: Զրհորներից ջուրը հանելը մի շաբթ քարդությունների հետ է կապված, ուստի նա եծան չի նստում, իսկ սրանով բարձրանում է պահվող անասունների ինքնարժեքը:

Յերկրամասի արևելյան դաշտների մեծ մասում, վորտեղ գլխավոր ուշադրությունն է կենտրոնացած ապրանքային-անասնաբուծական մագործական ֆերմաների կազմակերպման վրա, հնարավոր է այսպես կոչված՝ արտիզյան ջրհորներ կառուցել: Զրհորների ջրից ոգտվելու դեպքում, ջուրը պոմպերի միջոցով վերելվ հանելիս՝ պետք է ոգտագործել քամու ուժով և սարքել այնքան-օտոմատներ: Այսպիսի շարժիչներ արդեն գրական արդյունք են տվել Միսսիսիպի տափաստանային մասերի շատ խորհրտատեսություններում ու կողմնառնություններում:

### ՏՆՂԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ

Մաստու և մսա-կաթնատու անասնաբուծական ֆերմաներ կազմակերպելիս, անտեսական մեծ նշանակութուն ունեցող հիմնական հարցերից մեկն արածման և խոտահնձի տեղի հաջող ընտրությունն է: Հողի տարածությունը, մակերելվութը, ձևը, ջրի գոյությունը— այս բոլորը աչքաթող չպիտի անել հողամասն ընտրելիս: Հողի կանոնավոր ոգտագործումը հենց կախված է վերև հիշված նշաններից:

Խիստ արժեքավոր են խոպան կամ յերկար ժամանակ չմշակված հողերը, վորոնք ապահովում են անասուններին լավ վորակի խոտով վաղ գարնանը և ուշ աշնանը, յերբեմն նաև ձմռանը արածվելիք խոտով: Ամառն անասուններին արածացնելու համար շատ ձեռնաու յե ունենալ փափուկ հող— «քոլեր», իսկ հետագայում նաև արոտատեղի խոպան:

Ցանկալի յե, վոր հողամասը մեկ ամբողջ տարածություն լինի: Մասերի բաժանված, կտոր կտոր հողամասի վրա դժվարանում է արոտատեղերի կանոնավոր ոգտագործումը:

Ամենահարմար պետք է համարել քառակուսի կամ նման ձևերի հողամասը:

Հողի մակերելվութը նույնպես մեծ նշանակութուն ունի, մասնավորապես տափաստանային տեղերում: Այսպես, որինակ, դեպի հարավ նայող բանջարն ավելի շուտ են ազատվում ձյունից, հեռապակս գար-

նան: ավելի շատ են ոգտագործվում վորպես արոտատեղի: Հարավային բանջարն ավելի հարմար են ձմեռային արոտատեղերի համար: Գարնան վերջին, ամբողջ ամառը և աշնան կեսին հարավային բանջարը մեծ մասամբ այնքան են չորանում, վոր անասունների արածեցնան համար ջրի պետքական են, կամ բոլորովին անպետք:

Հյուսիսային և հյուսիս-արելվմայան բանջարը գարնան վերջից մինչև ուշ աշնան միշտ պետքական են լինում իբրև արոտատեղի: Բացի դրանից, հյուսիսային և հյուսիս-արելվմայան բանջարը մեր շոր կլիմայի պայմաններում ամենալավ տեղերն են խոտահնձի համար: Հողամասի անհարթ (բլուրներով) մակերելվութն ունի նաև այն կարեւոր նշանակութունը, վոր այնտեղ հնարավոր է լինում պաշտպանվել ուժեղ քամիներից և ձյան մրրիկներից: Այս բոլորը վկայում է ըլրոտ տեղի առավելությունը:

Ինքն ըստ ինքյան հասկանալի յե, վոր ինչքան հողը լավ լինի իր վորակով, այնքան հողամասն բերրի կլինի, հետեվապես և արժեքավոր:

Միանգամայն անհրաժեշտ է, վոր հողամասն ապահովված լինի լավ վորակի ջրով:

Ցանկալի և անհրաժեշտ է նույնպես, վոր լինեն հարմար վարելահողեր: Մագործական և մսա-կաթնագործական անասնաբուծական տնտեսությունները պարտավոր են լիովին ապահովել կզտան-օեսության անդամներին և նրանց ընտանիքներին պարենով, հացահատիկներով և կերով՝ նրանց անասունների համար: Այստեղ տեղին է ասել, վոր այնտեղ, վորտեղ չի ստեղծվել կերի կայուն բաշա, բոլոր գոտահիմնիկական միջոցառումներն անկարող կլինեն վորեն դրական, շոշափելի արդյունք տալ:

### ԻՆՉԸ ՊԵՏԲ Ե ԿԱՇՎԻ ԱՌՆԵԼ

Վորպեսզի հաշվի առնել, թե հողամասի վրա քանի անասուն կարելի յե պահել (խոտով և արածացնելով), անհրաժեշտ է դիտենալ դանազան հասակի ու սեռի կերի նորմաները, տվյալ հողամասից սպասվելիք կերի քանակը և անասունների ձմեռային ու ամառային կերակրման տեվողությունը:

Հողամասից սպասվելիք կերի քանակը մոտավորապես վորոշվում է հետեվյալ գործնական յեղանակով— յեթե չկան տվյալներ տեղադական փորձնական կայաններից և չկան հետազոտման նյութեր:

Հարկավոր է ամենից առաջ վորոշել մեկ հեկտարից ստացվող խոտի միջին բերքը: Միջին տվյալները վորոշելու համար, ցանկալի յե վերցնել վոչ պակաս, քան տասն անգամ ստացված բերքի արդյունքները: Բնական է, վոր ինչքան շատ տարիներ վերցնենք, այնքան

ճիշտ կլինի բերքատուութեան միջին չափերը: Յերբ չկան փորձնական կայաններ և այլ հիմնարկներ ավյալներ վորոշ տեղի խոտի բերքատուութեան մասին, հարկավոր է ոգտագործել միջին բերքատուութեան չափը մտավորապես վորոշելու ձեվը—հարց ու փորձ անել տեղական ազգաբնակչության: Այդ նույն յեղանակով ճիշտ կլինի վորոշել անասունների ձանաչին, կերակրման միջին տեղուութունը: Այս բոլորի շնորհիվ հնարավոր կլինի վորոշել խոտի տարեկան միջին պաշարը, ինչպես նաև արոտատեղերի աված կերի չափը:

Ունենալով այդ տվյալները, ճիշտ կլինի վորոշել խոտհարքների և արոտատեղերի տարածութունը: Որինակ՝ յեթե մեկ հեկտարից միջին թվով ստացվում է վեց ցնտներ խոտ, իսկ վերջինիս որական միջին նորման 13 կիլոգրամ է, ապա 120 որվա ընթացքում 500 գլուխ անասունը ձանաչ պահելու համար անհրաժեշտ խոտհարքի տարածութունը կլինի՝  $120 \times 12 \times 500 : 600 = 1200$  հեկտար, կամ յուրաքանչյուր գլուխ անասունին 2,4 հեկտար:

Արոտավայրի մտավոր տարածութունը վորոշելու համար պետք է հաշվի առնել վոր բացի անասունների տրածած խոտից, արածածան տեղից նորանոր խոտ է բանում, այնպես վոր տվյալ հողամասի բերքի կեսի չափ նոր խոտ է ավելանում: Որինակ, յեթե տվյալ արոտատեղի մեկ հեկտարի միջին բերքը չորս ցնտներ է, ապա պետք է ավելացնել նաև յերկու ցնտներ այն արոտը, վորը բանում է արածելուց հետո: Այսպիսով արոտատեղի մեկ հեկտարի բերքատուութունը լինում է վեց ցնտներ: Գիտենալով արոտատեղերի բերքատուութունը, դժվար չի վորոշել թե վորքան անասուններ և ինչքան ժամանակ կարելի յե կերակրել այդ արոտատեղով: Որինակ, 500 գլուխ անասուններ 250 որվա ընթացքում արածեցնելու համար (յերբ որական մեկ գլուխ անասունին հարկավոր է 12 կիլոգրամ կեր) կըստացվի՝  $250 \times 12 \times 500 : 600 = 2500$  հեկտարի, կամ 5 հեկտար ամեն մի գլխին:

Այն դեպքում, յերբ հողամասերն ոգտագործվում են նախ՝ խոտահնձի, հետո արածացնելու համար, նրանց աված կերի քանակը վորոշվում է խոտի բերքով և արդեն ոգտագործվող արոտի կշռով: Արոտի բոլոր խոզանը հավասար կարելի յե համարել խոտի բերքի  $\frac{1}{6}$ -ին կամ 20 տոկոսին: Որինակ, մեկ հեկտար խոզանից վեց ցնտներ բերք ստանալու դեպքում (հաշված նաև ձմեռային տարիները) ստացվում է 120 կիլոգրամ չոր զանգված: Յեթե մեկ գլուխ անասունին արվող որական միջին նորման 12 կիլոգրամ է, ուրեմն մեկ որվա ընթացքում կարելի յե արածացնել 10 գլուխ անասուն: Մեր բերած որինակով կստացվի— $120 \times 10 = 12000$  կերի որ, վոր հնարավորութուն է տալիս արածման հողամասը պակասեցնել 240 հեկտարով: Կրկնում ենք, վոր

մեր բերած գործնական ձեվերը միմիայն մտավոր են և կատարելապես ճիշտ չեն կարող լինել: Այնուամենայնիվ այդ ձեվերով կարելի յե ոգտվել այն դեպքերում, յերբ չկան միջին բերքատուութեան ուրիշ ավելի ճիշտ տվյալներ:

Հողամասի բեռնավածութունը (այսինքն թե քանի անասուն կարող է կերակրել) վորոշելիս, հարկավոր է անպայման ուշադրութեան առնել ամեն տեսակ տարբերային պատահականութունները և զգուշութեան համար պետք է ապահովագրվել, մանավանդ պետք է ապահովագրել խոտի կուտակվելիք պաշարները: Խոտի ապահովագրման ֆոնդի չափը պիտի լինի վող պակաս, քան այնքան, վորքան հարկավոր է կուտակելութեանը մեկ ու կես տարվա ընթացքում:

Իրա համար բավական է ամեն տարի խոտհարքների քանակն ախելացնել 20 տոկոսով: Հետեվապես մեր բերած որինակով, խոտ պետք է հնձել 1440 և վող թե 1200 հեկտարից, կամ խոտհարքի տարածութեան վրա յուրաքանչյուր գլուխ անասունին 2,8 հեկտար: Այսպիսով խոտհարքի և արոտատեղի ընդհանուր տարածութունը կլինի 3,700 հեկտար, կամ միջին թիով 7,4 հեկտար ամեն մի գլուխ անասունին:

Մինչև այժմ մեր պալանքային, մագործական անասնաբուծութունը բացառապես զտնվել է յերկրամասի չորային գոտում և անասունները պահվել են միայն խոզան կամ յերկար տարիները չըմշակված արոտավայրերում: Մինք դեռ ևս բավականաչափ ծանոթ չենք արհեստական արոտավայրերի ու խոտհարքների առավելութունների հետ, մինչդեռ մեր յերկրամասի չորային գոտու բնական խոտհարքներն ու արոտատեղերը ցածր բերք են տալիս և հարկավոր է նրանց բարելավել, բարձրացնել բերքատուութունը՝ ցանկելով ու մշակելով միամյա և բազմամյա կերաբույսեր:

### ՄԻՆՈՍԱՑԻՆ ԸՆԿԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Անասնաբուծութեան սոցիալիստական վերակառուցումն անկարելի յե առանց սիլոսային կերը լայնորեն ոգտագործելու: Սիլոսային կառուցումների վրա պետք է առանձնահատուկ ուշադրութուն դարձվի:

Միանգամայն տեղին է սիլոսային առատապէր համեմատել օրակտարի հետ: Յեթե մեր Խորհրդային Միութեան դաշտագործութեան ապարեզում ներկայումս արակտորը հեղափոխութուն է կատարում, ապա նույնպես հեղափոխութուն են կատարում սիլոսային աշտարակները մեր անասնաբուծութեան մեջ:

Սիլոսային կառուցումների չափը կախված է նրանից, թե վերջապի սիլոսային կեր պիտի մթերել վորոշ ժամանակվա ընթացքում

վորոշ քանակութեամբ անասուններին կերակրելու համար, Այդ հարկով սիրոսային կառուցումները մի անհրաժեշտ մասն են յուրաքանչյուր կանոնավոր կազմակերպված անասնաբուժական խորհանտեսութեան, Սիրոսային կառուցումների (աշտարակների, կիսաաշտարակների, խըրամառների) մեծ փորձը, սիրոսացման տեխնիկայի գլուխընթացները, սիրոսացված կերի հսկայական ոգուտը ներկայումս լավ հայտնի յի կողմնտեսականների լայն մասսաներին:

Սիրոսային շինարարութեան թափի տեսակետից մենք պետք է որինակ վերցնենք Հյուսիսային Ամերիկայից: Այս յերկրում չկա և վոչ մի անասնաբուժական Չերմա, վորը չունենա սիրոսային աշտարակներ:

Սիրոսային կառուցումները համար տեղ ընտրելիս, հարկավոր է ամեն կերպ խուսափել խոնավ և ճանճային տեղերից, այնպիսի տեղերից, վորտեղ մտրիկ են ստորերկրյա ջրերը: Այնպես վոր, տեղը պետք է լինի բոլորովին չոր և մի փոքր բարձրագիր, վորպեսզի անձրևի ու ձյան ջրերն իսկույն հոսեն այնտեղից:

Կավազույն շինանյութեր են՝ յերկաթ—բետոնը, վալտը, աղյուսը և քարը: Շինանյութեր ընտրելիս հարկավոր է ամենից առաջ կանգ առնել տեղում յեղածի վրա: Յեթե տեղում չկան հարմար շինանյութեր, ապա պետք է ընտրել այնպիսիները, վորոնց տեղափոխութեանը հարմար է և եծան: Բոլոր այս դեպքերում, ինչպես և սիրոսային կառուցվածքի տեղը, ծավալը և ձևը վորոշելու համար անհրաժեշտ է մասնագետի յեզրակացութեանը՝ կառուցման ղեկավարութեանն ևս պետք է հանձնարարել մասնագետ-տեխնիկին, վորը փորձված է այդպիսի շինարարութեանների մեջ:

Ընդհանրապես պետք է աշխատել սիրոսային շենքերը կառուցել, վորքան կարելի յի, մտ անասունների կերակրման շենքերին (ավելի լավ է հենց իրար կողքի), վորոնք պիտի այնքան տաք լինեն, վոր սիրոսային կերը չստուչի:

Սիրոսային կառուցվածքների ամենատարածված տեսակներն են փոսերն ու խրամասները՝ 25—50 տոնն միջին տարողութեամբ: Հյուսիսային Ամերիկայում կառուցվում են 100 և նույնիսկ 150 տոնն տարողութեամբ փոսեր: Այդպիսի սիրոսային կառուցվածքները շատ հասարակ են և միանգամայն մատչելի յեն ամեն մի կողմնտեսութեան:

Այնուհետև գալիս են կիսաաշտարակաձև սիրոսային կառուցումները, վորոնք շատ մասնագետների ուշադրութեանն են զրավում նըրանով, վոր այնտեղ սիրոսի համարյա մեկ յերկրորդ մասը գետնի առկ է լինում և սպոշելուց ազատվում և կիսաաշտարակի այն մասը, վորը գետնի վրա յի գտնվում, զժվար չի տաքութեան համար ծած-

կել ծղատով կամ յեղեղով, հետո ծեփել կավով կամ ուղղակի հետո յցնել:

Կառուցման բարդութեան և արժեքի տեսակետից կիսաաշտարակները միջակ տեղ են բռնում փոսի և աշտարակի համեմատութեամբ: Կիսաաշտարակի առավելութեանը նրանումն է կայանում, վոր նա աշտարակից ավելի եծան և հարմար է սիրոսը տեղավորելու նկատմամբ: Կիսաաշտարակն ավելի եծան է նստում աշտարակից, բայց ավելի թանգ է փոսից ու խրամասից:

Առարակը սիրոսային կառուցվածքներից ամենակատարելագործված տեսակն է: Սիրոսային շինարարութեան կրակի յերկրում, Հյուսիսային Ամերիկայում, աշտարակներն այս շինարարութեան ամենատարածված ձևն են: Աշտարակն ավելի բարդ կառուցվածք է և ավելի թանգ է նստում, քան մյուսները, բայց ունի այն առավելութեանը, վորը նրա մեջ սիրոսային զանգվածը խիստ հալասարակափ է խտանում, իսկ սա զրական ազդեցութեան և ունենում կերի վորակի վրա: \*)

Առհասարակ Հյուսիսային Ամերիկայի անասնաբուժները հսկայական նշանակութեան են տալիս սիրոսային շինարարութեան և առում են, վոր բնդհանրապես սիրոսային շինարարությունը յեվ մասնավորապես սիրոսային առարակների կառուցումը գյուղատնտեսության կյանքում ամենախառուցումն են հանդիսանում այն ժամանակվանից սկսած, յեբ կառուցվեց առաջին գյուղատնտեսական մեխանիզմը:

### ՇԵՆՔԵՐ ԱՆԱՍՈՒՆՆԵՐԻ ԿՍՄԱԲ

Յուրաքանչյուր կողմնտեսութեան առաջին հերթին անասունների համար պետք է հարմարացնել և ոգտագործել իր բոլոր ունեցած հարմար տնտեսական շենքերը: Սկզբում միանգամայն բավական է սարքել անասնաբակեր, արհելյան և հյուսիս-արևելյան կողմերից, այսինքն մշտական քամիների կողմերից կառուցելով ծածկեր (НАЗЕСЫ):

Աչքի առաջ աւնենալով այն հանգամանքը, վոր նախկին կուլակային շենքերը մեծ չեն և գտնվում են մեկը մյուսից հեռու պարզ է, վոր նրանք պետքական կլինեն ապրանքային մատրոծական և մաս-կաթնազործական ֆերմաների գոյութեան սկզբում միայն: Հետագայում, անասունների հսկողութեանը հարմար դարձնելու, ավելի մեծ թափով անասուններ պահելու համար անհրաժեշտ կլինի կառուցել հատուկ հորթանոցներ, կովանոցներ և այլն շենքեր՝ համապատասխան ծավալով:

\*) Սիրոսային շինարարութեան մասին տես Ի. Գրիկաչիկովի, Ֆ. Եդրնինի և Ի. Ռոտովի «УСТРОЙСТВО СКОТОВЕДОВ» գիրքը, Կրաս. Հյուսիսային կովկաս. Ռոտով. 1899 թ.

Անասունների համար շենքեր կառուցելու պետք է ընդունել հետևյալ չափերը.—

Գոմերի հատակի տարածությունը.—

- 1) Կթուռ և ծնու կովերի համար—5,45 քառ. մ.
- 2) Զեռքով կերակրվող հորթերի համար—1,5 ք. մ.
- 3) 6—18 ամսական հորթերի համար—3,8 ք. մ.
- 4) Ցեղային ցուլերի համար—7,5 ք. մ.
- 5) Հասակավոր, չկապվող անասունների համար—4,13 ք. մ.

Այսպեսով կատարվող հասակավոր անասնի համար՝ 15 խորանարդ մետր, մինչև 18 ամսական հորթերի համար—10 ք. մ.

«Սկոտովորդ»-ի խորհանոտություններում մեծ չափով կատարվող շինարարության ընթացքում ընդունվել է անասունների շենքի ընդհանուր (ստանդարտ) ձևը, վորը հավասարապես հարմար է գանաղան հասակի անասունների տեղավորման համար:

Ահա այդ ձևի անասնոցի չափերը — յերկարությունը — 64,45 մետր, լայնությունը — 9,45 մ., պատերի բարձրությունը (հատակից մինչև առաստաղ — 2,75 մ. ծղոտե (կավածեփ) պատերի հաստությունը — 0,43 մ.:

Գոմը մեջտեղից յերկու մասի յե բաժանվում կերը տեղափոխելու ճանապարհով, 3—4 մետր լայնությամբ: Գլխավոր սուտքը յերկու դուռ ունի, 2,2 մ. լայնությամբ: Մնացած սուտքերը միադուռ են՝ 1,20 մ. լայնությամբ: Լուսամուտների տարածությունը կազմում է հատակի տարածության 1,15 մասը: Լուսամուտների չափը—1,05 x 0,85 մետր, զոմի ուղի ծավալը—1503 խորանարդ մետր:

Մուրների վրա անասունները տեղավորվում են յերկու շարք: Կերամանները զոմի լայնության պատերի մոտ են, իսկ անց ու դարձը կատարվում է զոմի յերկարությամբ, մեջտեղով: Կերամանների լայնությունն է 0,8 մետր, անցքի լայնությունը—1,40 մ.: Կովերի տեղերի լայնությունը—1,1 մետր, յերկարությունը—1,55 մ.:

Այսպիսի գոմում կարելի յե տեղավորել 100 կթուռ կով կամ 150 հորթ, վորոնք պիտի լինեն 6-ից մինչև 18 ամսական հասակի Առանց կապելու տեղավորվում է 120—240 կով (և առհասարակ հասակավոր անասուններ), կամ 6—18 ամսական 180—200 հորթ:

Ինչպես մենք արդեն ասացինք, շինարարության համար պետք է աշխատել ողորդործել տեղական նյութերը:

Հարդը (ծղոտը), յիղեզը, կավը, ցախը և այլն, անպայման պետք է ողորդործվեն լայն չափով, քանի վոր Խորհրդային Միության սոցիալիստական արդյունաբերության շինարարությունը պահանջում է հսկայական քանակությամբ աղյուս, կիր, ցեմենտ, յերկաթ, տախտակներ, չորսուններ և այլն: Այսպիսի նյութեր ստանալու վրա

չպետք է հույս դնել: Հարկավոր է ողորդործել տեղերում շինարարական նյութեր արտադրելու բոլոր ենարավորությունները, սեփական միջոցները և գոյություն ունեցող սարքավորանքը:

Մեծ նշանակություն ունի շենքի համար հարմար տեղ ընտրելը: Ընդհանրապես բոլոր շենքերը պետք է կառուցել չոր տեղերում, վորոնք նայում են դեպի հարավ, կամ հարավ-արևմուտք, մի փոքր թեքված են և հնարավորին չափ պաշտպանված արևելյան և հյուսիս-արևելյան կողմից: Շենքերի միջև յեղած տարածությունն ևս նշանակություն ունի սպասարկման ու ղեկավարման տեսակետից:

Ցեղն ընտրելիս հարկավոր է խստորեն ինկատի առնել հրդեհներից պաշտպանվելու կանոնները և օգնասուղի, վոր շենքերն ավելորդ տեղ իրար մոտիկ չլինեն: Անասունների շենքերը չպիտի կառուցել բնակելի տների, արհեստանոցների, աղորիքների, կացի շտեմարանների և այլ շենքերի մոտ: Ամենից լավ է անասունների բոլոր շենքերը կառուցել կոլտնտեսության կենտրոնական աղարակից դուրս: Նոր, բոլորովին ազատ բնակարաններից հեռու տեղերն ամենահարմարն են այսպիսի շինարարության համար:

Բոլոր դեպքերում հարկավոր է խուսափել ճանապարհների մոտիկությունից, վորովհետև վերջիններս հաճախ վարակիչ հիվանդությունների տարածման պատճառ են դառնում:

Անասունների շենքերի համար ընտրված տեղերը պետք է ճեռագործվեն սանիտարական տեսակետից: Առանձնապես պիտի հրաժարվել այնպիսի տեղերից, վորտեղ առաջ յեղել է անասունների գերեզմանոց, կամ վորտեղ անասուններ են մորթվել: Շենքերը չպետք է կառուցել նաև ճանճոտ և առհասարակ խոնավ տեղերում, վորտեղ ու ցածր տեղերում, վորտեղ հավաքվում է ունձրևի դո ձյան ջուրը: Բլրակները և առհասարակ բարձրադիր ու բաց տեղերն ևս հարմար չեն, վորովհետև յենթակա յին քամու աղղեցություն:

### ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐ

Մենք արդեն ասացինք, վոր շինարարական նյութեր ընտրելիս միշտ պետք է ողորդործել տեղում յեղածը: Մեր յերկրամասը շինարարական նյութերի առատությամբ բացառիկ նպաստավոր պայմանների մեջ է գտնվում:

Մեր կլիմայի պայմաններում հարդը (դարմանը) անփոխարինելի նյութ է վոչ միայն անտեսական, այլ և բնակելի շենքերի կառուցման համար: Հարդի արտադրության եժանույթյունը խոշոր շափով իլիցնում է հարդյա շենքերի արժեքը: Հարդաչին կառուցվածքները մյուս շինանյութերով կառուցվածքից տարբերվում է նրանով, վոր նրանք ցուրտ չեն անցկացնում և ամառվա շոգ ժամա-

նակ ել չեն տաքանում: Հարգյա շնորհրում ձեռք ցուրտ չե, վոչ ել ամառը շոք:

Յեղեգը արժեքավոր նյութ ե կտուրների, հասակների վրա վը-  
ռելու և պատերի համար (բնակելի և տնտեսական շենքերում): Յեղեգ-  
նյա կտուրները թեթևությունը և յեղեգի թույլ տաքանալը շատ ար-  
ժեքավոր են շինարարական գործում: Յեղեգնյա կտուրների, պատե-  
րի ու առաստաղների շնորհիվ շենքերի արժեքն ել խիստ եժան ե  
նստում:

Հրդեհից պաշտպանվելու համար յեղեգնյա կտուրներն այնպես  
վառնդավոր չեն, ինչպես կարծում են շատերը: Անասունների շենքե-  
րը, վորոնք ծածկվում են յեղեգով, մեր կլիմայի պայմաններում շատ  
գեղեցիկում չեն պահանջում թանգարժեք առաստաղներ: Հարկավոր ե  
միայն ներսից կավով ծեփել և սպիտակացնել կտուրը: Այսպիսով  
շենքը կլինի տաք, մաքուր և լուսավոր:

Կավը լավագույն և ամենաեժան շինանյութն ե պատերի և հա-  
տակների համար: Ծնորհիվ շուրը դժվարությամբ անցկացնելու հատ-  
կությանը, կավե պատերը համարվում են բավականաչափ առողջա-  
պահական: Կավը խիստ հարձար ե հատակի համար, մանավանդ յեբք  
շենքում տեղավորում են թույլ և հիվանդ վորոնքով կենդանիներին:

Յերբեմն կարիք ե լինում փոխել կավե հատակների վերին շեր-  
տը և դա եժան ե նստում, քանի վոր այդ աշխատանքը շատ հա-  
սարակ ե:

Լավ առփտափած կավե հատակը, վորին խառնված ե լինում մը-  
դեղ կամ հարդ, չի ճաքճքում և բավական յերկար ե մնում:

Քառն ու ավազը կտոնվեն յեթե վոչ յերկրամասի բոլոր, հա-  
մենայն գեղա շատ տեղերում:

Միակ բանը, վորը չկա յերկրամասի բոլոր առփտատանային ու  
նախալեռնային մասում, դա անտառանյութն ե: Մենք շինարարական  
անտառներ ունենք լեռներում: Լեռնային անտառի փայտի վորակը  
լավ ե, բայց նրա մթերումն ու տեղափոխությունն այնքան թանգ ե  
նստում, վոր մեժ մասամբ ստիպված ենք լինում գերադասել մեր  
Միության հյուսիսային անտառների փայտեղենը:

Յախը անփոխարինելի նյութ ե համապատասխան շենքեր կա-  
ռուցելու համար: Անասուններին պահելու բոլոր շենքերը (կովանոց-  
ներ, ցուլանոցներ, հորթանոցներ, հորթեծնության շենքեր, հիվանդ  
անասունների գոմեր ե այլն) պետք ե լինեն լուսավոր, չոր, անտ-  
սունների տեղավորման համար հարմար և լավ ողափոխվող:

Այս հիմնական պահանջներին բավարարող շենքերը փանգա-  
մայն պետքական են անասունների առողջության տեսակետից: Պահ-  
պանելու այսպիսի կարիք ունեն թե մեժ անասունները և թե հորթերը:

Այստեղ ափելորդ չի լինի ասեր, վոր կոլտնտեսություններում  
թանգարժեք, հիմնական շենքեր կառուցելն ավելորդ շուսյություն ե  
մանավանդ մեր կլիմայական համեմատաբար տաք պայմաններում:  
Այդպիսի շենքեր կառուցելն ուրիշ բան չե, բայց յեթե միջոցների  
ապարդյուն վատնում: Ներքին սարքավորման գեղեցիկ տեսքն ևս  
ավելորդ շուսյություն ե, թանգ ե նստում, անպիսի չափով շինա-  
նյութեր ե պահանջում:

Մենչե կառուցվելիք շենքերի նախադժեղը հարկավոր ե 2—3  
կոլտնտեսականների (ավելի լավ ե շինարարական գործի մասնագետ-  
ների—ատաղձագործների, քարտաշների և այլն) ուղարկել այն խոր-  
հրդային ու կոլեկտիվ տնտեսությունները, վորտեղ շինարարությունն  
արդեն ավարտված ե: Կասկածից դուրս ե, վոր հաշվի առնելով հա-  
րեվանների փորձը, մացնելով սեփական ուղղումներ, շինարարու-  
թյունն ավելի մեժ ճշտությամբ և կանոնավոր կկատարվի: Խնայո-  
ղություն անելով ընդհանրապես շինարարության մեջ և մասնա-  
վորապես հիմնական շինարարության մեջ, բավական կիջնի կառուց-  
վելիք շենքերի ինքնարժեքը:

Ծնու կռիբը և բոլոր մատաղ անասունները (մեկ տարեկա-  
նից մեժ) պահելու համար Հյուսիսային հովհասի պայմաններում բա-  
վական ե սկզբնական ժամանակներում ունենալ չոր և ծածկեր ունե-  
ցող անասանոցներ:

Տեղական ցեղային ցուլերի, ինչպես և մետիսների համար տաք  
շենքեր հարկավոր չեն: Արտասահմանյան կուլտուրական, ցեղային  
ցուլերի համար այդպիսի շենքեր ունենալն անհրաժեշտ ե:

Նույնպիսի տաք շենքեր են հարկավոր նաև հորթերին պահելու  
համար՝ նրանց կյանքի առաջին ձմեռվա ընթացքում:

Անասունների հիվանդանոցները և ձմեռը ծնող կովերի շենքերը  
նույնպես պիտի տաք լինեն և առաստաղ ունենան:

Շինարարության ընթացքում միշտ պետք ե ինկատի ունենալ  
մի շարք կարևոր հանգամանքներ, այն ե՝ բոլոր այդ շենքերը պետք  
ե լինեն չոր, լուսավոր, ընդարձակ, կանոնավոր ողափոխությամբ և  
առանց միջանցիկ ջրամիների: Յեղջուրավոր անասունները, ինչպես  
և առհասարակ բոլոր անասունները, ամենից առաջ առապում են  
կեղտից, խոնավությունից և միջանցիկ ջրամիներից, վորոնք առաջ  
են բերում զանազան հիվանդություններ և մահացության շատ գեղեր:

## Մ Ե Բ Ե Ն Ա Յ Ա Յ Ո Ւ Մ

Մեքենայացման նպատակն ե հեշտացնել աշխատանքը, կրճատել  
աշխատող ձեռքերի թիվը, արագացնել աշխատանքների ընթացքը,  
կրճատել և նույնիսկ բոլորովին վերացնել կերամթերքների կորուստը

և կեղտոսվելը. քաղցրով անասունների շենքերի և կերապուհներին  
բի առողջապահական գրուկները:

Առաջին հերթին մեքենայացման պիտի յենթարկվի ջրամատակարարումը: Զրհոյններից և լճակներից ջուրը ջրմուղային աշտարակների մեջ անդամոխելու հավար տեղը և դնել մի վորակ շարժիչ մեքենա, վորով զգալի չափով կհեշտանա ու կեծանանա անասունների պահպանութունը:

Չեսք և գործածել քուսպ, ծղոտ կտրատող, արմատահատող մեքենաներ ու երկվատորներ: Սրանց միջոցով վերամշակելով կերը, տեղափոխելով նրան անասուններին բաշխելու համար, ինչպես և մեքենայացման միջոցով լցնելով և դատարկելով սիլոսը, մեծ չափով կխրհայվի բանվորական ուժը, կարագանա կերամթերքների պատրաստութունը, կպահասեն կորուստները, կերը չի աղտեղվի և այլն:

Կերի տեղափոխման մեքենայացումը, սարքավորումը պարզ ու հասարակ են և մասշեխի յեն կորտնտեսութեան լավ վարպետ—ատաղձագործին և դարբնին:

Կախովի, շարժական արկղները, վորոնք հարկավոր են կերը դեպի բաշխման տեղը տանելու համար, ինչպես նաև դոմի աղբը դուրս տանելու համար,—թեև մեծ ծախսեր են պահանջում, բայց շատ հեշտացնում են աշխատանքն ու կրճատում են բանվորական ուժը:

Միլոսային կառուցումների մեքենայացումը խոշոր չափով պահասեցնում և սիլոսի կերերի արժեքն ու արագացնում և սիլոսը պատրաստելու, լցնելու և դատարկելու աշխատանքները:

Կերի բերքահավաքման ու մթերման ընթացքում, անասուններին խնամելիս և կերակրելիս միշտ կլինեն այնպիսի դեպքեր, յերբ մեքենայացումը դործադրելի յե և ձեռնառու:

### ԱՆՈՍԱՆՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

Մտածանք բրիգադներ.—Աշխատանքի ճիշտ կազմակերպումը հիմնական պայմանն է կոլեկտիվ անասնաբուծութեան հաջողակ և իրական զարգացման համար: Աշխատանքի կանոնավոր կազմակերպման դեպքում յուրաքանչյուր կոլտնտեսական գիտի, թե ինչ, յերբ և վորտեղ պետք է անի ինքը: Գիտի իր պատասխանատուութեանը հանձնարարված գործի համար և այն, թե ինչ կստանա իր աշխատանքի համար:

Անասնաբուծութեան մեջ, ինչպես և կոլեկտիվ անտեսութեան բոլոր ճյուղերում, աշխատանքի կանոնավոր կազմակերպման կարևորագույն պայմանները հետևյալներն են.—դիմադրկութեան և կոլտնտեսականների վարձատրման մեջ հավասարանքի վերացումը, անասուններին խնամող կոլտնտեսականների հոտունութեան վերացումը և մըշտական բրիգադների կազմակերպումը:

Վորտնտեսային արտադրութեան մեջ բրիգադը հանդիսանում է աշխատանքի կազմակերպման կարևորագույն ողակը, ուստի նրա ամբարպետման վրա պետք է առանձնատեսակ ուշադրութեանը դարձնել: Ընդհանրապես բրիգադները պետք է ունենան կոլտնտեսականների մշտական կազմ: Հարկավոր է, վոր անասուններին խնամելու աշխատանքը նույն բրիգադը կատարել վորքան կարելի յե յերկար ժամանակվա ընթացքում, որինպ, մեկ տարուց վոչ պակաս: Աշխատողների հաճախակի փոփոխման շնորհիվ առաջ է գալիս դիմադրկութուն, քանի վոր անասունները ձեռքից ձեռք են անցնում և նրանց համար փաստորեն վոչ վոր պատասխանատու չե: Հաճախակի փոփոխումների դեպքում անկարելի յե ստեղծել փորձված, իրենց գործին հմուտ կազմեր: Անասուններին ուշադրութեամբ, խնամել, անասնաբուծութեան անհրաժեշտ վորակյալ աշխատողներ ունենալ կարելի յե միայն բրիգադի մշտական կազմի դեպքում: Անասունների սպասարկման բրիգադներ կազմակերպելիս հարկավոր է ընտրել ամենափորձված, տըվյալ աշխատանքով հետաքրքրվող կոլտնտեսականներ:

Բրիգադի մեծութունը, նրա կազմը կախված է նրանից, թե նա քանի՞ անասուն է խնամում և կոլտնտեսութեան վարչութունն արտադրանքի ինչ նորմաներ է վորոշել: Բրիգադը պետք է լիովին սպասարկել մի վորոք խումբ տնտեսուհիների, ուստի սպարանքային ֆերմաներում, վորտեղ սովորաբար հավաքվում են զանազան խմբակներէ անասուններ, հարկավոր է կազմակերպել առանձին, մասնագիտացված խմբակներ,—կովերին խնամող, հորթերին մեկուսացնող, մատղաշ անասուններին խնամող և այլն: Այն կոլտնտեսութուններում, վորտեղ համայնացած նարիբը փոքրաթիվ է, նպատակահարմար է կազմակերպել մի ընդհանուր բրիգադ, բայց վերջինս բաժանել հատուկ խմբակների և սրանցից ամեն մեկին և ամեն մի կոլտնտեսականի ամբարպետը վորոշ քանակութեամբ անասուններ:

Բրիգադը չպետք է լինի մեծաթիվ, վորպիսպի դեպիարութեանը: Վերահսկողութունն ու հաշվաքը հեշտանան: Բրիգադի սպասարկած անասունների թիվը մոտավորապէս հետևյալն է.—200 կով, 200 յեղ, 150 հորթ: Առաջին դեպքում բրիգադն աղատվում է կենդանիներին սպասարկելու անմիջական աշխատանքից, իսկ մյուս դեպքերում բրիգադների պարտականութունները կատարում և անասնապահը կամ հորթապահը (տղամարդ կամ կին): Հաշվաքը կատարելու համար յուրաքանչյուր բրիգադում ամենագրագետ կոլտնտեսականներից ընտրվում է հատուկ մարդ:

Բրիգադի կազմը վորոշվում է վոչ միայն անասունների քանակութեամբ, այլ և նրանց համար գոյութուն ունեցող շենքերով և նայած այն հանգամանքին, թե այդ շենքերը վերջապի են

հարմարեցված մեքենայացման համար: Սակայն իհարկե ընքի տարողութունը չի կարող հիմնական պայման լինել բրիգադի մեծութունը վորոշելու համար:

Յեթե անասունները անդալորվում են փոքր անասնանոցներում, առանձին, փոքր բրիգադներ չպետք և կազմակերպել, այլ ավելի լավ և բրիգադը բաժանել առանձին խմբակների, վորոնք և կկատարեն անասունների ամբողջ սպասարկումը, լիովին պատասխանատու լինելով կենդանիների պահպանության և շենքերի կարգ ու կանոնի համար:

Անհրաժեշտ և յուրաքանչյուր բրիգադի տալ արտադրական վորոշ առաջադրություն, վորտեղ պիտի մատանշվի վոչ վիայն անասունների քանակն ու կատարվիլիք աշխատանքը, այլ և ստացված արտադրանքի քանակն ու վորակը (կաթի քանակն, աճեցրած անասունների թիվը ու նրանց զիրությունը, կշիռը) և կերի ծախսը:

Ստացված արտադրական առաջադրությունը և նրա՝ աշխորերով գնահատումը անհրաժեշտ և բրիգադի ներսում հասցնել մինչև յուրաքանչյուր առանձին խմբակ, մինչև յուրաքանչյուր կոլտնտեսական: Անհրաժեշտ և ճշտությամբ բաժանել պարտականությունները: Բրիգադի յուրաքանչյուր առանձին անդամի, — անասնապահի, հորթապահի (տղամարդ կամ կին) և այլ աշխատողների պետք և ամբացնել վորոշ քանակությամբ անասուններ, վորոնց պրության համար ամեն մեկն անձնապես պատասխանատու չի: Յուրաքանչյուր կոլտնտեսական պետք և գիտենա իր անասուններին, իր պարտականությունները:

Անասուններին վորոշ կոլտնտեսականների պետք և ամբացնել այնպես, վոր կոլտնտեսականն իրեն ամբացված անասուններին օգտարկե լրիվ չափով: Հարկավոր և պարտապետ կերը, կերակրել անասուններին ու շենքերը պաշտը պահել: Կերը տեղափոխելու, ջուրը կրելու, աղը դուրս տանելու և գիշեր ժամանակ անասուններին հրահելու համար պետք և նշանակվին հատուկ կոլտնտեսականներ:

Առանձնահատուկ ուշադրություն պետք և դարձնել բրիգադիրների ընտրության, վորոնք պատասխանատու չեն բրիգադի ներսում աշխատանքը կազմակերպելու, կոլտնտեսականների ուժերը դասավորելու, նրանց միջև արտադրական առաջադրությունը բաշխելու և անասունները, ինվենտարն ու կովերը կոլտնտեսականների միջև բաշխելու համար: Ապրանքային ֆերմաներում բրիգադիրն անմիջականորեն յեթարկվում և ֆերմայի վարչին, իսկ կոլտնտեսություններում, վորտեղ ֆերմաներ չկան, վարչության այն անդամին, վորը վարդւմ և անասնաբուժությունը: Իսկ բրիգադի ներսում անասունների դրության ինվենտարի, արտադրանքի քանակի ու վորակի, կերի կանոնավոր օգտագործման համար անմիջականորեն պատասխանատուություն են կր-

ում կոլտնտեսականները, վորոնք սպասարկում են իրենց ամբացված անասուններին:

### ԳՈՐԾԱՎԱՐՁ ՅԵՎ ԱՐՁԱԴՐՈՒՅՅԻ ՆՈՐՄԱՆԵՐ

Ելայն չափով պիտի տարածվի լավագույն կոլտնտեսային անասնաբուժական մեթոդների փորձի հիման վրա բրիգադում առաջատու կոլտնտեսականների օգտաբերումը՝ անասունների վորոշ խմբակներին, այնպես, վոր անասնաբուժական բրիգադի յեվ օրա մեջ մեծոք կոլտնտեսականների առաջատու վարձարժի՝ ըստ նրանց առաջատու արտադրանքի (կրկն կաթի քանակը, մազառ անասունների անումն ու կոլտնտեսականների ֆանակը յեվ այլն):

(ՀԿ(Գ)Կ Կենցկումի 1932 թվականի փետրվարի 4-ի վորոշումից՝ կոլտնտեսությունների կազմակերպչական-օգնական ամբաստանողներին հերթական միջոցառումների մասին):

Գործավարձը, կոլտնտեսականների աշխատանքի ճիշտ հաշվառն ու գնահատումն աշխորերով, յեկամուտներին բաշխումն ըստ յուրաքանչյուր կոլտնտեսականի աշխատանքի քանակի ու վորակի, — ահա կոլտնտեսային աշխատանքի ճիշտ կազմակերպման հիմնական պայմանները: Գործավարձն արդեն օտուգված և կոլտնտեսային միլիոնավոր մասաների կողմից: Նա լայն գործադրություն և գտել կոլտնտեսայինների դաշտագործական աշխատանքներում: Նա պետք և կազմակերպի և լայն չափով կիրառվի նաև անասնաբուժության մեջ:

ՀԿ(Բ)Կ Կենտրոնական Կոմիտեն կոլտնտեսություններին կազմակերպչական-տնտեսական ամբաստանողներին հերթական միջոցառումներին մասին, իր 1932 թվի փետրվարի 4-ի վորոշման մեջ ասանձնապես մատնանշում և, վոր—

«Գործավարձն արմատավորելու, հատկապես բարելավելու յեվ յուրաքանչյուր կոլտնտեսականի առաջատու և մեղ ֆանակի յեվ վորակի գնահատելու վերաբերյալ խորհրդների 6-րդ համադրումարի վորոշումների գործնական իրագործումը օտուգնալու և մեղ իրիվ կարավորագույն խնդիր»:

Գործավարձի նշանակութունը հսկայական և նա հանդիսանում և լավագույն ձևը՝ յուրաքանչյուր կոլտնտեսականի շահագրգռվածությունը (իր աշխատանքի արդյունքներով) ուժեղացնելու համար: Գործավարձը բարձրացնում և աշխատանքի արտադրողականությունը, կրճատում և այս կամ այն առաջադրությունը կատարելու համար պահանջվող բանվորական ուժը, ապահովում և արտադրանքի վորակն ու ավելացումը: Գործավարձի միջոցով կանոնավոր և խնայողաբար են օգտագործվում նյութական միջոցները (կեր, ինվենտար, սարքավորանք և այլն), Այս բոլորը միասին, վերցրած՝ բարձրացնում և թե ամբողջ կոլտնտեսության և թե յուրաքանչյուր առանձին կոլտնտեսականի յեկամուտը:

Գոյտնտեսութիւններէ փորձը ցույց արկեց, վոր լավագոյնը և ամենահասկանալին հանդիսանում է խմբակային գործավարձը, վորով յորաքանչյոր կոլտնտեսականի աշխատանքի գնահատումը աշխուրհոր՝ կատարվում է հենց խմբակում, հաշիւի անելով նրանց կատարած աշխատանքի քանակն ու վորակը: Ով շատ և լավ է աշխատել, չատ աշխուր և գրվում նրան, ով աշխատանքի չի յելել, չի կատարել իր նորման, վատ է կատարել աշխատանքը,—քիչ աշխուր կատանա:

Աշխատանքի գործավարձային գնահատում կատարելիս, անհրաժեշտ է ըզլոր աշխատանքները խմբակների բաժանել ըստ նրանց դժվարութեան և պահանջած վորակավորման: Պետք է վորոշել այն քանակական ու վորակային ցուցանիշները, վորոնց համաձայն պիտի հաշիւի առնվի ու գնահատվի յուրաքանչյուր կոլտնտեսականի աշխատանքը: Աշխատանքներն ըստ դժվարութեան և վորակավորման խմբակների բաժանելիս, պետք է ղեկավարվել հոլտնտեսներունի սահմանած բաշխման ձևով: Բոլոր աշխատանքները, նոյաժ նրանց կատարման դժվարութեան և աշխատողից պահանջված վորակավորման, կորանտիկներունը բաշխել և հինգ խմբակների, հետևյալ գնահատումներով.—

- 1-ին խմբակ,—բերելով աշխատանքներ, վորոնք որական գնահատվում են 50 հարյուրերորդական աշխուր:
- 2-րդ խմբակ,—միջակ աշխատանքներ, 75 հարյուրերորդական աշխուր:
- 3-րդ խմբակ, ծանր հատարակ, աշխատանքներ,—1 աշխուր (որակական):
- 4-րդ խմբակ,—ծանր, հատուկ փորձառութեան պահանջող աշխատանքներ, որական 1,25 աշխուր:
- 5-րդ խմբակ,—վորակալ աշխատանքներ,—մեկ ու կէս աշխուր:

Մտադործական և մտակաթնագործական անասնաբուժութեան մեջ առաջին խմբակին են պատկանում պահապանները, բեռեր տեղափոխողներն՝ առանց բեռնելու ու դատարկելու. յերկրորդ խմբակին պատկանում են ջրկիրները, հովիվների ձեռքի տակ աշխատողները, անասնապահները, զրոսնող անասուններին հսկողները. յերրորդ խմբակին պատկանում են հաշիւառողները, անասնապահ-կթողները, հորթապահները, հովիվները, ծանր աշխատանք կատարող բանվորները (փոսեր և խրամատներ փորելը, սիլոս կորելը, բեռնելով և դատարկելով կանդերձ՝ բեռեր տեղափոխողները): Զորրորդ խմբակին պատկանում են բրդագործը, մինչև 200 զլուխ անասուն ունեցող ֆերմայի վարիչը, անասնաբուժական սանիտարները: Հինգերորդ խմբին պատկանում են չգարձված մասնագետները—անասնաբույժները, անասնաբուժակներ և 200 զլուխ ավելի անասուն ունեցող ֆերմաների վարիչները:

Քանակական ու վորակային ցուցանիշները, վորոնցով հաշիւին առնվում է գնահատվում են աշխատանքները, սահմանվում են այն որական բեռնվածութեան հիման վրա, վորը վորոշվում է սպասարկվող անասունների թվով: Նորմաների մշակումը պահանջում է առանձնահատուկ ուշադրութեան, քանի վոր այստեղ կարելի չէ ծայրայեղութեանների մեջ ընկնել: Այս բոլոր պայմանները հաշիւի շահանելու դեպքում կարող են սահմանվել ցածր նորմաներ, վորի հետևանքով կծախսվեն ավելորդ բանվորական ձեռքեր, կպահանջվեն մեծ քանակութեամբ աշխուրեր: Վերջին հաշիւով կատարվի այն հետևանքը, վոր կոլտնտեսութեանների յեկամուսները բաժանելիս աշխուրը ցածր կը վարձատրվի: Յերկրորդ ծայրայեղութեանը, դա բարձր, անիրագործելի նորմաների սահմանումն է: Այսպիսի նորմաներն ընդհանրապես կրնան կոլտնտեսականների շահագրգռվածութեանը, հետևապէս նաև աշխատանքի արտադրողականութեանը:

Նորմաները պետք է միանգամայն հասկանալի լինեն յուրաքանչյուր կոլտնտեսականի նրանց մշակմանը պետք է ներգրավել կոլտնտեսային լայն մասսաներին: Քննելով նորմաները խմբակների, բրդագործների ժողովներում և արտադրական խորհրդակցութեաններում: Կոլտնտեսականների այսպիսի մասնակցութեամբ կատարված քննութեանից հետո միայն նորմաները պիտի ներկայացվեն կոլտնտեսութեանի հաստատման: Այս կերպ սահմանված նորմաները պետք է ժամանակ առժամանակ ստուգվեն և հավասարվեն առաջագործ կոլտնտեսականների լավագոյն ցուցանիշներին:

Բեռնվածութեան որական նորմաներն ինքն ըստ ինքն չեն վճարում աշխատանքի կազմակերպման հարցը և չեն վորոշում աշխատանքի արդունքները: Գործավարձի հիմնական պայմանը հանդիսանում է կոլտնտեսականի կատարած աշխատանքի յուրաքանչյուր միավորի գնահատումն աշխուրով: Կոլտնտեսականի աշխատանքը պիտի գնահատվի միջ թե քս նրա սպասարկած անասունների բանակութեան, այլ քս արտադրանքի բանակի յիվ վորակի.—աճեցրած հորթերի քանակը, նրանց կշիւր վորոշ հասակում, աճեցվող, չաղացվող և այլ անասունների որական աճուցը կիրգրամներով, ծնու կովերին խնամելիս—ծնած կովերի տոկոսը, ծնված հորթերի թիվը, անասուններին ձմեռը պահելու դեպքում—նրանց գիրութեանը և այլն:

Այս հիմնական կանոնի պահպանումը գործավարձի ճիշտ կազմակերպման անհրաժեշտ պայման է: Իրա համար պետք է սահմանվի բրդագործի և վորոշ խմբակին պահանջարկի տալու կարգը, վորտեղ պիտի ցույց արվի, թե ի՞նչ վորակի և ի՞նչ արտադրանք պետք է տա բրդագործը կամ խմբակն այս ինչ ժամանակվա ընթացքում: Պահպանողաբար անհրաժեշտ է ցույց տալ նաև գործավարձային գնահատումները:

հատուակն աշխարհորդ, մշակվող արտադրանքի միավորը: Արտադրանքի միավորի գնահատութունը կատարվում է յուրաքանչյուր աշխատանքի որակյան բեռնվածության հիմունքով, ինչպես նաև պլանով առաջադրված վորակային ցուցանիշների հիմունքով:

Որինչպես, Հորթապահ կնոջն առաջադրութունն է տրված պահել 30 հորթ մինչև 4 ամսական դառնալը, իսկ հորթի որակյան նոր կըշիռը մեկ կիլոգրամ է: Որակյան բեռնվածութունն նորման 30 հորթ: Հորթապահի աշխատանքը վերաբերում է յերբորդ լսմբակին, այսինքն, որակյան նորման կատարելու համար նրան պիտի տրվի մեկ աշխոր: Ներկա առաջադրութունը հորթապահ կինը պետք է տա  $0,5 \text{ կգ} \times 30 = 15$  կիլոգրամ աճ կենդանի կշռի վրա, վորի համար նրան տրվում է 1 աշխոր: Հետևապես, մեկ կիլոգրամ նոր աճը պիտի գնահատվի 100 : 15 = 6 հարյուրերորդական աշխոր:

Արտադրանքի միավորի գնահատման նորմաները պետք է սահմանվեն յուրաքանչյուր յեռամայակի համար առանձին և ամբողջ տարվա համար, կուտակութունի արտադրական պլանը կազմելիս: Յեթև նախիրը քիչ է ուսումնասիրված, հարկավոր է ստուգում կատարել և տվյալները ճշտել ամեն ամիս: Ստուգման արդյունքները պետք է քննության յեռնթարկվեն բրիգադի ժողովներում և արտադրական խորհրդակցութուններում:

Աշխատանքի կազմակերպման կարևոր հարցն է կուտակութունների շահագործութունի արմատավորումը՝ մեծ քանակությամբ և լավ վորակի արտադրանք տալու համար: Աշխատանքի գնահատումը միայն այն ժամանակ ճիշտ կլինի, յերբ նա վոչ միայն կապահովի առաջադրված պլանի կատարումը, այլև կղղն կուտակութուններին դերահատարել այդ պլանը: Անասնաբուժության արդյունավետության համար մղվող պայքարում, զլանային առաջադրութունների կատարման ու գերակատարման համար մղվող պայքարում, կուտակութունների նյութական շահագործութունն ապահովելու համար, պետք է կիրառել յարախուսման մեթոդները, լրացուցիչ աշխորեր տալով առաջադրված նորմաների գերակատարման համար:

Յերկրային կազմակերպութունների վորոշումների համաձայն, սահմանված պլանից ավելի ստացված արտադրանքի արժեքը (պետական գներով) բրիգադներին պետք է տրվի կուտակութունների մեջ բաժանելու համար, ամեն մեկի վատակած աշխորերի համաձայն: Այս միջոցառումն ամբողջովին պետք է կիրառվի կուտակութուններում:

Արտադրանքի աճը և յնայողութունը բրիգադին հանձնելիս, պետք է դուրս գալ կուտակության մեջ սահմանված մասերը՝ սոցիալիստական կուտակման, անբաժանելի, պարգևատրման, կուլտուր-

կենցաղային, սովորելու ուղարկված կուտակութունների ֆանդերին և կազմակերպչական ծախքերը ծածկելու համար: Կուտակութուններում այս հատկացումները սովորաբար կազմում են 20-ից մինչև 30 տոկոս: Հետևապես ամբողջ դուրս աճը պետք է ամբողջովին բաժանվեն բրիգադում, վորն ստացել է այդպիսի յնայողութուն և աճ:

Որինչպես, Բրիգադին առաջադրութունն է տրված ստանալ կենդանի կշռի 100 ցենտներ աճ: Լավ աշխատանքի շնորհիվ, առանց կերն ու նյութիդեղ գերածախսելու, բրիգադն ստացել է 120 ցենտներ, այսինքն պլանի հանդեպ 20 ցենտներ ավելի, վորը գնահատվում է 500 ուսուրի: Կուտակության արտադրական պլանից հետևում է, վոր սոցիալատկման ֆոնդին և կազմակերպչական ծախքերի համար հատկացվում է կուտակության ընդհանուր յեկամտի 27 տոկոսը: Հետևավազն բրիգադին պիտի հանձնվի 500—135 (500 . 0,27) = 365 ուսուրի, վորը և բաժանվում է կուտակութունների միջև, ըստ նրանց վատակած աշխորերի: Յերկրորդ որինակ, բրիգադին առաջադրութունն է տրված 100 կովերից ստանալ 90 հորթ: Գործին ուղարկը վերաբերվելու շնորհիվ ստացված է 95 հորթ, այսինքն պլանից 5 հորթով ավելի: Ավելորդը գնահատվում է 100 ուսուրի: Այս դեպքում բրիգադին տրվում է 100—27 = 73 ուսուրի:

Յեթև բրիգադը կամ առանձին կուտակութունը յնայողութունն են արել կերի ծախսման, նյութերի և յնվենտարի ոգտազործման մեջ, ապա այդ յնայողութունն ևս պիտի գնահատվի ուսուրիներով և դուրս գալով հատկացումները, հանձնվի բրիգադին կամ առանձին կուտակութունին, վորը յնայողութունն է արել:

Այսպիսով կուտակութուններին տալով յնայած միջոցները և արտադրանքի աճը, մյուս կողմից հարկավոր է բրիգադից կամ կուտակութուններից գանձել պլանից պակաս ստացված արտադրանքի կամ կերի, նյութերի ու յնվենտարի գերածախսի արժեքը, յեթև այդ պակասն ու գերածախսը առաջացել են անասուններին յնամոզների մեղքով (վատ յնամք, կերի անփուլթ պահպանութուն, վատուում և այլն):

### ՊԱՐԳԵՎԱՏՐՈՒՄ

Բացի վերև ասածից, հարկալոր է լայն չափով կիրառել նաև պարգևատրումը: Յուրաքանչյուր կուտակության մեջ պետք է ստեղծել պարգևատրման ֆոնդ—ընդհանուր յեկամտի 3 տոկոսը: Պարգևատրումը պետք է կատարվի հետևյալ հիմունքան ցուցիչների հիմունքով:

- ա) Արտադրական առաջադրութունների գերակատարում:
- բ) Հորթերի անկման տոկոսի իջեցում:

- գ) Հոգեւոր ամուլութեան տոյնի բնեցում:
- զ) Սահմանված կենդանի կշիռ իր ժամանակին:
- է) Կերի խնայողական ծախս:
- զ) Բյուտաբարութեան և արտադրութեան սացիոնալիզացիա:
- ը) Ուրիշ կոլտնտեսութեանների լավագույն աշխատանքի փորձի ոգտադրում:

Բոլոր վերոհիշյալ ցուցանիշների արդյունքները պետք է պարզվեն ամեն ամիս և լավագույն կոլտնտեսականները—հարվածայինները պետք է պարգևատրվեն:

**ՍՈՍՄԲՅՈՒՅ ԵՆՎ ՀԱՐՎԱԾԱՅՆՈՒԹՅՈՒՆ**

Անասնաբուժական խնդրի լուծումը հսկայական կարևորութեան ունի: Այդ խնդրի լուծման համար պետք է մտքի լիզացիայի յինթարկել կոլտնտեսային լայն մասսաների ամբողջ ուշադրութեանը: Աշխատանքային վերելքի, ախտի վտեթյան բարձրացման, նախաձեռնութեան հղոր ազդակը աշխատանքի սոցիալիստական մեթոդներն են—սոցմըրցումն ու հարվածայնութեանը:

Կոլտնտեսականների լայն մասսաներին ներգրծվելով զեպի սոցիալիստական մրցումն և հարվածայնութեանն, անխնայորեն մերկացնելով ծուլերին, աշխատանքը լքողներին ու կորդիչներին, բարձրացնելով կոլտնտեսականների ախտի վտեթյունը կոլտնտեսութեանների կազմակերպչական տնտեսական ամբապնդման ուղղութեամբ պայքարելու համար,—պետք է ստեղծել աշխատանքի բարձր վորակ, վերացնել կորուստներն անասնաբուժական տնտեսութեան մեջ, կանոնավոր խնամել անասուններին, մաքուր պահել անասնաբակերը և ուրեմն, աշխատանքներին զերծ պահել հիվանդութեաններից ու համաճարակներից:

Սոցմըրցումն ու հարվածայնութեանը պիտի գաունան աշխատանքի մշտական գործող մեթոդներ, Բրիգադիները, ֆերմաների վարիչները պետք է լինեն հարվածայնութեան ու սոցմըրցման խսկական կազմակերպիչները: Կոլտնտեսութեան մեջ հարվածայինը նույնպիսի պատվովոր տեղ պիտի գրավի, ինչպիսին նա իրավամբ գրավում է ֆաբրիկում ու գործարանում:

Սոցիալիստական մրցումը պիտի ծավալվի առանձին կոլտնտեսականների, խմբակների ու բրիգադների միջև՝ պլանները կատարելու և գերակատարելու, անասունների լավագույն սպասարկման ու խնամքի համար և այլն: Սոցմըրցման և հարվածայնութեան արդյունքները պետք է լայն չափով քննարկվեն բրիգադի ընդհանուր ժողովներում, լայնուհեն պիտի լուստբանվին կոլտնտեսային պատրիարքներում և ուսյունական մամուլում: Լավագույն կոլտնտեսական—հարվածայիններին, վորպես աշխատանքի սոցիալիստական մեթոդներ:

րի իսկական կազմակերպիչներին, անհրաժեշտ է առաջ բաշել խորակների ղեկավարներին, բրիգադիներին, ֆերմաների վարիչներին պատանների համար, ուղարկել զաարնթացքներ և այլն:

Պլան-կարգադրերի կազմումը: Կոլտնտեսութեանների և աշխատանքային ֆերմաների տարեկան արտադրական պլանների հիման վրա պետք է կազմվեն ամսական պլան-կարգադրեր: Պլան-կարգադրերն անհրաժեշտ է կազմել այն հաշվով, վոր ամսվա սկզբին նա լայնորեն ջննարկվի բրիգադների ժողովներում և սրտադրական խորհրդակցութեաններում: Պլան-կարգադրերի քննարկման ժամանակ պետք է աշխատել, վոր կոլտնտեսականները հանդիպական պլաններ առաջարկեն:

Պլան-կարգադրում պետք է գրվի՝ բրիգադի անվանացուցակը, յուրաքանչյուր կոլտնտեսականի աշխատանքը, որսկան բեռնվածութեան նորման, արտադրանքի քանակը և նրա հանձնման ժամկետը, հասանելիք աշխտերի թիվը, արտադրանքի միավորի գնահատումը, լավ աշխատանքի ղեկավարում հովելումների և վատ աշխատանքի ղեկավարում կրճատումների գումարը, կերի ծախքը:

Պլան-կարգադրը պետք է փակցվի բոլոր անասնաբակերում և պետք է լավ հայտնի լինի յուրաքանչյուր կոլտնտեսականին:



Отв. редактор  
В. К. Цовьян  
Техн. редактор  
Г. М. Маркарьян

№ 2899  
ԲԵ—59

Տվ. և набор 23 XI—1932 г.  
Տվ. և печать 16 XII—1932 г.  
Об'ем 3 листа  
Тираж 2000 экз.

Уполномочен № 1933 Гез.-вл. тип. ССРМО. Стагформат А5-146x210 Завказ № 6029  
Гор. Росток на Дону.

Անանարուձության նշանակութիւնը . . . . .	1
Մատու անանարուձութիւնը Հյուս. կովկասում . . . . .	5
Մատու անանարուձության զարգացման ուղիները . . . . .	8
Մագործական և մա-կաթնագործական տնտեսութիւն . . . . .	9
Կրտստեսութիւնի ապրանքային մագործական և մա-կաթ- նագործական ֆերմաների կազմակերպումը . . . . .	10
Նախքի կազմակերպումը . . . . .	11
Տեղական մատու-լծկան անասունների ցեղերը . . . . .	15
Կալմիկական անասուններ . . . . .	16
Մատու և մա-կաթնատու անասունների արտասահմանյան ցեղերը . . . . .	24
Ինչպես բարելավել անասունների տեղական ցեղը . . . . .	30
Ի՞նչ անել անասուններին ավելի բով բուծելու համար . . . . .	35
Տեղի ընտրութիւն . . . . .	35
Ծուլի ողտագործումը և զուգավորման ձևերը . . . . .	36
Արհեստական բեղմնավորում . . . . .	39
Արդասավորութիւն, հղիութիւն և նրա նշանները . . . . .	41
Հորթեծնութիւնի ժամանակը . . . . .	44
Կերի բազա . . . . .	45
Կերը . . . . .	49
Անասունների կերակրումը . . . . .	55
Անասուններին ջրելը . . . . .	59
Տեղի ընտրութիւնը . . . . .	60
Ի՞նչը պետք է հաշվի առնել . . . . .	61
Սիրտային շինարարութիւն . . . . .	63
Շենքեր անասունների համար . . . . .	65
Շինարարական նյութեր . . . . .	67
Մեքենայացում . . . . .	69
Աշխատանքի կազմակերպումը . . . . .	70
Գործավարձ և արտադրոյթի նորմաները . . . . .	73
Պարգևատրում . . . . .	77
Սեղմըրում և հարվատայնութիւն . . . . .	78



ԳԻՆԸ 75 ԿՈՊ.  
цена 75 коп.

1583

21.522



На армянском языке

Д. В. Романенко

Как разводить и улучшить мясной  
скот в Северо-Кавказском крае.

ИЗД-ВО „СЕВЕРНЫЙ КАВКАЗ“

ՆՐԱԳՈՒԼՅՈՒՆԸ

ՔՈՍՏՈՎ-ԴՈՆ, ՄՈՍԿՈՎԱԿԱՅԻ ՓՈՂ. 53

ԳՐԱԿԱՆՏՐՈՆ (ԿԵՆԿՐՈՅԵՆԵՐ)